# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 3(17)•1998



# ՀԱՆՈՒՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ԱՌԱՋԸՆԹԱՑԻ

## ВО ИМЯ БЕЗОПАСНОСТИ, ДЕМОКРАТИИ, ПРОГРЕССА

## IN FAVOR OF SECURITY, DEMOCRACY AND PROGRESS



Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը
Սարդարապատի հերոսամարտի 80-ամյա հոբելյանին նվիրված հանդիսավոր
արարողության ժամանակ. Սարդարապատ, 1998 թ. մայիսի 28

Руководители Республики Армения на торжественной церемонии,
посвященной 80-летнему юбилею Сардарапатского сражения.
Сардарапат, 28 мая 1998 г.

The leadership of the Republic of Armenia at the official ceremony
dedicated to the 80-th anniversary of the Sardarapat Battle. 28 March, 1998

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից
տարին չորս անգամ

3(17)•1998

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ**

**Շիրխանյան Վ. Գ.**
(նախագահ)
**Քոթանջյան Հ. Ս.**
(գլխավոր խմբագիր)
**Աբրահամյան Մ. Ա.**
**Գասպարյան Վ. Ս.**
**Գևորգյան Է. Ս.**
**Գորդիենկո Ի. Վ.**
**Զինևիչ Ա. Վ.**
**Խորխորունի Վ. Վ.**
**Կարապետյան Լ. Ս.**
**Համբարձումյան Գ. Ս.**
**Հայրապետյան Վ. Ա.**
**Հարությունյան Ա. Թ.**
**Հարությունյան Գ. Բ.**
**Հարությունյան Մ. Հ.**
**Հարությունյան Վ. Վ.**
**Մարտիրոսով Լ. Ա.**
**Միխտոնյան Է. Գ.**
**Պայյան Հ. Ս.**
**Պետրոսյան Ա. Ա.**
**Պետրոսյան Գ. Լ.**
**Սարգսյան Ա. Գ.**
**Սարգսյան Ա. Ե.**
**Սարգսյան Մ. Ս.**
**Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
**Տեր-Թադևոսով Ա. Ի.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

*Վ. Ա. Մուրադյան,* Գարեգին Նժդեհի պանգեպուրյան մեծագործությունները ........................ 5

*Ա. Ա. Տերյան,* Հնագույն պատմական վկայություններ հայ ռազմիկի մասին ........................ 15

**ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ն. Ի. Տուրկո, Ա. Ա. Մոդեստով,* Ժամանակակից աշխարհաքաղաքականության մեխանիզմները ........ 27

**ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ**

*Ն. Գ. Եղոյան, Գ. Ա. Պողոսյան,* Զինված ուժերում ֆիզիկական պատրաստության առանձնահատկությունները ........................ 47

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Ռ. Թ. Բախչյան,* Զինվորական կոլեկտիվներում գժտությունների ծագման պատճառները և կարգավորման ուղիները ........................ 57

**ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Ռ. Ա. Այդինյան,* Պայթուցիկ նյութերը և սահմանափակումները դրանց վերաբերող տեղեկությունների հրապարակումներում ........................ 68

**ՌԱԶՄԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ**

*Է. Հ. Մանուչարյան,* Ճանապարհատրանսպորտային պատահարները հայկական բանակում և դրանց կանխման ուղիները ........................ 72

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Վ. Խ. Բաղդասարյան,* Համառի բառարան ....... 78

**«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)**
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**N 3 (17), 1998**
Издается 4 раза в год

**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ**

*В. Г. Ширханян* (председатель); *Г. С. Котанджян* (гл. редактор);
*М. А. Абрамян; В. А. Айрапетян; Г. С. Амбарцумян; А. Т. Арутюнян;
В. В. Арутюнян; Г. Б. Арутюнян; М. А. Арутюнян; В. С. Гаспарян; Э. С. Геворгян;
И. В. Гордиенко; А. В. Зиневич; Л. С. Карапетян; Л. А. Мартиросов; Э. Г. Милитонян;
О. С. Палян; А. А. Петросян; Г. Л. Петросян; А. Г. Саркисян; А. Е. Саркисян; М. С. Саркисян;
Н. Г. Тер-Григорьянц; А. И. Тер-Татевосов; В. В. Хорхоруни.*

**НАУЧНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ И РЕДАКТИРОВАНИЕ**

генерал-лейтенант *М. А. Абрамян;* подполковник, д. мед. н., профессор *Б. Н. Арутюнян;*
генерал-лейтенант *В. В. Арутюнян;* лейтенант, к. филос. н., доцент *С. Г. Арутюнян;*
к. филос. н., доцент *В. Х. Багдасарян;* подполковник, д. ист. н., профессор *Б. П. Балаян;*
полковник, д. полит. наук, академик Российской Академии военных наук *Г. С. Котанджян;*
генерал-майор *Л. А. Мартиросов;* генерал-майор *С. С. Мартиросян;*
гвардии подполковник в отставке, д. ист. н., засл. деят. науки РА *В. А. Мурадян;*
подполковник, д. тех. н., академик Российской Академии военных наук *А. Е. Саркисян;*
генерал-лейтенант *Н. Г. Тер-Григорьянц.*

## СОДЕРЖАНИЕ

**ВОЕННАЯ ИСТОРИЯ**

*В. А. Мурадян.* Зангезурская эпопея Гарегина Нжде . . . . . . . . . . . . . . . 5 (21)*
*А. А. Терьян.* Древнейшие исторические свидетельства об армянских воинах . . . . . . . . . . 15 (22)

**ВОЕННАЯ ПОЛИТИКА**

*Н. И. Турко, С. А. Модестов.* Механизмы современной геополитики . . . 27 (37)

**БОЕВАЯ ПОДГОТОВКА**

*Н. Г. Егоян, Г. А. Погосян.* Особенности физической подготовки в вооруженных силах . . . . . . . . . . 47 (55)

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

*Р. Т. Бахшян.* Причины раздоров в воинских коллективах и пути их устранения . . . . . . . . . . 57 (64)

**ВОЕННАЯ ИНФОРМАТИКА**

*Р. А. Айдинян.* Взрывчатые вещества и ограничения на публикацию относящихся к ним сведений . . . . . . . . . . 68 (70)

**ВОЕННЫЙ ТРАНСПОРТ**

*Э. А. Манучарян.* Дорожно-транспортные происшествия в армянской армии и пути их предупреждения . . . . . . . . . . 72 (76)

**ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*В. Х. Багдасарян.* Словарь номера . . . . . . . . . . 78

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## «HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

MILITARY-SCIENTIFIC QUARTERLY
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA
**N 3 (17), 1998**



EDITORIAL BOARD

*V. G. Shirkhanian* (Chairman), *H. S. Kotanjian* (Editor-in-Chief),
*M. A. Abrahamian, V. S. Gasparian, E. S. Gevorgian, I. V. Gordienko, V. A. Hairapetian, G. S. Hambartsumian, A. T. Haroutunian, G. B. Haroutunian, M. H. Haroutunian, V. V. Haroutunian, L. S. Karapetian, V. V. Khorkhoruny, E. G. Militonian, L. A. Martirossov, H. S. Palian; A. A. Petrossian, G. L. Petrossian, A. E. Sarkissian, A. G. Sarkissian, M. S. Sarkissian, N. G. Ter-Grigoriants, A. I. Ter-Tatevossov, A. V. Zinevich.*

SCIENTIFIC CONSULTING AND EDITTING

*M. A. Abrahamian,* Major General; *V. Kh. Baghdassarian,* Ass.-Prof., Ph. D. (Philosophy); *B. P. Balayan,* Lieutenant Colonel, Prof., Dr. of Hist. Sc.; *B. N. Haroutunian,* Lieutenant Colonel, Prof., Dr. of Medicine; *S. H. Haroutunian,* Lieutenant, Ass.-Prof., Ph. D. (Philosophy); *V. V. Haroutunian,* Lieutenant General; *H. S. Kotanjian,* Colonel, Dr. of Polit. Sc., Academician of Russian Academy of Military Sciences; *S. S. Martirossian,* Major General; *L. A. Martirossov,* Major General; *V. A. Mouradian,* Lieutenant Colonel (Ret.) of Guards, Dr. of Hist. Sc., Honorary Scientist of RA; *A. E. Sarkissian,* Lieutenant Colonel, Dr. of Tech. Sc., Academician of Russian Academy of Military Sciences; *N. G. Ter-Grigoriants,* Lieutenant General.


# CONTENT

### MILITARY HISTORY


*V. A. Mouradian.* Zangezourian epopee of Garegin Nzhdeh . . . . . . . . . . . . 5 (24)*
*A. A. Teryan.* The most ancient historical evidences about Armenian warriors . 15 (25)


### MILITARY POLICY


*N. I. Turko, S. A. Modestov.* Mechanisms of the modern Geo-policy . . . . . 27


### COMBAT TRAINING


*N. G. Eghoyan, G. A. Poghosyan.* Peculiarities of physical training in Armed Forces . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 47 (56)


### MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION


*R. T. Bakhshian.* The reasons of emerging conflicts in military organizations and possible ways to eliminate them . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 57 (66)


### MILITARY INFORMATION


*R. A. Aidinian.* Explosive substances and restrictions on the publication of the related information . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 68 (71)


### MILITARY TRANSPORT


*E. A. Manucharian.* Traffic accidents in Armenian army and ways of their prevention . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 72 (77)


### MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY


*V. Kh. Bagdassarian.* Volume dictionary . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . . 78


* Numbers in brackets mean page of text in English.

## Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու ինտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

## К сведению авторов и читателей

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

## For the information of the authors and readers

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and should not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Manuscripts are not returned.

Please explain acronyms.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԶԱՆԳԵԶՈՒՐՅԱՆ ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Վ. Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ, գվարդիայի պաշտոնաթող փոխգնդապետ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ*

Հայ ժողովրդի նորագույն պատմության մեջ Գարեգին Նժդեհը ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչներից մեկն է: Սակայն խորհրդային շրջանի հայկական պատմագիտության կողմից նա չի գնահատվել օբյեկտիվորեն, ըստ արժանվույն: Դեռ ավելին. նա բնութագրվել է որպես ժողովրդի թշնամի, հայտնի բուրժուական ազգամոլ: Եվ ոչ ոք չէր համարձակվում գրել այն մասին, որ Նժդեհը հայ ժողովրդին մատուցել է մեծ ծառայություններ:

Իրավիճակը փոխվեց, երբ թափ ընտացավ ղարաբաղյան շարժումը և մամուլում սկսեցին հրապարակվել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությանը նվիրված նյութեր: Ինձ՝ որպես ծնունդով արցախցու, միշտ էլ հուզել է այն հարցը, թե ինչպես է Զանգեզուրը, որին 1918—1921 թթ. նույնպես սպառնում էր թուրքական զավթիչների և մուսավաթական հրոսակախմբերի կողմից գրավման վտանգը, կարողացավ խուսափել այդ ճակատագրից: Ես բազմիցս հանդես եմ եկել հանրապետական մամուլի էջերում՝ ձգտելով փաստագրական նյութերի վրա հենվելով պատասխանելու այս հարցին[1]: Ընդ որում սպառիչ պատասխան տալու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել ՊԱԿ-ի քննչական մարմիններում Նժդեհի հարցաքըննություններին վերաբերող նյութերը: ՀՀ ՆԳ և ԱԱ նախարարության ղեկավարությունը բավարարեց այդ հարցին առնչվող արխիվային նյութերի հետ ծանոթանալու իմ խնդրանքը:

Հայաստանի նախկին ՊԱԿ-ի արխիվում կա կարճված գործերի ֆոնդ, որում պահվում է նաև Գարեգին Եղիշի Տեր-Հարությունյանի (Նժդեհ) քառահատոր քրեական գործը[2]: Այս հատորներում ընդգրկված են ինչպես 1944 թ. հոկտեմբերից մինչև 1948 թ. ապրիլ ժամանակահատվածում Նժդեհի հարցաքննությունների արձանագրությունները, այնպես էլ մեծ թվով այլ փաստաթղթեր, որոնցից հատկապես հիշարժան են իր իսկ ձեռքով գրված դիմումը և տարբեր պետական, վարչական ու քննչական մարմիններին ուղղված նամակները:

Գարեգին Նժդեհի անձնավորությունը, նրա կյանքն իր բոլոր ոլորաններով հանդերձ հետազոտության համար բարդ ու բազմապլան թեմա են: Սույն հոդվածում մեր հետազոտության առարկա կլինեն Գարեգին Նժդեհի զանգեզուրյան մեծագործությունները:

Բայց նախքան բուն հարցին անդրադառնալը համառոտակի նկարագրենք, թե ինչպես Նժդեհը ներգրավվեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ:

Նախկին Նախիջևանի գավառի Կըզնուտ հայկական գյուղի քահանայի որդի Գարեգին Տեր-Հարությունյանը դեռևս Թիֆլիսում միջնակարգ ուսումնական հաստատությունում սովորելու տարիներին անդամագրվեց Դաշնակցություն կուսակցությանը, որն իրեն անվանում էր հեղափոխական կուսակցություն, և նրա անդամները հպարտ էին, որ հեղափոխական շարժման մասնակիցներ են

[1] Տես, օրինակ, «Голос Армении», 11 и 13 февраля 1992 г.

[2] Տես ՀՀ ՆԳ և ԱԱ նախարարության արխիվ, կարճված գործերի ֆոնդ, քրեական գործ 11278 (այսուհետև՝ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, ապա՝ համապատասխան հատորի և թերթի նշումը):

ու ինքնակալության տապալման կողմնակիցներ: Գարեգինն ինքն էլ հպարտանում էր հասարակության մեջ իր գրաված դիրքով և որպես հեղափոխական կեղծանուն ընտրեց «Նժդեհ» բառը, որ նշանակում է օտար երկիր փող աշխատելու գընացած մարդ, օտարական, պանդուխտ: Սակայն երիտասարդ Գարեգինն իր խռովահույզ կյանքում, որն օտար աշխատ-



Սպարապետ Գ. Նժդեհ
Спарапет Г. Нжде
Sparapet G. Nzhdeh

հում թափառումների մի շարան էր, հետամուտ եղավ ոչ թե փող աշխատելու, իր համար հանգիստ ու բարեկեցիկ կյանք ապահովելու, այլ չարի ու բռնության դեմ մաքառելու, հարազատ ժողովրդի հարըստահարիչների դեմ, նրա ազատության ու անկախության համար պայքարի ուղիներ գտնելու: Ատելությունը թուրք զավթիչների նկատմամբ այնքան էր համակել Նժդեհի ողջ էությունը, որ նա 1904 թ. թողեց Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի երկրորդ կուրսը և Դաշնակցության հանձնարարությամբ, որպես նրա քարոզիչ, մեկնեց իրանաթուրքական սահմանի շրջանում գտնվող հայաբնակ գյուղերը՝ Թուրքիայի դեմ զինված պայքար կազմակերպելու համար: Եվ այդ օրվանից նրա կյանքը սերտորեն կապվեց թուրքական լծից հարազատ ժողովրդի ազատագրման գաղափարական ու զինված պայքարի հետ: 1906 թ. Նժդեհը մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարների միջնորդությամբ Դմիտրի Նիկոլով անունով ընդունվեց Սոֆիայի սպայական դպրոցը, որն ավարտեց 1-ին կարգի վկայականով: 1912 թ. հայ կամավորներից կազմված վաշտով Անդրանիկի հետ մասնակցեց Բալկանյան պատերազմին: Թուրքիայի դեմ մղված պայքարում Նժդեհը կոփվեց դարձավ քաջ զինվոր ու հմուտ զորապետ, շնորհալի հրապարակախոս և իմաստուն գաղափարախոս, մինչև ուղն ու ծուծը նվիրյալ հայրենասեր, հայության ազգային-ազատագրական պայքարի ականավոր գործիչ: Նժդեհը մասնակցեց 1918 թ. Ղարաքիլիսայի ճակատամարտին: Բայց Զանգեզուրն էր, որ դարձավ այն դարբնոցը, որտեղ նա կռվեց ու կոփվեց որպես անհատականություն՝ դաշնակցական բանակի կապիտանից հասնելով գեներալի աստիճանի:

Հայտնի է, որ զանգեզուրյան մեծագործությունները տևեցին 1919 թ. ամառվանից մինչև 1921 թ. ամառ: Այդ ժամանակաշրջանը կարելի է բաժանել երկու փուլի՝ մինչև 1920 թ. ամառը, երբ Նժդեհը ղեկավարում էր Զանգեզուրի զինված պաշտպանությունը թուրք փաշաների և Ադրբեջանի մուսավաթական հրոսակախմբերի ասպատակություններից, և 1920 թ. ամառվանից հետո, երբ Նժդեհը Զանգեզուրը պաշտպանում էր նաև Խորհրդային Ադրբեջանից, որի առաջնորդները թուրք գործակալների խորհրդով նպատակադրվել էին թուրքական կորքերի և 11-րդ Կարմիր բանակի ստորաբաժանումների օգնությամբ Ադրբեջանին բռնակցել ոչ միայն Արցախը, այլև Զանգեզուրը:

Ինչպես հայտնի է, 1918 թ. ամռանը Անդրկովկասի նորակազմ պետությունները ներքաշված էին սահմանային վեճերի մեջ, Զանգեզուրի և Ղարաբաղի

հարցը մնում էր առկախ: Հայաստանի Հանրապետությունը զգուշանում էր Զանգեզուրը իր անբաժան մասը ճանաչելու իրավունքի հռչակումից, ուստի այն կառավարվում էր տեղական խորհուրդների կողմից: 1919 թ. մարտին զորավար Անդրանիկը, ենթարկվելով անգլիացիների հարկադրանքին, իր զորամասով թողեց Զանգեզուրը՝ այն հանձնելով ՀՀ ներկայացուցչին: Նույն ժամանակաշրջանում Ադրբեջանը նկատելիորեն աշխուժացրեց այդ շրջանի նըկատմամբ իր հավակնությունները: Գերակշռող ուժերով առաջանալով Ղափանի ուղղությամբ՝ թշնամին գրավեց Ագարակ, Ուժանիս, Մողես և Ղարաբաբա գյուղերը, իսկ Նախիջևանի կողմից ներխուժած թուրքական ուժերը՝ Նորս, Գյումրի, Գժաձոր և Մազրա գյուղերը՝ ընդհուպ մոտենալով Զանգեզուրի սահմաններին: Թուրքերը որոշել էին «ոչընչացնել Գողթանը և կապվել Գեղվաձորի հետ... Սովը, ռազմամթերքի և արտաքին աշխարհի հետ հաղորդակցության չգոյությունը դրել են մեզ անել կացության մեջ»[3], գրում էր Գողթանի կառավարիչ Ա. Մելիք-Մուսյանը Երևանի կառավարությանն ուղղված 1919 թ. օգոստոսի 18-ի իր գրության մեջ՝ ակնկալելով անհապաղ գործնական բազմակողմանի օգնություն Զանգեզուրին: Ահա այս պարագաներում Հայաստանի կառավարությունը Զանգեզուր գործուղեց փոխգնդապետ Նժդեհին, ընդ որում՝ միանգամայն ձեռնունայն:

1944 թ. խորհրդային բանտախցում գրած «Ինքնակենսագրության» մեջ Նըժդեհն ընդգծում էր, որ ձեռնամուխ է եղել ինքնապաշտպանության կազմակերպմանը «աշխարհից բացարձակապես կըտրված լեռնաշխարհում առանց բավարար հացի և ռազմամթերքի, առանց սպայական կադրերի և արտաքին որևէ օգնության, քաղաքականապես մենակ շրջագծաձև ճակատի վրա»[4]:

Ստանձնելով Կապան—Գենվազ շրջանների զինվորական ընդհանուր հրամանատարությունը՝ Նժդեհը անմիջապես ստեղծեց զինվորական շտաբ և ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով արձակեց մի քանի հրաման՝ ուղղված միացյալ ուժերին: Առաջին հրամանով նա պահանջեց առկա զենքի ու զինամթերքի խստիվ հաշվառում: Առանձնապես ուշագրավ է 3-րդ հրամանը: Այնտեղ մասնավորապես նըշվում էր. «Հիմք դնել ժողովրդական վաշտերի կազմակերպությանը», ժողովրդական միլիցիոն վաշտերի ստեղծմանը[5]:

Այս դժվարին ռազմաքաղաքական պայմաններում Նժդեհը միաժամանակ ձեռնամուխ եղավ Սյունիքի պետական կառուցվածքի ձևավորմանը:

1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցավ համազանգեզուրյան ժողով՝ շրջանի գյուղերի 100 պատգամավորների մասնակցությամբ, որտեղ որոշում ընդունվեց «Զանգեզուրը հայտարարել ժամանակավոր ինքնավար, մտցնելով հանրապետական իրավակարգ, մնալով անկախ մինչև քաղաքական հնարավորություն կունենա միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ: Ինքնավար Սյունիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները»[6]: Նժդեհը հռչակվեց սպարապետ:

Նոր կազմավորված հանրապետության համար խիստ կարևոր էին արտաքին հարաբերությունները: Հատկապես ուշադրություն էր դարձվում Պարսկաստանի հետ հարաբերություններին, որոնք դիտվում էին որպես միանգամայն բարեկամական, և պատրաստակամություն էր հայտնվում այնտեղ ունենալու իր ներկայացուցիչը: Հարկ է նշել, որ Նժդեհին այնտեղ մեծ ժողովրդականություն էր վայելում:

Ահա այս պարագաներում Տաթևի վանքում ապրիլի 27-ին տեղի ունեցավ երկրորդ համագումարը, որը որոշեց երկիրը հայտարարել Լեռնահայաստան և ստեղծել իր կառավարությունը՝ Լեռնա-

---

[3] Տես Վ. *Գևորգյան*, Լեռնահայաստանի մարտերը: Բուխարեստ, 1923, էջ 25:

[4] «Գ. Նժդեհ», հոդվածների ժողովածու: Ե., 1995, էջ 139:

[5] Տես Վ. *Գևորգյան*, նշ. աշխ., էջ 30:

[6] Նույն տեղում, էջ 126:

հայաստանի կառավարություն: Կառավարություն կազմելու համար վարչապետ ընտրվեց Նժդեհը, որին շնորհվեց զորավարի (գեներալ) աստիճան: Մայիսի 1-ին նորընտիր կառավարությունը հրապարակեց իր պաշտոնական հռչակագիրը, որում Լեռնահայաստանի պաշտպանունակությունը բարձրացնելու հետ մեկտեղ կարևորվում էին հարևան երկրներից պարեն և մթերք ներմուծելու, ինչպես նաև սեփական փոխադրամիջոցներ ստեղծելու խնդիրները: Հռչակագրում ներկայացված էին Լեռնահայաստանի կյանքի տարբեր ոլորտների առաջնահերթ խնդիրները: Նժդեհը դառնում էր նախարարապետ և արտաքին գործերի ու ռազմական նախարար: Բացի դրանից, ներկայացվում էին ևս 7 նախարարներ:

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Նժդեհը հրաժարվեց համագործակցել նոր իշխանության հետ և նպատակադրվեց պահել Սյունիքը որպես ինքնուրույն պետություն: Գլխավոր պատճառն այն էր, որ Խորհրդային Ռուսաստանը բարեկամական կապերի մեջ էր քեմալական Թուրքիայի հետ, որը ցավթողական պատերազմ էր վարում Հայաստանի դեմ: Իսկ Նժդեհն իր ողջ գիտակցական կյանքը նվիրել էր բռնատիրական Թուրքիայի, հայերի ոչնչացմանն ուղղված նրա մարդատյաց քաղաքականության դեմ պինված պայքարին: Նա այլ կերպ էր գնահատում այդ արժեքները:

Այսպես՝ 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանն ուղղված իր 1921 թ. հունվարի 25-ի պատասխան նամակում նա գրել է. «Ձեր նամակով դուք խնդրում եք, որ մենք ձեզ հետ հաստատենք բարեկամական հարաբերություններ: Ես սկզբունքորեն հակառակ չեմ այդ առաջարկին, սակայն ներկա հանգամանքներում հաստատել անկեղծ բարեկամական հարաբերություններ համարում եմ միանգամայն աննպատակահարմար»: Եվ հիմնավորում էր իր այդ տեսակետը. «Քեմալական Թուրքիան, օգտվելով Խորհրդային Ռուսաստանի հետ հաստատված բարեկամական հարաբերություններից, համարձակվել է Հայաստանի դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծել: Դրա հետեվանքով Հայաստանը վերածվել է ռազմական գործողությունների, սարսափի ու արյան թատերաբեմի: Հենց ձեր բարձրագույն հրամանատարության թելադրանքով են քեմալականները գրավել Ալեքսանդրապոլը, Սարիղամիշը, Կաղզվանը և Իգդիրը, տնտեսապես քայքայել և կործանել են այս երկիրը...»[7]:

Նժդեհին մեծ անհանգստություն էին պատճառում նաև 1921 թ. մարտին Մոսկվայում տեղի ունեցող ռուս-թուրքական բանակցությունները: Այդ ժամանակ կնքված պայմանագիրը վկայում է, որ «Խորհրդային Ռուսաստանը վճռել է ամեն գնով բարեկամ մնալ քեմալական Տաճկաստանին, որ խորհրդային իշխանությունը ոչ թե միայն Կարսը, այլև Թիֆլիսը կզիջեր, եթե տաճիկները շարունակեին համառել Մոսկվայի կոնֆերանսում»[8], նշել է Նժդեհը «Ազատ Սյունիք» վերնագիրը կրող իր հուշերում:

1921 թ. մայիսին, երբ Զանգեզուրում թեժ մարտեր էին մղվում Զանգեզուրի պաշտպանական ջոկերի և 11-րդ Կարմիր բանակի զորամասերի միջև, Երևան ժամանեց Հայաստանի Ժողկոմխորհի նոր նախագահ Ա. Մյասնիկյանը: Նա անմիջապես միջոցներ ձեռնարկեց Զանգեզուրում եղբայրասպան պատերազմի դադարեցման ուղղությամբ: Այս նպատակով այնտեղ ուղարկվեց Խորհրդային Հայաստանի կառավարական պատվիրակությունը, որը պետք է բանակցություններ վարեր Նժդեհի հետ: Հունիսի 19-ին Մյասնիկյանը հանդես եկավ Հայաստանի աշխատավորությանն ուղղված մի դիմումով, որում նշվում էր Զանգեզուրի ազատագրման անհրաժեշտությունը: Այդ նույն օրը հրապարակվեց Հայաստանի Ժողկոմխորհի հայտարարությունը, որում դաշնակներին կոչ էր արվում վայր դնել զենքը և հնա-

[7] Գ. *Նժդեհ*, Հավատամք: Ե., «Հայ դատ», 1991, էջ 25:

[8] Գ. *Նժդեհ*, Ազատ Սյունիք: «Հայրենիք» (ԱՄՆ), 1925, հմ. 12, էջ 137:

կանգնվել Հայաստանի խորհրդային կառավարությանը: Մյասնիկյանի այս խաղաղարարական քայլերին եռանդուն կերպով սատար կանգնեց Ատրպատականի հայության հոգևոր առաջնորդ արքեպիսկոպոս Ներսեսը: Նա 1921 թ. հուլիսի 1-ին կան գործողությունները դադարեցնելու և հաշտության բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Սրա հետ միասին, այդ հարցի առթիվ, Գրիգոր Օհանջանյանին հանձնեցի իմ գրավոր առաջարկությունը Ձեզ»[9]:



Նժդեհի նամակը զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանին, գեներալ-լեյտենանտ Թ. Նազարբեկյանին և ՀՅԴ բյուրոյին, 1920 թ.
Письмо Нжде военному министру Р. Тер-Минасяну, генерал-лейтенанту Т. Назарбекяну и бюро АРФ, 1920 г.
Letter of Nzhdeh to the Miltary Minister R. Ter-Minasian, Lieutenant General T. Nazarbekian and Bureau of the Dashnaktsutiun, 1920
(ՀՀ պատմության թանգարանի ֆոնդերից, Հայաստանում հրապարակվում է առաջին անգամ)

Թավրիզից հեռագիր հղեց Երևան՝ «Ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Մյասնիկյանին, պատճենը՝ սպարապետ Նժդեհին»: Հեռագրում ասված էր. «Ստանալով կոմիսարներին խորհրդի 1921 թիվ, հունիս 12, հրատարակած դեկլարացիան Զանգեզուրի մասին, Վրացյանի համաձայնությամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մոտ պատերազմա-

Նժդեհը, ստանալով Հայաստանի ժողկոմխորհի հռչակագիրը և Ներսես արքեպիսկոպոսի հեռագիրը, Հայաստանի հեղկոմին է ուղարկել կրակի դադարեցման վերաբերյալ իր պայմանները:

Սպարապետը համաձայնեց զենքը վայր դնել և հեռանալ երկրից, եթե ընդունվեն մի շարք պայմաններ, որոնցից

[9] Նույն տեղում, էջ 134:

գլխավորը Զանգեզուրը Հայաստանի անկապտելի մաս ճանաչելու պահանջն էր: Խորհրդային Հայաստանի կառավարությունը հանդես եկավ մի պաշտոնական հայտարարությամբ, որում ասվում էր, որ Նժդեհի պահանջը բավարարված է: Միայն դրանից հետո Նժդեհը հայտարարեց, որ զենքը վայր է դնում:

Թե ինչպես է այդ ամենը տեղի ունեցել, Նժդեհը նկարագրել է վերը վկայակոչված իր հուշերում: Նա հատկապես կարևորում է այն հանգամանքը, որ ինքը Զանգեզուրում մնացել է «որպես հեղափոխական»՝ պայքարելով նրա համար՝ որպես Հայաստանի անկապտելի տարածքի: Նա դատապարտում էր Հայաստանի այն բոլշևիկներին, որոնք, փոխարբերելով ազգային շահերը, կողմնակից էին քեմալական Թուրքիայի հետ մերձեցմանն ուղղված Խորհրդային Ռուսաստանի արտաքին քաղաքականությանը: Միևնույն ժամանակ, բարձր գնահատելով Մյասնիկյանի խաղաղարարական քայլերը, Նժդեհը վստահություն էր ցուցաբերում Խորհրդային Հայաստանի այս ղեկավարի նկատմամբ: Նժդեհը նշում էր նաև, որ իր զինվորներից շատերը համանությամբ էին ընդունում հաշտության մասին Մյասնիկյանի խոսքերը: Չէ՞ որ սպարապետի զինվորները հիմնականում այս մարզի գյուղացիներ էին, ուստի նրանց անհրաժեշտ էր խաղաղություն, որպեսզի բերքը հավաքվի և ընտանիքները ձմեռը սովի չմատնվեն: Խորհելով առաջիկա գործողությունների մասին՝ Նժդեհը որոշել էր, ինչպես ինքն էր ասում, «խոսել ժողովրդի հետ»: Նա գրել է.

«Հունիսի վերջերին ժողովրդի մտատրամադրություններին ծանոթանալու նպատակով անցնում եմ Սիսիան: Գյուղացիությունը չի թաքցնում, որ ուրկված է կռիվը շարունակելու հնարավորությունից»[10]: Տեսնելով այդ՝ Նժդեհը շտապեց Կապան: Սակայն այստեղ էլ տիրում էին նման տրամադրություններ: Ըստ երևույթին հենց այդ ժամանակ է Նժդեհի գլխում ձևավորվել այն հայտնի արտահայտությունը, որը նա որպես խորհուրդ ուղել էր իր զինվորներին. Կարմիր բանակի կորամասերին դիմավորել հետևյալ կոչով՝ «Մի՛ կրակեք, մենք էլ ենք հայ»:

Նժդեհը վերադարձել է Գորիս, որտեղ ապաստանել էր Ս. Վրացյանի ղեկավարած դաշնակցական կառավարությունը: Նժդեհն այսպես է նկարագրում հետագա անցքերը. «Գորիսում՝ նախարարական խորհուրդը, քննության առնելով ստեղծված ընդհանուր դրությունը, որոշում է պարպել Գորիսը: Հեռախոսի մոտ եմ կանչում Զանգեզուրի ռազմական ուժերի հրամանատարին, հայտնում եմ կայացած որոշումի մասին և կարգադրում դիմադրություն ցույց տալ այն դեպքում միայն, երբ կփորձեն Սյունիք մտնել թուրք և թաթար ուժեր, իսկ ռուս և հայ զորամասերի դեմ զենք չբարձրացնել: Գյուղերի ներկայացուցիչները, դեռ սահմանագլխի վրա, դեռ բոլշևիկները Զաբուղ գետը չանցած, պետք է տեղեկացնեն խորհրդային իշխանությանը բուն Զանգեզուրի և Գորիսի կամովին խորհրդայնացման որոշման մասին»[11]:

Այդ նույն օրը Նժդեհը, հանդես գալով կառավարության տան մոտ հավաքված ժողովրդի մի բազմահազարանոց բազմության առջև, հաղորդեց ընդունված որոշումը և վստահություն հայտնեց, որ խորհրդային մարմինները մարդասիրական վերաբերմունք կցուցաբերեն Զանգեզուրի դիմադրության մասնակիցների նկատմամբ:

Նախքան Գորիսը թողնելը Վրացյանի կառավարությունը պաշտոնական նամակ ուղարկեց կարմիր զորամասերի շտաբ, որը գտնվում էր Վայոց Ձորում: Այդ նամակում մասնավորապես ասվում էր. «Լեռնահայաստանը, դադարեցնելով պատերազմական գործողությունները, հավատում է, որ Խորհրդային Հայաստանի Հեղկոմը կկատարի իր՝ Զանգեզուրի իշխանությանն ուղղած հայտարարության մեջ արած բոլոր խոստումները»[12]:

Նժդեհի հուշերում կան այսպիսի տողեր. «Հուլիսի 4-ին առանց մարտերի հանձնվեցին Տաթևի և Դարբասի ձորերը:

[10] Նույն տեղում, էջ 131 – 132:

[11] Նույն տեղում, էջ 132:

[12] Նույն տեղում, էջ 133:

Այս շրջանում հավաքված ջոկատները տուն արձակելով՝ մենք նահանջեցինք Կապան»: Այստեղ՝ հանքերում, Նժդեհը հավաքեց ամբողջ շրջանի ներկայացուցիչներին և մասնավորապես ասաց. «Մտերմված կացության մեջ նախընտրելին խորհրդայնացումն է: Սովն ավելի կործանարար պիտի լինի քան սովետացումը»: Հավաքվածների տրամադրության մասին նա գրում է. «Թաթարական Բաքուն չէ, այլ հայկական Երևանը, որի հետ այս անգամ պիտի գործ ունենանք... Այսպես էին մտածում ժողովականները»[13]:

Կապանում Նժդեհը հանդիպում ունեցավ նաև գերի ընկած կարմիրբանակայինների հետ: Դրանք թվով մոտ 1000 մարդ էին, որոնց 95 %-ը հայեր էին: Նրանց այն հարցին, թե ինչ պետք է անեն իրենք, Նժդեհը պատասխանեց, որ նրանք բոլորն էլ ազատ են և պետք է մնան Սյունիքում, որպեսզի հայտարարեն Երևանից եկածներին, որ իրենց վերաբերվել են ոչ որպես թշնամու, այլ որպես եղբայրների, քանի որ իրենք հայ են[14]:

Այսպես, իր · զինվորներին առանց մարտերի տուն արձակելով, սպարապետը իր մի խումբ մերձավորներով հասավ Մեղրի և հայտնի չինարի ծառի տակ հրաժեշտի հանրահավաք անցկացրեց: Գորիս ուղարկված իր մարդկանցից հուլիսի 12-ի գիշերը տեղեկանալով, որ կարմիրները, քաղաք մտնելով, ոչ մի բռնարարք չեն կատարել, Նժդեհը հուլիսի 13-ին հեռացավ Հայաստանից:

Հետաքրքրական է նշել, թե ինչպես է Նժդեհն ինքը բնութագրել իր կյանքի ուղին, իր հեղափոխական և մարտական գործունեությունը:

1920 թ. նոյեմբերին Զանգեզուրի սպարապետ Նժդեհը, պատասխանելով 11-րդ Կարմիր բանակի ղեկավարության նամակին և պարզաբանելով, թե ինչու է Զանգեզուրի գյուղացիությունը պայքարի ելել ընդդեմ կարմիրբանակային զորքերի, այսպես է ավարտում իր նամակը. «Վերջացնելով երկար գրությունս՝ երկու խոսք էլ ասեմ իմ մասին:

Հանուն իմ հեղափոխական հավատամքի եղել եմ բոլոր բանտերում՝ Արաքսի ափից մինչև Պետրոգրադ: Ավելի քան երեք տարի ես շղթաներ եմ մաշել բանտերում և աքսորավայրերում: Կռվել եմ և կռվելու եմ բռնության դեմ, ինչ քողի տակ և ինչ գույնով էլ որ դա երևան գա՝ ճնշելու հեղափոխական աշխատավորությունը:

Կռվել եմ թուրք աշխատավորության ազատության համար Պարսկաստանում, Բալկաններում՝ մակեդոն ժողովրդի փրկության համար, կռվում եմ և այսօր:

Եթե իմ օգնության կարիքը երբևիցե զգացիք, դիմեք, կհասնեմ»[15]:

1954 թ. փետրվարին Նժդեհը, գտնվելով խորհրդային բանտում, Վլադիմիր քաղաքում, Խորհրդային Միության Գերագույն խորհրդի նախագահության նախագահի Կ. Վորոշիլովին ուղարկել է իր ձեռքով գրված մի դիմում, որում մասնավորապես ասել է. «Իմ ողջ կյանքը եղել է պայքար պատմության մեջ ժողովուրդներին ու նրանց մշակույթները կործանողի դեր ստանձնած ավատական Թուրքիայի դեմ: Իմ ողջ գործունեությունը պայմանավորված է անհաշտ ու արդարացի ատելությամբ Թուրքիայի նկատմամբ, որն սպանեց իմ ժողովրդի կեսին: Որպես զինվորական ես պրոֆեսիոնալ չեմ, այլ հայրենասեր հեղափոխական: Այդ պատճառով ես սուրը ձեռքս էի առնում միայն այն ժամանակ, երբ հնարավորություն էր ստեղծվում հարված հասցնելու Թուրքիային, որի գոյությունը ես համարել եմ և այժմ էլ համարում եմ համաշխարհային չարիք: Իմ պայքարը ուղղված է եղել ոչ թե թուրք ժողովրդի դեմ, այլ նրա տերության դեմ»[16]:

Բերված տողերը պերճախոս վկայություն են այն բանի, որ Նժդեհի ազգայնականությունը չէր կրում շովինիստական ազգամոլության բնույթ, չէր հետապնդում այլ ժողովուրդների իր ազ-

[13] Նույն տեղում:

[14] Տես նույն տեղում:

[15] Տես *Վ. Գևորգյան*, նշ. աշխ., էջ 120:

[16] ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 11278, հ. 3, թ. 208:

գին ենթարկելու և ճնշելու նպատակներ: Նրա ողջ «ազգամոլությունը» կայանում էր նրանում, որ պաշտպանի իր ժողովրդի ազատությունն ու անկախությունը, նրա ազգային շահերը: Ելնելով այդ դիրքերից՝ Նժդեհը դատապարտում էր Խորհրդային Ռուսաստանի՝ Թուրքիայի նկատմամբ բարեկամական արտաքին քաղաքականությունը, մի պետություն, որը նաև Ռուսաստանի դարավոր թշնամին էր:



Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյան
Архиепископ Нерсес Мелик-Тангян
Archbishop Nerses Melik-Tangian
*(Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն: Փարիզ, 1928 գրքից)*

Խորհրդային Ռուսաստանը և անձամբ Վ. Լենինը մեծ հույսեր էին կապում քեմալական շարժման հետ՝ նրան տալով հեղափոխական գունավորում: Խորհրդային ղեկավարությունն այն կարծիքին էր, որ քեմալական շարժումը կտարածվի մահմեդական Արևելքի բոլոր երկրներում և էական դեր կխաղա համաշխարհային սոցիալիստական հեղափոխության հաղթանակի գործում: Դրա ապացույցն է նաև հետևյալ փաստը: Երբ 1920 թ. դեկտեմբերին Հայաստանի հեղկոմի պատվիրակներ Ս. Տեր-Գաբրիելյանը և Ա. Մռավյանը Լենինին պատմեցին թուրքական օկուպացիայի հետևանքների՝ սովի, հիվանդությունների, տնտեսության քայքայման, պգալի տարածքների բռնակավթման մասին, Լենինն ասաց. «Ձեր դժվարությունն այն է, որ միջազգային հեղափոխության ճակատներից մեկն անցնում է Հայաստանով: Ինքնըստինքյան, մենք ամեն կերպ կօգնենք հայ ընկերներին...»[17]: Այսինքն՝ ի շահ համաշխարհային հեղափոխության հայ ժողովուրդը պետք է նոր պրկանքներ ու տառապանքներ կրի:

Այդ նկատառումով Ռուսաստանն սկսեց ակտիվորեն օգնել Թուրքիային, այդ թվում՝ նաև ոսկով ու զենքով, «արևմտյան իմպերիալիստների դեմ պայքար մղելու համար»: Բայց Կրեմլի ղեկավարության հույսերը չիրականացան, իսկ այն զենքը, որը Թուրքիան ստանում էր Խորհրդային Ռուսաստանից, ուղղվեց Հայաստանի դեմ: Եվ այսպես՝ 1920 թ. սեպտեմբերի 22-ին 30-հազարանոց քեմալական բանակը ներխուժեց Հայաստանի Հանրապետության տարածքը և հրի ու սրի մատնեց արևելահայությանը:

Ինչպես վերը նշեցինք, 1920 թ. Հայաստանի նկատմամբ ագրեսիվ քաղաքականություն էին վարում նաև Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները: Որպես ասվածի հիմնավորում նշենք երկու հեռագիր, որոնք վերաբերում են Ղարաբաղում և Զանգեզուրում 1920 թ. տեղի ունեցած դեպքերին: Դրանք Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի անդամ Կարաևի հեռագրերն են՝ հասցեագրված Գորիսի հեղկոմին[18] և թվագրված այդ տարվա հուլիսի 19 և 21: Ի՞նչ էր ասվում դրանցում:

Հուլիսի 19-ի հեռագրում Կարաևը տեղեկացնում էր, որ Ադրբեջանի Խորհրդային կառավարությունը որոշում է կայացրել Ղարաբաղը և Զանգեզուրը Ադրբեջանին միակցելու նպատակով հատկացնել 200 մլն. ռուբլի, և նշում էր,

[17] «Воспоминания коммунистов Закавказья о В. И. Ленине». Е., 1970, с. 295.

[18] 11-րդ Կարմիր բանակի հրամանատարության հսկողության տակ ձևավորված այս հեղկոմը բաղկացած էր կովկասյան թաթարներից ու ռուսներից և իր կազմում ուներ միայն մի հայ:

որ հարկավոր է արագացնել Զանգեզուրի հայաթափման գործը: Այս ուղղադավան մահմեդականը, որը գունափոխվել դարձել էր բոլշևիկ, գրում էր. «Փող մի՛ ափսոսայեք... Թող ալլահը օրհնի փողի ուժը, որն ավելին է անում, քան ուժեղ զորքերը»[19]:

Հուլիսի 21-ի հեռագրում Կարաևը խորհուրդ էր տալիս գլխատել Զանգեզուրի հայությունը՝ վերացնելով նրա մտավորականությանը: «Թողեք մարդասիրությունը,—պահանջում էր նա:— Դրանով չի կարելի պետություն ստեղծել, երկրներ գրավել, խաղաղության մեջ ապրել... Հայերին թուլացնելու համար սպանեք մի ռուս զինվորի և դրանում մեղադրեք հայերին: Գիտեք, թե ինչ կանեն ռուսները: Զանգեզուրում չթողնենք ո՛չ կարգին մարդ, ո՛չ հարստություն, որ այդ նկովյալ ցեղը այլևս չկարողանա ոտքի կանգնել»[20]: Այդ նույն հեռագրում Կարաևը հայտնում էր, որ Աժդահա-փաշայի, այսինքն՝ Նժդեհի գլուխը գնահատված է երեք միլիոն ռուբլի:

Իհարկե, Նժդեհը տեղյակ չէր Ադրբեջանի հեղկոմի այդ հրահանգային հեռագրերին: Սակայն նա տեղյակ էր, որ Բաքվում շտապ կարգով կազմավորվում են հատուկ գումարտակներ, որոնք բաղկացած էին կարմիրբանակայիններին համազգեստ հագցված թուրք ասկյարներից և որոնք թուրք սպաների հրամանատարությամբ Զանգեզուր էին տեղափոխվում այն հայաթափ անելու համար: Հանդիպելով նման փաստի՝ Նժդեհը անմիջապես բողոքի նամակ էր հղել 11-րդ Կարմիր բանակի հրամանատար Ա. Գեկկերին:

Իսկ ի՞նչ գնահատական էր տվել Զանգեզուրի մեծագործությանը Նժդեհը՝ պատասխանելով քննիչների բազմաթիվ հարցերին: Իր պատասխանները, հանրագումարի բերված ձևով, Նժդեհը ներկայացրել է Վորոշիլովի անունով գրված դիմումի մեջ: Այստեղ նա գրել է.

«1. Զանգեզուրի պայքարը կրում էր զուտ պաշտպանական բնույթ:

2. 1919 թ. Զանգեզուրը պաշտպանում էր իր ֆիզիկական գոյությունը, որովհետև քեմալականները վարում էին ագրեսիվ նվաճողական պատերազմ:

3. 1920 թ. Զանգեզուրի գյուղացիությունը ձգտում էր իր տարածքի վերամիավորմանը Խորհ. Հայաստանի հետ:

4. Ինչպես ինձ, այնպես էլ մեր գյուղացիությանը խորթ է եղել խտրականության գաղափարախոսությունը. չարամտություն է Զանգեզուրի ինքնապաշտպանությանը վերագրել դասակարգային-գաղափարական ուղղվածություն, դա կնշանակի հայ ժողովրդի դարավոր ողբերգության գիտակցված ծանակում...

5. Իմ և 11-րդ բանակի հրամանատարության միջև ծագած թյուրիմացությունը պայմանավորված էր պանթյուրքականների սադրիչ մեքենայություններով:

6. Իմ ժողովրդական զորամասերից ես պահանջել եմ քաղաքակիրթ վերաբերմունք, անգամ մուսավաթականների և թուրքերի նկատմամբ, որոնք ջանում էին ոչնչացնել գյուղացիությանը:

Սհավասիկ ճշմարտությունը Զանգեզուրի մասին: Մնացածը բերիական զրպարտանք է»[21]:

Այսպիսով՝ Նժդեհը կարևորում է այն հանգամանքը, որ Զանգեզուրում թուրք զավթիչների դեմ մղված պայքարը կրում էր ազգային-ազատագրական բնույթ, Զանգեզուրի գյուղացիությունը իր ֆիզիկական գոյությունն էր պաշտպանում արտաքին թշնամու հարձակումներից: Նժդեհը նշում է նաև, որ իր ժողովրդական ուժերը, պաշտպանելով Զանգեզուրը, երկու ծառայություն են մատուցել Խորհրդային Ռուսաստանին: Նախ՝ Կարմիր բանակի Բաքու մտնելու պահին մուսավաթական կառավարության զինված ուժերի 95 %-ը իր զորքերի կողմից կաշկանդված էր Զանգեզուրում: Երկրորդ՝ պաշտպանելով Զանգեզուրը, իր ժողովրդական ուժերը ձախողեցին մահմեդական ժողովուրդների տարածքային

[19] ЦПА ИМЛ, ф. 64, оп. 1, ед. хр. 10, л. 8.
[20] Նույն տեղում, թ. 10:

[21] ՀՀ ՆԳ և ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գ. 11287, հ. 3, թ. 212:

միասնություն ստեղծելու պանթյուրքական ծրագիրը[22]:

Մեր կարծիքով Նժդեհի տեսակետը հիմնավորված ու համոզիչ է և լիովին համապատասխանում է իրականությանը:

Նույնքան համոզիչ են Նժդեհի մեղադրանքները՝ հասցեագրված 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությանը: «Իմ և 11-րդ բանակի հրամանատարության միջև ծագած թյուրիմացությունը,—գրել է Նժդեհը,—պայմանավորված էր պանթյուրքիստների սադրիչ նենգաքարոյությամբ... Էնվեր-փաշայի, Խալիլ-բեյի ու Ադրբեջանում բույն դրած այլ թուրքական գործակալների մեքենայությունների հետևանքով 11-րդ Կարմիր բանակի հրամանատարությունը Զանգեզուրը հայտարարել էր Ադրբեջանի տարածք: Այս քայլն էլ հենց պատճառ դարձավ 11-րդ բանակի հրամանատարության և Զանգեզուրի բնակչության միջև տարաձայնությունների ծագման, քանի որ բնակչությունը չէր կարող համակերպվել իր տարածքի կորստի հետ, մի տարածք, որը պատմականորեն և ազգագրորեն հազարամյակներ շարունակ պատկանել է Հայաստանին»[23]:

Հարցաքննությունների ժամանակ Նժդեհը հաղորդել է Գեկերի պատասխանը իր մեղադրական նամակներին: Վերջինս գրել է. «Թուրքական գումարտակները Զանգեզուր ուղարկելու համար մենք չենք գովաբանում մեզ: Բայց ո՞վ կարող էր մտածել, որ թուրքերը կարմիր դրոշի ներքո վենք կբարձրացնեն գյուղացիության վրա»[24]:

Նժդեհը գոհունակություն է հայտնել, որ 11-րդ բանակի հրամանատար Գեկերը ազնվություն ունեցավ խոստովանելու իր սխալը, սակայն ավելացրել է, որ այդ սխալը հետևանք էր «արևելյան ժողովուրդների կոնգրեսում Զինովևի հետ ջերմ համբույրներ փոխանակած Էնվերի և թուրքական այլ փաշաների սադրիչ նկրտումների»[25]:

Բոլոր հարցաքննությունների ժամանակ սպարապետը պնդում էր, որ իրեն լրիվ անարդարացի կերպով են դատապարտել 25 տարվա ազատազրկման: Այս կապակցությամբ նա բողոք է գրել ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Ռուդենկոյին, նշելով, որ իր գործը քննելիս հաշվի չեն առել մի կարևոր հանգամանք. «Ինձ հեռակա կարգով դատողները չեն իմացել, որ 1920 թ. Զանգեզուրի պաշտպանությանն իմ մասնակցության համար ես 1921 թ. արդարացվել եմ: Այդ ժամանակ Խոր. Հայաստանի կառավարությունը «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում հրապարակել է մի հռչակագիր, որը վավերացված էր Հայաստանի բոլոր ժողովրդական կոմիսարների ստորագրություններով և որում Զանգեզուրը հայտարարված էր Խորհրդային Հայաստանի անկապտելի մասը: Այս նույն հռչակագրով, որը թվագրված է 1921 թ. հունիսի 15, արդարացվել են Զանգեզուրի պաշտպանության բոլոր մասնակիցները: Ահա թե ինչ հաշվի չի առնվել ՀԽ կողմից (հատուկ խորհրդակցություն:—*Վ. Մ.*): Այս սխալի հետևանքով ես դժբախտաբար ստացա 25 տարի, մի ժամկետ, որը իմ տարիքի և իմ հիմնովին քայքայված առողջությամբ մարդու համար հավասարազոր է մահապատժի»[26]:

Հարկ է նշել, որ հետագայում Գարեգին Նժդեհի գործը վերանայվեց: Հիմնըվելով փաստերի անաչառ գնահատականի վրա՝ բարձրագույն քննչական մարմինները որոշում ընդունեցին Գարեգին Նժդեհի դեմ ժամանակին հարուցված քրեական գործը կարճելու և նրան լրիվ արդարացնելու մասին: Որոշման մեջ մասնավորապես ասված է. «Առաջադրված մեղադրանքում Գարեգին, նույն Նժդեհ, Եղիշե Տեր-Հարությունյանը իրեն մեղավոր չի ճանաչել, նշելով՝ որ ինքը հանցանք չի կատարել, իր ամբողջ կյանքը նվիրել է հայ ժողովրդի ազատագրմանը: Զանգեզուրում իր ղեկավարությամբ մարտերը նա համարել է ազգային-ազատագրական պայքար ի շահ Հայաստանի

[22] Տես նույն տեղում, թ. 214:

[23] Նույն տեղում:

[24] Նույն տեղում, թ. 212:

[25] Նույն տեղում:

[26] Նույն տեղում, թ. 197:

անկախ Հանրապետության... Նա իր գործունեության ընթացքում պայքարել է բռնակալության դեմ, անկախ Հայաստանի իշխանության անվտանգությունը ապահովելու, հայ ժողովրդի իղձերը իրականացնելու համար: Նրան վերագրած մեղադրանքը իր մեջ հանցագործության հատկանիշներ չի պարունակում»[27]:

Կարծում ենք, որ բերված նյութերը, մասնավորապես արխիվային փաստաթղթերը համոզիչ կերպով վկայում են, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում Գարեգին Նժդեհը կատարել է էական դեր: Թեկուզ միայն այն հանգամանքը, որ Հայաստանի գյուղացիությունը Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ պաշտպանեց Զանգեզուրը՝ նրան կերծ պահելով այն ողբերգությունից, որը բաժին հասավ Արցախին, և այն փաստը, որ դեռևս 1921 թ. Ա. Մյասնիկյանի գլխավորած հայկական խորհրդային կառավարությունը ներում է շնորհել Զանգեզուրի մեծագործությունների բոլոր մասնակիցներին՝ դրանով իսկ փաստորեն ճանաչելով նրանց մեծ դերը ազգապահպանության գործում, արդեն բավական են, որ երախտապարտ սերունդները Գարեգին Նժդեհին ճանաչեն և փառաբանեն որպես մեր ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ասպետի, նրա պանծալի հերոսներից մեկի:

[27] Նույն տեղում, թ. 228:

# ՀՆԱԳՈՒՅՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅ ՌԱԶՄԻԿԻ ՄԱՍԻՆ

*Ա. Ա. ՏԵՐՅԱՆ*

Հայկական լեռնաշխարհի բնակիչները անհիշելի ժամանակներից իրենց ազատությունը, անկախությունը և ինքնուրույնությունը պահպանելու համար թշնամիների դեմ մղել են հարձակողական և պաշտպանական մարտեր:

Հայոց պատմության հնագույն ժամանակների մասին շատ քիչ աղբյուրներ են մեզ հասել՝ հիմնականում օտար թագավորների կողմից գրված արձանագրություններ (եգիպտական, խեթական, ասորական և այլ), որոնք լի են հիմնականում այդ տիրակալների անձը փառաբանող արտահայտություններով: Դրանցից հայտնի է դառնում, որ հին աշխարհի հզոր պետությունները փորձել են նվաճել Հայկական լեռնաշխարհը: Բայց դա այնքան էլ հեշտ չէր, որովհետև հայերը, որոնք արձանագրություններում կոչվում էին հայասայի, նաիրցի, ուրարտացի, հարի-միտանցի[1], խիզախ ու վարժ ռազմիկներ էին՝ զինված ժամանակի լավագույն զենքերով: Հայտնի է, որ Հայաստանը հնագույն ժամանակներից մետաղների մշակման (մ. թ. ա. 4-րդ հազարամյակ) և ձիու ընտելացման (մ. թ. ա. 6-րդ հազարամյակ) կենտրոններից մեկն էր[2], հետևաբար հայ ռազմիկները զինված են եղել մետաղե զենքերով, ունեցել են ձիեր ու մարտակառքեր, ինչն էլ անշուշտ նպաստել է նրանց հաջողությանը մարտի դաշտում:

Հնագույն գրավոր աղբյուրները, պատկերներն ու պատկերաքանդակները վկայում են, որ հայոց վորքը հիմնականում կազմված է եղել հետևակից, հեծելազորից և մարտակառքերից: Հայերը մեծ ուշադրություն են դարձրել պատանիների ու երիտասարդների ռազմական պատրաստությանն ու դաստիարակությանը: Եղել են հատուկ ռազմակայաններ, որտեղ ավագները իրենց հարուստ փորձն են հաղորդել կրտսերներին:

Հայտնի է, օրինակ, որ Ուրարտուի արքա Մենուան (մ. թ. ա. 810—786 թթ.)

[1] Սրանց հայ լինելու մասին տես *Ա. Խաչատրյան*, Հայկական սեպագրական շրջանի պատմություն: Ե., 1933:

[2] Տես *Թ. Խ. Հակոբյան*, Հայաստանի պատմական աշխարհագրություն: Ե., 1968:

Վան քաղաքի շրջակայքում ունեցել է մարզարան, որտեղ մարզվելու ժամանակ նրա Արծիբի անունով ձին, որին հեծած է եղել Մենուան ինքը, ցատկել է 22 կանգուն[3]: 1 կանգունը 51,8 սմ է, հետևաբար Մենուա արքայի ձին ցատկել է մոտ 11 մ 40 սմ: Այս նվաճումը շուրջ 2800 տարի մնում էր չգերազանցված, և միայն 1975 թ. գերմանացի Կ. Բերգմանը իր Սվինգեր նժույգով ցատկեց 22 մ 16 սմ:

Հետաքրքիր է նաև Արգիշտի 2-րդի (մ. թ. ա. 713—685 թթ.) մի արձանագրությունը, որը հայտնաբերվել է Վանի Հայկավան թաղամասում: Արգիշտին հայտնում է. «Արգիշտի Ռուսայորդին նետը վերագցեց հենց այս տեղից՝ Գիլուարա գյուղի անտառի առջևից մինչև Իշպիլե Բատուորդու այգին՝ ինը հարյուր հիսուն կանգուն»[4]: Ուրեմն Արգիշտի արքայի արձակած նետը անցել է 492 մ տարածություն:

Հայերը գերազանց ռազմիկներ էին, որոնց հարգում ու գնահատում էին անգամ թշնամիները: Նրանց պատրաստակամությամբ էին ծառայության վերցնում հարևան բոլոր թագավորները: Խեթական մի արձանագրությունից հայտնի է, որ 3000 հայ մարտիկներ ծառայության մեջ են եղել խեթական թագավորի բանակում որպես հետևակայիններ ու մարտակառք վարողներ:

Խեթերը, կամ հեթիթները, հայերի հնագույն հարևաններն էին: Նրանց արձանագրություններում Հայաստանը հիշատակվում է Հայասա և Հայասա-Ազզի անուններով: Հայ-խեթական պատերազմական հարաբերությունների մասին բազմաթիվ տեղեկություններ կան խեթական թագավորների՝ մ. թ. ա. 15—14-րդ դարերից մեզ հասած արձանագրություններում: Հնագույն խեթական արձանագրությունը, որ տեղեկություններ է տալիս Հայաստան կատարված արշավանքների մասին, պատկանում է Մուրսիլիս 2-րդին (մ. թ. ա. 1340—1320 թթ.): Խեթական թագավորը հայտնում է, որ ինքը շատ անսպասելի հարձակվել է Հայասայի վրա և հաջողության հասել: Սակայն կարճ է տևել նրա հաջողությունը, որովհետև հայերը արագ վերադասավորել են իրենց ուժերը և խեթերին դուրս մղել իրենց երկրից: Այնուհետև Թութհալիան շատ մեծ ուժերով նոր արշավանք է ձեռնարկել դեպի Հայաստան: Այս անգամ նա բախվել է հայոց բանակին (հետիոտն զինվորներ և կառամարտիկներ), որին գլխավորում էր թագավորը՝ Կարաննին: Գլխավոր ճակատամարտը տեղի է ունեցել Եփրատ գետի աջ ափին Կումմախա (Կոմագենե) քաղաքի մոտակայքում: Այս ճակատամարտում, ըստ երևույթին, խեթերին չի հաջողվել վճռական հաղթանակի հասնել, քանի որ հետագայում նրանք բազմաթիվ նոր արշավանքներ են ձեռնարկել դեպի Հայկական լեռնաշխարհ[5]:

Խեթերի հաջորդ ընդհարումը հայերի հետ ըստ մեզ հասած տեղեկությունների եղել է Սուպպիլուլիումաս 1-ին թագավորի ժամանակ (մ. թ. ա. 1380—1340 թթ.): Հայոց ծերացած Հուկաննա թագավորը գերադասել է հաշտության պայմանագիր կնքել խեթերի հետ: Ստորագրված պայմանագրով հայերը պետք է ռազմական օգնություն ցույց տային խեթերին այլ երկրներ նրանց արշավանքների ժամանակ, հայոց թագավորը պահպանում էր իրեն հայտնի ռազմական գաղտնիքները խեթերի արշավանքների մասին և այլն: Խաղաղության այս պայմանագիրն այն առումով էր ձեռնտու խեթերին, որ նրանց հաջողվում էր ժամանակավորապես մեկուսացնել հայերին և նույնիսկ օգտագործել նրանց ռազմական ուժն իրենց արշավանքների ժամանակ[6]:

Հետագա արձանագրություններից հայտնի է դառնում, որ երբ խեթական թագավոր Մուրսիլիս 2-րդը երկարատև պատերազմի մեջ է եղել իր մեկ այլ հարևանի հետ, հայոց թագավորը՝ Մարիասի որդի Անիասը, հաճախակի արշավանքներ է կազմակերպել դեպի խեթերի եր-

[3] Տես «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (այսուհետև՝ ՀԺՊՔ): Ե., 1981, էջ 52:

[4] Նույն տեղում, էջ 87:

[5] Տես նույն տեղում, էջ 7—8:

[6] Տես նույն տեղում, էջ 8—9:

կիր: Այդ արշավանքներից մեկի ժամանակ Անիասը մեծ թվով գերիներ ու ավար է վերցրել: Մուրսիլիսը պահանջել է հետ վերադարձնել դրանք, սակայն մերժում է ստացել: Դրանից հետո խեթերը վերսկսել են ռազմական գործողությունները, որոնք շարունակվել են մոտ 4 տարի և հաջողություն չեն բերել կողմերից ոչ մեկին: Մ. թ. ա. 1330 թ. Մուրսիլիսը մեծ ուժերով անցել է վճռական հարձակման: Հայերը, օգտվելով իրենց լեռներից, պատսպարվել են ամրոցներում, բայց խեթերը, շրջանցելով այդ ամրությունները, դուրս են եկել չպաշտպանված բնակավայրերի մոտակայքը և մեծ կորուստների գնով գրավել դրանք[7]: Սակայն ըստ երևույթին խեթերին չի հաջողվել իրենց տիրապետությունը հաստատել Հայաստանում, քանի որ (ըստ հետագա վավերագրերի) մ. թ. ա. 14—13-րդ դարերում հայերը դաշինքի մեջ են եղել խեթերի հետ:

Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի կեսերից Փոքր Ասիայի արևմտյան մասերին և Միջերկրական ծովի արևելյան ափերին տիրելու համար պայքարի մեջ էին մտել Եգիպտոսը և Հայկական լեռնաշխարհի հարավային · մասերում կազմավորված (Վանա լիճ և ավելի հարավ) պետություններից մեկը՝ Հարի-Միտանին: Մոտ մեկ դար են տևել հայ-եգիպտական ռազմական բախումները, որոնք ընթանում էին փոփոխակի հաջողությամբ: Ի վերջո կողմերը, թերևս համոզվելով, որ ռազմական ուժով իրենք համազոր պետություններ են և երկուսի համար էլ ավելի շահավետ է ոչ թե պատերազմը շարունակելը, այլ փոխհամաձայնության գալը, որոշել են վիճելի տարածքները բաժանել ազդեցության ոլորտների. հյուսիսային Սիրիան անցել է Հարի-Միտանիին, իսկ հարավային Սիրիան և Պաղեստինը՝ Եգիպտոսին:

Հայ-եգիպտական բարեկամությունն ամրապնդվում էր նաև ամուսնություններով: Այդ ժամանակ էր, որ Եգիպտոս հարս գնաց (մ. թ. ա. 1392—1391 թթ.) Հայկական լեռնաշխարհի հանրահայտ դուստրերից մեկը՝ գեղեցկուհի Նեֆերտիտին[8]: Նշենք նաև, որ եգիպտական փարավոնները իրենց գրություններում Հարի-Միտանիի թագավորներին դիմում էին «իմ եղբայր», «Միտանիի մեծ թագավոր» արտահայտություններով, նույն կերպ էլ նրանց էին դիմում հայոց թագավորները: Փարավոնները բացառիկ



Կառամարտիկներ. բարձրաքանդակ Մալաթիայից, մ. թ. ա. II հազ.
Воины на боевых колесницах, барельеф из Малатии, II тыс. до н. э.
Warriors in the battle chariots, bas-relief from Malatia, II millennium BC
(«Հայ ժողովրդի պատմություն»: Ե., 1971 գրքից)

դեպքերում էին դիմում այս ձևով կամ թույլ տալիս, որ իրենց եղբայր անվանեն: Սա Հայկական լեռնաշխարհի արքաների նկատմամբ հատուկ հարգանքի ու վստահության արտահայտություն էր:

Մ. թ. ա. 2-րդ հազարամյակի վերջերին և 1-ին հազարամյակի սկզբներին պատմաբեմում ի հայտ էր եկել մի նոր պետություն՝ հզոր Ասորեստանը: Այն ևս Հայկական լեռնաշխարհը նվաճելու բազմաթիվ փորձեր է կատարել: Մ. թ. ա. 13-րդ դարից ասորեստանյան թագավորների հիշատակություններում Հայաստանը կրում էր Նաիրի անունը: Մեկ հասած արձանագրություններում ասորեստանյան

[7] Տես նույն տեղում, էջ 9—10:

[8] Տես *Ա. Խաչատրյան*, նշ. աշխ., էջ 346—362:

թագավորները պատմում են Նաիրի երկիր կատարած իրենց արշավանքների մասին: Թիգլաթպալասար 1-ինը (մ. թ. ա. 1115—1077 թթ.) հայտնում է, որ ինքը մեծ պատասխանատվությամբ է նախապատրաստվել դեպի Նաիրի երկիր կատարվելիք արշավանքին, քանի որ դա ընդարձակ, անծանոթ երկիր է, որը մինչ այդ երբեք չէր նվաճվել[9]:

Ասորեստանի թագավորների արձանագրությունները լի են դաժանության, թալանի ու կոտորածների սարսափելի նկարագրություններով: Սակայն հաճախակի ձեռնարկվող արշավանքները վկայում են այն մասին, որ ասորեստանցիներին երբևէ չի հաջողվել լիովին նվաճել ու հպատակեցնել հայերին: Չնայած իրենց մեծամտությանը՝ անգամ ասորեստանյան թագավորներն իրենց արձանագրություններում հիշատակում են այդ մասին: Այսպես՝ Թիկուլթի-Նինուրթան (մ. թ. ա. 1243—1221 թթ.) իր մի արձանագրության մեջ վկայում նաիրցի մարտիկների անհաղթ մարտական ոգու մասին[10]: Թիգլաթպալասար 1-ինը գրել է, որ ինքը պատանդ է վերցրել Նաիրի երկրների թագավորների «հպարտ որդիներին», որոնց, սակայն, ազատ է արձակել՝ որպես փրկագին ստանալով 1200 ձի, 2000 խոշոր եղջերավոր անասուն[11]: Նկատենք, որ նա «հպարտ» է անվանում պարտվող կողմի մարտիկներին: Ուշագրավ է նաև վերը բերված արտահայտությունը, որ Նաիրին չնվաճված երկիր է:

Ասորեստանի թագավորների հաճախակի կրկնվող արշավանքները նաև պատճառ դարձան, որ միավորվեն Հայկական լեռնաշխարհի բոլոր մանր ու մեծ պետական կազմավորումները: Այսպես՝ արտաքին թշնամու դեմ մղված պայքարում կազմավորվեց հայոց մեկ այլ հզոր պետություն՝ Վանի թագավորությունը՝ Ուրարտուն:

Մ. թ. ա. 9-րդ դարից սկսած՝ հայոց կորքը Արամե, Սարդուր, Մենուա, Արգիշտի, Ռուսա և այլ թագավորների (նրանք նաև զորահրամանատարներ էին) գլխավորությամբ հաղթական պատերազմներ է մղել ասորեստանցիների, բաբելացիների և այլ թշնամիների դեմ: Ասորեստանյան զորահրամանատար Շամշիլուն մ. թ. ա. 780 թ. խոստովանել է, որ «Արգիշտի Ուրարտացու (Արգիշտի 1-ին:—*Ա. Տ.*) անունը սարսափելի է ծանր հողմի նման, իսկ նրա ուժերը մեծաքանակ են»[12]:

Հնագույն պատմական վկայություններ կան նաև այն հայ զորահրամանատարների մասին, որոնք ծառայության մեջ էին օտար թագավորների մոտ, առաջնորդում էին նրանց զորքը կամ հայկական զորագնդերի գլուխ անցած մասնակցում էին այդ թագավորների արշավանքներին: Այսպես՝ մ. թ. ա. 4-րդ դարի հույն պատմիչ Քսենոփոնը վկայում է, որ Պարսից Կյուրոս Մեծ (մ. թ. ա. 550—529 թթ.) թագավորի ձեռնարկած լյուդական և բաբելական արշավանքներին մասնակցել են հայկական հեծելազորը և հետևակը Տիգրանի (հետագայում՝ հայոց Տիգրան 1-ին թագավոր) և Եմբասի գլխավորությամբ[13]: Այդ արշավանքների ժամանակ նվաճվեց և կործանվեց Բաբելոնը (մ. թ. ա. 539 թ.): Իսկ մինչ այդ՝ մ. թ. ա. 612 թ., մարերը, դաշնակցելով հայերի ու բաբելացիների հետ, նվաճել ու ավերել էին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Խորենացին վկայում է, որ Նինվեի գրավման ժամանակ հայոց զորքին առաջնորդում էր Պարույր Սկայորդին[14]:

Պարսից Դարեհ I արքայի (մ. թ. ա. 522—486 թթ.) Բեհիստունյան արձանագրության մեջ վկայություններ կան հայ զորավարների մասին:

Մ. թ. ա. 521—520 թթ. Դարեհի դեմ ապստամբում են մի շարք երկրներ, այդ թվում՝ նաև Հայաստանը: Ապստամբությունը ճնշելու համար Դարեհը Հայաստան է ուղարկում Դադարշիս անունով

[9] Տես ՀԺՊՔ, էջ 16—21:

[10] Տես *Կ. Այթոյան*, Սպորտի հնագույն ակունքները: Ե., 1985, էջ 196:

[11] Տես ՀԺՊՔ, էջ 20:

[12] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1: Ե., 1971, էջ 307:

[13] Տես *Քսենոփոն*, Կյուրոպեդիա (Հ. Մանանդյանի թարգմ.) (տես *Հ. Մանանդյան*, Երկեր, հ. 1: Ե., 1977, էջ 384—400):

[14] Տես *Մ. Խորենացի*. Հայոց պատմություն: Ե., 1981, էջ 77—79:

իր հայ զորավարին, որը սակայն չի կարողանում ճնշել իր հայրենակիցների ապստամբությունը և պարտություն է կրում տեղի ունեցած բոլոր երեք ճակատամարտերում: Դարեհը Հայաստան է ուղարկում նոր զորք նոր զորավարի՝ պարսիկ Վահումիսայի գլխավորությամբ: Միայն երկու ճակատամարտ տալուց հետո Վահումիսային հաջողվում է ճնշել հայերի ապստամբությունը: Դարեհի Բեհիստունյան արձանագրության մեջ չենք հանդիպում այն հայ զորավարի կամ թագավորի անվանը, որի հրամանատարությամբ հայոց զորքը հինգ անգամ ճակատամարտ է տվել պարսիկ զորավարներ Դադարշիշի և Վահումիսայի դեմ: Հավանաբար, Դարեհը չի ցանկացել, որ իր դեմ ապստամբած հայոց զորավարի անունը հավերժանա: Հայտնի է, որ հայոց Տիգրան 1-ին թագավորին հաջորդել է որդին՝ Վահագնը, մ. թ. ա. 531 կամ 530 թ., ուստի հավանական է, որ Դարեհի դեմ կռված հայոց զորքի հրամանատարը հենց այս Վահագնն է եղել[15]:

Դարեհի դեմ ապստամբած երկրների թվում էր նաև Բաբելոնը: Այստեղ ապստամբությունը ղեկավարում էր Արախա անունով մի հայ՝ Հալդիտայի (Հալդ—Հայկ) որդին: Արախան հայտարարել էր, որ ինքը բաբելական գահի հավակնորդ Նաբոնիդի որդի Նաբուգոդոնոսորն է: Ապստամբ ժողովուրդն ընդունեց Արախային և հռչակեց թագավոր: Սակայն Դարեհին հաջողվեց ճնշել նաև այս ապստամբությունը, իսկ Արախան մահապատժի ենթարկվեց[16]:

Մ. թ. ա. 4—3-րդ դարերում (մոտ մեկ դար) տեղի են ունեցել հույն-պարսկական պատերազմներ, որոնց, հույն պատմիչների վկայությամբ, մասնակցել են նաև հայկական ջոկատներ՝ հիմնականում պարսիկների կողմից: Արիանոսը վկայում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու և Դարեհ 3-րդի զորքերի միջև մ. թ. ա. 331 թ. տեղի ունեցած Գավգամելայի ճակատամարտին պարսիկների կողմից մասնակցել են հայոց այրուձին ու հետևակը Երվանդի և Միհրվահիշտի գլխավորությամբ: Պարսից բանակի աջ թևը, որտեղ կռվում էր հայոց զորագունդը, հերոսաբար դիմակայել է մակեդոնական զորքին և մարտը շարունակել նույնիսկ այն ժամանակ, երբ պարսիկները Դարեհի գլխավորությամբ անկազմակերպ ու խուճապահար փախել են մարտի դաշտից: Աջ



Հայ նիզակակիր և աղեղնավոր,
մ. թ. ա. I հազ. սկիզբ (Վանի թագավորություն)
Армянские копьеносец и лучник,
нач. I тыс. до н. э. (Ванское царство)
Armenian spearer and archer.
I millennium BC (Kingdom of Van)
(*Կ. Աթոյան*, Սպորտի հնագույն ակունքները: Ե., 1985 գրքից)

թևում մարտը շարունակվել է մինչև երեկո, սակայն երբ հայտնի է դարձել, որ պարսից զորքը ճակատամարտի ձախ թևում և կենտրոնում պարտություն է կրել, Երվանդը և Միհրվահիշտը կազմակերպել են հայոց զորքի կանոնավոր նահանջը դեպի հայրենիք և ոչ շատ ժամանակ անց Հայաստանը հռչակել անկախ ու ինքնուրույն թագավորություն[17]:

Տեղն է հիշելու, որ հույն պատմիչները (Քսենոփոն, Դիոդորոս Սիկիլացի, Դիոն Կասիուս) վկայում են նաև հմուտ հայ ռազմիկների մասին: Այսպես. Դիոդորոս Սիկիլացին (մ. թ. ա. 5-րդ դ. վերջ) գրում է. «Սրանք՝ կարդուխները (Կորդվաց լեռների բնակիչները) արքային (պարսից) թըշնամի էին ու ապստ և զբաղվում էին ռազմական արվեստով. նրանք առանձնապես վարժ էին պարսատիկներով խոշո-

[15] Տես *Լ. Շահինյան*, Հայաստանը և առաջին Արշակունիները: Ե., 1993, էջ 289:

[16] Տես ՀԺՊՔ, էջ 154—159:

[17] «Հայ ժողովրդի պատմություն», հ. 1, էջ 494:

րագույն քարեր արձակելու և հույժ մեծ նետեր օգտագործելու մեջ, որոնցով էլ նրանք, հարմար դիրքերից հելլեններին հարվածներ հասցնելով, շատերին սպանեցին: Նրանց նետերը երկու կանգունից ավելի էին ու ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի կրահ չէր դիմանում նրանց հարվածին: Կարդուխներն այնպիսի մեծ նետեր էին օգտագործում, որ հելլենները, նրանց արձակած նետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում»[18]:

Ուրարտուից հետո հայոց կենքի մեծ հաջողություններ ու հաղթանակներ են արձանագրվել հատկապես Տիգրան Մեծի (մ. թ. ա. 95—55 թթ.) ժամանակ: Հայ ռազմիկների քաջությունը, արիությունը և մարտական բարձր ոգին նոր ուժով են դրսևորվում այս շրջանում: Տիգրան 2-րդը կարողացավ միավորել ոչ միայն ողջ Հայկական լեռնաշխարհը, այլև հայկական պետության սահմանները հասցրեց մինչև Սիրիա, Պաղեստին և Եգիպտոս: Տիգրան Մեծի մասին գրվել ու դեռ պիտի գրվեն շատ ուսումնասիրություններ: Այժմ բավարարվենք Խորենացու մի արտահայտությամբ, որ լավագույնս բնութագրում է Տիգրան Մեծին ու հայ ռազմիկներին. «Քաջը քաջերի գլուխն անցավ և հրաշքներ գործեց»:

Անշուշտ լավագույն հատկանիշներով օժտված հայ ռազմիկի արդեն հայտնի կերպարն է առիթ հանդիսացել, որ հռոմեացիների կողմից (Վերգիլիոս) արվի հետևյալ արտահայտությունը. «Արաքսը կամուրջներ չի հանդուրժում»: Այս թևավոր արտահայտությունը նշանակում է, որ հայերին հնարավոր չէ հնազանդեցնել: Այս արտահայտությունը այն խոստովանություններից է, որոնք շարունակում և լրացնում են մյուսներին, ինչպես նաև լավագույնս բնութագրում են հայերին ու հայոց անպարտելի մարտական ոգին:

Հիշենք նաև մեկ ուրիշ փաստ: Ահա թե ինչպես է արտահայտվում Օգոստոս կայսրը Հայաստանի մասին: «Մեծ Հայաստանը,—ասված է Օգոստոս կայսեր կտակի մեջ,—ես կարող էի նրա Արտաշես թագավորի սպանությունից հետո դարձնել նահանգ, սակայն ավելի լավ համարեցի, հետևելով մեր նախնիների օրինակին, այդ թագավորությունը տալ Տիգրանին, որը Արտավազդի որդին էր և Տիգրան թագավորի թոռը»[19]: Նշենք, որ նախնիների օրինակին հետևելու սովորույթը չէր Հայաստանի անկախությունը պահպանելու հիմնական պատճառը, պարզապես Հայաստանն իր պայքարող ոգով ու որդիներով ստիպել էր, որ Օգոստոս կայսրը ընդունի Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը, հակառակ դեպքում հռոմեացիներին սպառնում էր երկարատև պատերազմի վտանգը:

Այսպիսով՝ հայերը ունեցել են մարտական գործողություններին պատրաստ ռազմիկներ, կորավարներ (սպարապետներ), ջոկատներ ու բանակներ, որոնց, ինչպես տեսանք, գնահատում ու հարգում էին անգամ թշնամիները: Հետագա դարերում էլ հայ մարտիկները, իրենց մեջ կրելով քաջ նախնիների արյունն ու ոգին, շարունակել են պաշտպանել իրենց ավանդած հայրենի երկիրը՝ ապահովելով հայ ցեղի հարատևությունը իր բնօրրանում՝ Հայկական լեռնաշխարհում:

---

[18] ՀԺՊՔ, էջ 174:

Որոշ գիտնականներ (Դյակոնով, Նիկիտին) կարդուխներին համարում են քրդերի նախահայրեր: Գիտականորեն ավելի հիմնավոր է մի շարք այլ գիտնականների այն կարծիքը, ըստ որի քրդերը կազմավորվել են Իրանի Պարսք (Ֆարս) նահանգի հյուսիսային շրջաններում: Կորճայքի (Կորդուք) հայկական նահանգ լինելու մասին տես *Հ. Հյուբշման*, Հին Հայոց տեղվո անունները: Վիեննա, 1907, քրդերի ծագումնաբանության մասին՝ *О. Вильчевский*, Курды. Введение в этническую историю курдского народа. М.—Л., 1961; *D. N. Mackenzie*, The Origins of Kurdish, «Transactions of the Philological Society», L., 1961, *նույնի*, Malâ-ê Jizrî and fagî Tairan, «Yādnāme Irani-ye Minorsky», Tehran, 1969: *Խմբ.:*

[19] *Հ. Մանանդյան*, նշ. աշխ., էջ 296:

# ВОЕННАЯ ИСТОРИЯ

## ЗАНГЕЗУРСКАЯ ЭПОПЕЯ ГАРЕГИНА НЖДЕ

*В. А. МУРАДЯН, гвардии подполковник в отставке, доктор исторических наук, заслуженный деятель науки РА*

РЕЗЮМЕ

**Гарегин Нжде является выдающимся деятелем национально-освободительной борьбы армянского народа периода новейшей истории. Однако он не получил объективной оценки при советском режиме.**

Лишь с началом Карабахского движения деятельность Нжде в Зангезуре в 1919–1921 гг. удостоилась высокой оценки в результате объективного научного анализа с позиций национально-освободительного движения. Именно благодаря его преданности национальным интересам, полководческому таланту и вдохновляющему красноречию Зангезур избежал трагической участи Арцаха и был сохранен в составе Армении, несмотря на откровенные посягательства руководства Советского Азербайджана, пантюркистские устремления кемалистской Турции и прокемалистскую политику Советской России, преследовавшей цели распространения кемалистского движения на страны мусульманского Востока для «достижения победы мировой социалистической революции». Но и в этой исключительно сложной военно-политической обстановке Г. Нжде со свойственной ему энергией и последовательностью сумел в кратчайшие сроки сформировать не только боеспособные вооруженные силы, но и политическую структуру провозглашенной путем свободного волеизъявления народа Сюника Республики Горная Армения и возглавил ее правительство.

Документы допросов Нжде в 1944–1948 гг., ныне хранящиеся в архиве МВД и НБ РА, убедительно доказывают, что так называемый «национализм» Нжде не имеет ничего общего с шовинизмом. В своей теоретической и практической деятельности Нжде не стремился к установлению господства своего народа над другими, а лишь защищал его честь и достоинство, его исконные территории от посягательств врага. Даже в разгар боевых действий в Зангезуре Нжде требовал от своих солдат цивилизованного отношения к туркам и кавказским татарам. Он всю жизнь сражался не против турецкого народа, а против его империи, являвшейся заклятым врагом как армянского народа, так и русского государства. Неприятие Нжде советской власти объяснялось как стремлением Советской России к установлению союзнических отношений с кемалистской Турцией, даже жертвуя интересами армянского народа, так и происками обосновавшихся в Баку лидеров младотурок и перекрасившихся в красный цвет и возглавивших Советский Азербайджан мусаватистских лидеров. Нжде не знал о секретной инструкции Ревкома Советского Азербайджана, оформленной в виде двух телеграмм за подписью члена Ревкома Караева, хранящихся в партийном архиве ИМЛ (ф. 64, оп. 1, ед. хр. 10, лл. 8, 10), в которых указывалось: «Оставьте человеколюбие. Этим нельзя создавать государство, завоевывать страны, жить в мире... С целью ослабления армян убейте одного русского воина и обвините в этом армян. Знаете, что сделают русские. Не оставляйте в Зангезуре ни порядочного человека, ни богатства, чтобы это проклятое племя не могло подняться более на ноги», и предписывалось обезглавить крестьянство Зангезура, вырезав армянскую интеллигенцию. Но Нжде было известно о том, что в Баку из турецких аскеров и офицеров фор-

мируются специальные батальоны в красноармейской форме для отправки в Зангезур и присоединения этой древней области Армении к Азербайджану.

Лишь последовательная миролюбивая политика нового Председателя СНК АрмССР А. Мясникяна при посредничестве духовного пастыря армян Атрпатакана архиепископа Нерсеса, благосклонно воспринятая крестьянством Сюника, составлявшим основу армии обороны Горной Армении, и заслужившая одобрение и доверие со стороны Нжде, положила конец братоубийственной войне в Зангезуре. Нжде, получив твердые гарантии от правительства Советской Армении в том, что Зангезур является неотъемлемой частью республики и не будет насильственным образом присоединен к Азербайджану и что по отношению к участникам обороны Зангезура не будут применяться репрессии, отдал приказ без боя сдать удерживаемые территории армянским и русским войскам, но оказать вооруженное сопротивление турецким частям и мусаватистским бандам в случае их попытки захвата Сюника.

Приговоренный Особым Совещанием СССР к 25-летнему тюремному заключению, Нжде справедливо указывал на то, что он еще в 1921 г. был амнистирован Декретом СНК Советской Армении, что в свое время оказал большую услугу советской власти, сковав в Зангезуре почти 95 % вооруженных сил мусаватистов, тем самым обеспечив вступление Красной армии в Баку практически без сопротивления.

Благодарные потомки всегда будут помнить имя организатора и руководителя обороны Зангезура, рыцаря национально-освободительной борьбы армянского народа, профессионального военного и интеллектуала Гарегина Нжде, всю свою жизнь посвятившего беззаветному служению интересам родного народа, своей нации—государству.

## ДРЕВНЕЙШИЕ ИСТОРИЧЕСКИЕ СВИДЕТЕЛЬСТВА ОБ АРМЯНСКИХ ВОИНАХ

*А. А. ТЕРЬЯН*

РЕЗЮМЕ

Сохранилось мало источников о древнейшем периоде истории армянского народа. В основном это свидетельства иноземных властителей, согласно которым почти все сильные государства древнего мира пытались захватить Армянское нагорье, однако встречали упорное и организованное сопротивление. Древние армяне (в источниках—хайасцы, митаннийцы, наирийцы, урарты) были опытными воинами. Поскольку Армения являлась одним из древнейших центров обработки металлов (IV тысячелетие до н. э.) и одомашнения лошади (VI тысячелетие до н. э.), следовательно, армяне были вооружены металлическим оружием, имели конницу и боевые колесницы, что несомненно способствовало их успеху в сражениях.

На основании древнейших письменных свидетельств и наскальных изображений можно утверждать, что боевые порядки армянских войск в основном состояли из пехоты, кавалерии и боевых колесниц. Древние армяне большое внимание уделяли вопросам военной подготовки и воспитания молодежи. Были организованы специальные тренировочные базы, где старшие делились своим боевым опытом с молодежью.

Армянских воинов ценили даже враги. Все соседние государи с готов-

ностью брали их к себе на службу. В частности, у одного из хеттских царей в качестве пехотинцев и колесничих служили 3000 воинов-армян.

Древнейшее хеттское письменное свидетельство о походе в Хайасу (Хайаса—Аззи) принадлежит Мурсили II (1340—1320 гг. до н. э.). Хеттский царь сообщает, что он внезапно напал на Хайасу и одержал победу в сражении. Однако успех длился недолго, так как армяне перегруппировали силы и заставили противника покинуть пределы своей страны. Тутхалия с огромной армией вновь вторгся в пределы Хайасы. Главное сражение произошло на берегу Евфрата близ города Куммаха (Коммагена). По всей вероятности, хеттам не удалось одержать решающую победу, поскольку они в дальнейшем продолжали совершать новые походы в Армению.

В середине II тысячелетия до н. э. за господство в западных районах Малой Азии и на восточном побережье Средиземного моря вступили в борьбу Древний Египет и образовавшееся на юге Армянского нагорья царство Хурри-Митанни. Убедившись в том, что оба государства по силам почти равны, они заключили мир, по которому северная Сирия отошла к Митанни, а южная Сирия и Палестина—к Египту.

С конца II тысячелетия начался новый период противостояния на Ближнем Востоке—между Ассирией и Урарту. Эти беспрерывные войны привели в конце концов к падению обоих государств. Причем во взятии столицы ассирийского государства Ниневии наряду с мидийцами и вавилонянами участвовали и армянские войска под предводительством Паруйра.

В лидийском и вавилонском походах Кира Великого (550—529 гг. до н. э.) по свидетельству греческого полководца и историка Ксенофонта участвовали армянская конница и пехота. Ими предводительствовали Тигран (впоследствии—царь Армении Тигран I) и полководец Эмбас.

О двух армянских полководцах—Дадаршисе и Арахе—упоминает в своей знаменитой Бехистунской надписи ахеменидский царь Дарий I (522—486 гг. до н. э.). В частности, Араха возглавил антиперсидское восстание в Вавилоне и даже провозгласил себя царем.

Армянские отряды участвовали в греко-персидских войнах (IV—III вв. до н. э.), преимущественно в составе персидских войск. Армянская пехота и конница под командованием Ерванда и Михрвахишта приняли участие в сражении при Гавгамелах. Причем правое крыло, где занимали позиции армяне, продолжало сражаться в то время, как Дарий III и остальная его армия в беспорядке бежали. Армяне, организованно отступив, вернулись на родину и спустя некоторое время восстановили ее независимость.

Особенно значительные успехи армянских войск в постурартский период отмечены в царствование Тиграна II Великого (95—55 гг. до н. э.), когда Великая Армения расширила свои границы до Сирии, Палестины и Египта. Особо следует отметить образное выражение о воинах Тиграна «отца армянской истории» Мовсеса Хоренаци (V век): «Храбрец стал во главе храбрецов и сотворил чудеса».

Образ наделенного лучшими качествами армянского воина лег в основу известной фразы Вергилия: «Аракс мостов не терпит». Она означает, что армян невозможно покорить, и принадлежит к числу откровений, наилучшим образом характеризующих непобедимый боевой дух армян, который продолжает в них жить и по сегодняшний день.

# MILITARY HISTORY

## ZANGEZOURIAN EPOPEE OF GAREGIN NZHDEH

*V. A. MOURADIAN, Lieutenant Colonel (ret.) of Guards, Doctor of Historical Sciences, Honorary Scientist of the Republic of Armenia*

SUMMARY

Garegin Nzhdeh is an outstanding figure of the national-liberation struggle of the Armenian people in the period of the newest history. However he was not properly appreciated at his true value during the soviet regime.

Only with the beginning of the Karabakh movement the activity of Nzhdeh in Zangezour of 1919—1921 was highly appreciated thanks to the objective scientific analysis from positions of national-liberation movement. Just because of his devotion to national interests, talent of commander and inspiring eloquence Zangezour has avoided the fate of Artsakh and was preserved in the complement of Armenia, despite unconcealed encroachments of the government of the Soviet Azerbaijan, panturkic aspirations of Kemalistic Turkey and prokemalistic policy of the Soviet Russia, which had a purpose to spread Kemalistic movement to countries of Mussulman East for «achieving a victory of the world socialist revolution». Even under these extremely complex military-political conditions G. Nzhdeh, using peculiar to him energy and sequence has managed to generate combat-effective armed forces, as well as political structure of the Republic of Mountainous Armenia in the shortest terms proclaimed by a free will of the people of Sunik, and has headed its government.

The reports of the interrogation of Nzhdeh in 1944—1948, which are now stored in the archives of the Ministry of Interior and National Security of the RA, convincingly prove, that so-called «nationalism» of Nzhdeh has nothing in common with chauvinism. In his theoretical and practical activity Nzhdeh did not aspire to an establishment of domination of his nation over the others, and only protected its honour and dignity, its original territory from encroachments of the enemy. Even in the heat of combat actions in Zangezour, Nzhdeh demanded the soldiers to show civilized attitude to Turks and Caucasian Tatars. All his life he battled not against the Turkish people, but against Turkish Empire, which was the sworn enemy of the Armenian nation as well as of Russia. The enmity of Nzhdeh to the soviet authority was explained, by aspiration of Soviet Russia to establish allied relations with Kemalistic Turkey, endowing interests of the Armenian people, as well as by intrigues of the leaders of Mladoturks settled in Baku and Mousavat leaders recolored in red and heading Soviet Azerbaijan. Nzhdeh was not aware of the confidential instruction of Revcom of the Soviet Azerbaijan, written in two telegrams signed by the member of Revcom Karaev, stored in the Party archive of the Institute of Marxism and Leninism (st. 64, op. 1, pp. 8, 10), in which the following was specified: «Leave the philantrophy. This cannot help to create the state, to conquer the countries, to live in peace... In order to weaken Armenians kill one Russian soldier and accuse of it Armenians... Russians will do the rest... Do not leave in Zangezour either respectable person, or riches, that this damned tribe could not rise anymore to its feet». More over it was recommended to decapitate peasantry of Zangezour, slaughtering Armenian intelligentsia. But Nzhdeh had the information that special battalions were formed from Turkish askears and officers wearing Red Army uniforms to be sent to Zangezour and to connect this ancient area of Armenia to Azerbaijan.

Only the consecutive peaceful policy of the new Chairman of the Council of People Committee of the Armenian Soviet Socialist Republic A. Miasnikian by mediation of the religious pastor of the Armenians of Atrpatakan Archbishop Nerses, favourably perceived by the peasantry of Sunik, the core of the Defense Army of the Mountainous Armenia, and approved and trusted by Nzhdeh, has stoped the cruel war in Zangezour. Nzhdeh receiving firm guarantees from the government of the Soviet Armenia that Zangezour was an integral part of the republic and would not be violently joined to Azerbaijan and no participants of the defense of Zangezour would be subject to repression, had given the order to withdraw the Armenian and Russian troops from the fortified areas, but to render armed resistance to Turkish units and Mousavat gangs in case of their attempt to capture Sunik.

Nzhdeh, who was sentenced by the Special Meeting of the USSR to the 25 years of imprisonment, fairly specified, that he was amnestied by the Decree of the SovNarCom of the Soviet Armenia in 1921, that in the past he made the Soviet authority a favor by holding down in Zangezour almost 95 % of the armed forces of Mousavatists, and thus, ensuring the capture of Baku by the Red Army practically without any resistance.

Grateful descendants will always remember a name of the organizer and the chief of defense of Zangezour, knight of national-liberation struggle of the Armenian people, professional military man and intellectual Garegin Nzhdeh, who devoted all his life to selfless service in favor of the interests of the native people and the nation-state.

## THE MOST ANCIENT HISTORICAL EVIDENCES ABOUT ARMENIAN WARRIORS

*A. A. TERYAN*

SUMMARY

Few sources were kept about the most ancient period of a history of the Armenian people. Mainly those are the evidences of the foreign sovereigns, according to which almost all strong states of the ancient world tried to capture Armenian Highland. However they faced persistent and organized resistance. Ancient Armenians (referred to as Hayassians, Mitannians, Nairians, Urartians in the sources) were experienced warriors. As Armenia is a native land of processing of metals (IV millennium BC) and one of the most ancient territories of domestication of the horse (VI millennium BC), Armenians were armed by the metal weapon, had cavalry and battle chariots, that undoubtedly promoted their success in battles.

On the basis of the most ancient written evidences and rock paintings it is possible to assert, that the battle orders of the Armenian troops mainly consisted of infantry, cavalry and battle chariots. Ancient Armenians paid large attention to military preparation and training of the youth. Special training bases were organized, where seniors shared their combat experience with the youth.

Even the enemies appreciated Armenian warriors. All neighbor sovereigns were hiring Armenian warriors for service with readiness. In particular, one of the Hettitian kings used 3000 Armenian warriors as infantry and chariot men.

The most ancient Hettitian written evidence on a campaign to Hayassa

(Hayassa—Azzi) belongs to Mursilis II (1340—1320 BC). Hettitian king informed, that he suddenly invaded Hayassa and had gained a victory in the battle. However the success was not long, because Armenians regrouped forces and forced the enemy to fall back from the country. Tutkhalia III with huge army has again invaded Hayassa. The main battle has taken place on a coast of Euphrates close to city Kummah (Commagene). Most certainly, Hettitians could not gain a decisive victory, as they hereinafter continued to make new campaigns to Armenia.

In the middle of II millennium BC Ancient Egypt and formed in the South of Armenian Highland Hurry-Mouritani Empire have entered into struggle for domination in Western regions of Asia Minor and on East coast of the Mediterranean sea. When both states realized that both had almost equal forces, they made a peace, hence Northern Syria was passed to Mitanni and Southern Syria and Palestine to Egypt.

A new period of resistance between Assyria and Urartu started at the end of the II millennium in the Middle East. These extensive wars have caused the fall of both states. Along with Midians and Babylonians, Armenian troops, commanded by Paruir, also participated in the capture of Nineveh, the Assyrian capital.

In Lidian and Babylonian campaigns of Kir the Great (550—529 BC) according to the evidence of a greek commander and historian Xenophon, Armenian cavalry and infantry took part. The commander of Armenian troops was Tigran (later king of Armenia Tigran the First) and commander Embas.

Two Armenian commanders—Dadarshis and Arakhe—of Achaemenidian king Dareh I are mentioned in the famous Behistunian inscription (522—486 BC). In particular, Arakha has headed antipersian rebellion in Babylon and even has proclaimed himself as a king.

Armenian groups participated in greek-persian wars (IV—III centuries BC), mainly in the complement of Persian troops. Armenian infantry and cavalry under the command of Ervand and Mikhrvakhishta have participated in the battle at Gaugamel. And the right flank, where the positions of Armenians were located, continued fighting while Dareh III and the rest of army fell back in panic. Armenians, receding in organized manner, had returned homeland and some time later had restored their independence.

Especially the significant successes of Armenian troops in posturartian period were marked during a reign of Tigran II the Great (95—55 BC), when Great Armenia has expanded the borders up to Syria, Palestine and Egypt. It is necessary to note a figurative expression of «the father of the Armenian history»—Movses Khorenatsi (V century)—about the warriors of Tigran: «The brave has led the braves and has worked wonders».

Image of an Armenian warrior showered with the best qualities was the basis of a known phrase of Vergilius: «Arax does not stand bridges». It means, that it is impossible to subdue Armenians. This phrase is one of the revelations describing in the best way invincible combat spirit of Armenians, which is active till now.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ*

*Ն. Ի. ՏՈՒՐԿՈ, գեներալ-մայոր, ռազմագիտության դոկտոր, Ռազմական գիտությունների ակադեմիայի (ք. Մոսկվա) փոխնախագահ,*
*Ս. Ա. ՄՈԴԵՍՏՈՎ, գնդապետ, ռազմագիտության թեկնածու*

Պետության գոյության ու զարգացման անվտանգության ապահովումը կարևորագույն ազգային նպատակն է և նրա վարած ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական խնդիրը:

Արդի աշխարհաքաղաքականությանը բնորոշ է անվտանգության ապահովման մեթոդների ու եղանակների լայն ընդգրկույթը. ազգային շահերի պաշտպանության ուժային մեթոդները ինտեգրվում են տնտեսական, սոցիալ-քաղաքական, տեղեկութային և այլ մեթոդների հետ: Պետության անվտանգությունը ճիշտ չէր լինի դիտարկել միայն մեկ երկրի սահմաններում, այն միտում ունի զարգանալու և վերածվելու փոխադարձ և համընդհանուր անվտանգության:

Ամենաընդհանուր ձևով պետության անվտանգությունը կարելի է բնութագրել մի շարք պայմանների, նախադրյալների և հնարավորությունների միջոցով, որոնք ապահովում են պետության կայուն, դինամիկ զարգացումը (*զարգացումը գլխավոր ազգային շահն է*), նրա ունակությունը՝ չեզոքացնելու ստեղծվող արտաքին ու ներքին սպառնալիքները և գործելու իր ազգային կամ կենսականորեն կարևոր շահերին համապատասխան:

Չեզոքացնել և գործել. այս գործընթացները ենթադրում են ուժի առկայություն: Իսկ որտեղի՞ց է այդ ուժը, ինչո՞վ է որոշվում պետության ուժը և ինչպե՞ս կարելի է այն չափել, ինչպե՞ս պետք է գնահատել նրա բավարարությունը պետության առաջընթացի համար: Այս հարցերի պատասխանը նպատակահարմար է որոնել ազգային և միջազգային անվտանգության ապահովման աշխարհաքաղաքական տեսանկյունների ոլորտում:

Որոշակի հասարակական իրողությունների բացատրության համար աշխարհաքաղաքականությանը դիմելը ընդհանուր առմամբ նորություն չէ: Սակայն ներկայիս պայմաններում դա ձեռք է բերում հատուկ նշանակություն, ինչը պայմանավորված է մի շարք պատճառներով:

Նախ՝ թեև աշխարհաքաղաքականության սկզբունքների ըմբռնումը դրանց սկզբնական մեկնաբանությամբ նույնպես տեղի է ունեցել մեր ժամանակներից շատ առաջ, սակայն դրանց գիտական իմաստավորումը կատարվում է հենց այժմ: Դրա պատճառն են այն խոր վերափոխումները, որ տեղի են ունենում բուն իսկ օբյեկտիվ աշխարհում, որը մի շարք ուղղություններով իր առանձին մասերի, տարածաշրջանների տարանջատված վիճակից անցնում է միասնական, փոխկապակցված ու փոխադարձ կախվածությամբ աշխարհի վիճակին:

Երկրորդ՝ պետությունների համընդհանուր փոխադարձ կախվածությունը, նրանց ինտեգրումը անհնարին են դարձնում անվտանգության դիտարկումը միայն մեկ պետության սահմաններում: Այն պետք է դիտարկել միջազգային, իսկ հեռանկարում՝ նաև համընդհանուր անվտանգության տեսանկյունից՝ հաշվի առնելով պետությունների ուժերի հաշվեկշռի և շահերի հաշվեկշռի մեխանիզմները, որոնցով կանխորոշվում է ռազմավարական կայունությունը համընդհանուր ու տարածաշրջանային մասշտաբներով:

* Հոդվածը աննշան կրճատումներով հրապարակվում է քննարկման կարգով: *Խմբ.:*

## 1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Առաջ անվտանգության ապահովման պրոբլեմի քննարկման ժամանակ, որպես կանոն, առավել մեծ ուշադրություն էր դարձվում աշխարհագրական պարամետրների հետազոտմանը: Սակայն աշխարհաքաղաքականության տեսանկյունից աշխարհագրական պարամետրների անջատ դիտարկումը և վերլուծությունը քիչ բան են տալիս պետության քաղաքականության վրա դրանց ներգործության վերլուծման և հաշվառման համար: Այն աշխարհագրական պարամետրների թվին, որոնք աշխարհաքաղաքագիտության ուսումնասիրման մշտական առարկան են, դասվում են, նախ և առաջ, տարածքի մեծությունը և դիրքի առանձնահատկությունները, պետական սահմանի ընդհանուր երկարությունը և բնույթը, կլիման, տեղանքի ռելիեֆը, բնակչությունը, կենդանական ու բուսական աշխարհը, ջրաբանական առանձնահատկությունները: Պետության համար աշխարհաքաղաքական հաստատուններ կարող են լինել, մասնավորապես, մեծ տարածքը, օգտակար հանածոների կգալի պաշարները՝ ներառյալ էներգետիկական ռեսուրսները, արդյունավետ հողագործության համար սահմանափակ տարածքը, բնակչության մեծ թիվը, երկրի կազմի մեջ մտնող տարածքների ազգային բազմազանությունը, ելքը դեպի օվկիանոս, եվրասիական աշխարհագրական դիրքը և այլն: Աշխարհաքաղաքագիտությունը հետազոտում է նաև այլ՝ սակավ կայուն, աշխարհագրական պարամետրներ, ինչպես՝ պետության պատմական առանձնահատկությունները, այդ թվում և կրոնական հարաբերությունները, հասարակական-քաղաքական վարչակարգը, քաղաքական և սոցիալական կառույցները և մի շարք այլ պարամետրներ: Թվարկված պարամետրներից յուրաքանչյուրն առանձին վերցված այլ բան չէ, քան այն աշխարհագրական պարամետրներից մեկը, որոնք հետազոտում է ֆիզիկական, տնտեսական կամ քաղաքական աշխարհագրությունը: Պաշտպանության ոլորտում նույնպես դրանց անջատ դիտարկումը չի հանգեցնում ինքնատիպ և ճիշտ եզրակացությունների:

Որպես օրինակ դիտարկենք պետության զինված ուժերի թվաքանակի որոշումն ըստ նրա տարածքի չափերի և բնակչության թվի: ԶՈՒ-ի թվաքանակի և երկրի տարածքի, ինչպես նաև բնակչության թվի միջև միարժեք կախում չի նկատվում: Այսպես՝ Կանադայում տարածքի 1 հազ. քառ. կմ-ին ընկնում է 6 զինծառայող, ԱՄՆ-ում՝ 230, Իսրայելում՝ 10 հազար մարդ: Եթե հիմք ընդունենք կանադական գործակիցը, ապա ՌԴ ԶՈՒ-ում պետք է ծառայի 100 հազար մարդ, իսկ ամերիկյան գործակցով՝ 3,4 մլն. մարդ:

Երկրի բնակչության թվի համեմատ տարբեր պետությունների ԶՈՒ-ի թվաքանակներն իրարից տարբերվում են մինչև 40 անգամ: Հնդկաստանում ԶՈՒ-ի թվաքանակը կազմում է բնակչության ընդհանուր թվի 0,15 %-ը, իսկ Իրաքում՝ 5,3 %-ը: Բնակչության առավելագույն ռազմականացում է նկատվում Իրաքում, Սիրիայում, Հյուսիսային Կորեայում, Իսրայելում և Հունաստանում, նվազագույն՝ Հնդկաստանում, Կանադայում, Չինաստանում և Ճապոնիայում: Եթե հիմք ընդունենք բնակչության թվից ԶՈՒ-ի թվաքանակի կախման միջին բերված գործակիցը, ապա ՌԴ ԶՈՒ-ում պետք է ծառայեր 1,4 մլն. մարդ, ամերիկյան գործակցի դեպքում՝ 1,3 մլն. մարդ, միջին եվրոպական գործակցի դեպքում՝ մինչև 1 մլն. մարդ: Ի՞նչ եզրահանգում կարելի է անել այստեղ: **Պետք է առաջին հերթին հիմնվել զինված ուժերի վրա դրված խնդիրների վրա, իսկ միջին վիճակագրական գործակիցները պետք է հաշվի առնվեն միայն որպես սահմանափակող չափանիշներ:**

Հարց է ծագում. իսկ գուցե պաշտպանության և ազգային անվտանգության հարցերը լուծելիս սկզբունքորեն պետք չէ՞ աշխարհաքաղաքականության օգնությունը:

Բերենք մի օրինակ **միջպետական հարաբերությունների ժամանակակից պրակտիկայից:**

Ինչպես հայտնի է, ըստ մի կարևորագույն աշխարհաքաղաքական օրինաչափության պատմության մեջ մշտական և հիմնական աշխարհաքաղաքական գործընթացներից մեկը մայրցամաքային, սպառազինության կրճատման վերաբերյալ ՌՀԱ-2 պայմանագիրը: Դժվար թե կարելի լինի ընդունել երկու պետությունների ռազմավարական ուժերի նույնական կառուցվածքի հնարավորու-

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԼԻՑՔԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՄՆ-Ի ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՐՐՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ)

| Ներկայումս | | | | Ըստ ՌՀԱ-2* պայմանագրի | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ռուսաստան | | ԱՄՆ | | Ռուսաստան և ԱՄՆ | | |
| ՌՆՀՋ | 60 | ՄԲՀ | 24 | ՌՆՀՋ | ՄԲՀ | 17 |
| ԾՌՄՈՒ | 30 | ԲՀԱՄ | 53 | ԾՌՄՈՒ | ԲՀԱՄ | 53 |
| ԱՌՄՈՒ | 10 | ՌԱ | 23 | ԱՌՄՈՒ | ՌԱ | 30 |

մաքային տերությունների պայքարն է կղզիական, ծովային պետությունների դեմ: Այդ պայքարի էությունը ցամաքային և ծովային (օվկիանոսային) մեծ տարածքների՝ ցամաքիշխանության (հզորություն ցամաքում) և ծովիշխանության (հզորություն ծովում) պատմականորեն շարունակական դիմակայությունն է, շահերի հակադրությունը: Այս շարունակական դիմակայությունը իր ազդեցությունն է գործել պետությունների ռազմավարական ուժերի կարգավորման վրա: Այն իր արտացոլումն է գտել մասնավորապես ԽՍՀՄ (Ռուսաստանի) և ԱՄՆ-ի ռազմավարական ուժերի կառուցվածքների միջև գոյություն ունեցող անհամաչափության մեջ: ԱՄՆ-ն ավանդաբար հենվում է առաջին հերթին ծովային ռազմավարական ուժերի վրա, մինչդեռ ԽՍՀՄ-ը շեշտը դնում էր հիմնականում ցամաքային ուժերի վրա (տես աղյուսակը):

Այժմ դիտարկենք ռազմավարական թյան հիմնավորումները, ինչպես դա բխում է ձեռք բերված պայմանավորվածությունների բովանդակությունից, քանի որ Ռուսաստանի և ԱՄՆ-ի աշխարհառազմավարական վիճակները տարբեր են: Ռուսաստանն ստիպված կլինի գնալ իր ռազմավարական ուժերի լրիվ վերակառուցման երկար ու թանկ նստող ուղիով, մինչդեռ ԱՄՆ-ը կարող է անձեռնմխելի պահել իր «եռրորդության» կառուցվածքը՝ ներառյալ դրա այն բաղադրատարրերը, որոնցում ինքը տեխնոլոգիական առավելություն ունի:

Գործողության գլոբալ հեռավորության միջոցների խիստ կրճատման դեպքում կարող է դարձյալ մեծանալ Ռուսաստանի և ԱՄՆ-ի աշխարհառազմավարական անհամաչափության նշանակությունը:

Հարկ է նշել, որ 40—50-ական թվականներին ամերիկյան տարածքը գործնականում անհասանելի էր միջուկային ցենքի համար, քանի որ ԽՍՀՄ-ը չուներ բալիստիկ հրթիռներ: Միևնույն ժամանակ մեր երկիրը կարող էր ենթարկվել ԱՄՆ-ի առաջավոր բազավորման միջուկային ուժերի հարվածին: Կանխատեսվող շրջանում ԱՄՆ-ը սովորական սպառազինության մեջ կունենա բավարար քանակությամբ գերճշգրիտ ցենք:

ԱՄՆ-ի և Ռուսաստանի աշխարհա-

* Այստեղ ընդունված հապավումներն են. ՌՀՄ՝ ռազմավարական հարձակողական սպառազինություն, ՌՆՀՋ՝ ռազմավարական նախանշանակման հրթիռային զորքեր, ՄԲՀ՝ միջմայրցամաքային բալիստիկ հրթիռներ, ԾՌՄՈՒ՝ ծովային ռազմավարական միջուկային ուժեր, ԲՀԱՄ՝ բալիստիկ հրթիռներով ատոմային սուզանավեր, ԱՌՄՈՒ՝ ավիացիոն ռազմավարական միջուկային ուժեր, ՌԱ՝ ռազմավարական ավիացիա: *Խմբ.:*

ռազմավարական վիճակներում առկա անհամաչափությունն է՛լ ավելի նշանակալից է մարտավարական միջուկային զենքի (ՄՄԶ) օպերատիվ-ռազմավարական նախանշանակման հարցում: Եթե ՆԱՏՕ-ի անդամ եվրոպական պետությունների տարածքներում և դեռ ավելին՝ այդ ռազմաքաղաքական բլոկում մերձբալթյան հանրապետությունների ընդգրկման դեպքում՝ Ռուսաստանի պետական սահմանին անմիջականորեն մոտ տեղաբաշխված ամերիկյան ՄՄԶ-ն կարող է պատերազմի ժամանակ կիրառվել ռազմավարական խնդիրների լուծման նպատակով, ապա ռուսաստանյան ՄՄԶ-ն ունի սահմանափակ տարածաշրջանային կիրառություն:

Հետևաբար, **ՌԴՄ կրճատման հետ համաժամանակորեն պետք է կատարվի սովորական սպառազինությունում գերճշգրիտ ռազմավարական զենքի, մարտավարական հրթիռների, ընդհանուր նախանշանակման ուժերի կրճատում**:

Բերենք ևս մի օրինակ, այս անգամ՝ **պետությունների պաշտպանական քաղաքականության ոլորտից**:

Ինչպես հայտնի է, 80-ական թվականների սկզբներին ավարտվեց ի շահ ազգային անվտանգության ապահովման ԱՄՆ-ի վարած տիեզերական քաղաքականության ձևավորումը: Այդ քաղաքականության հիմքում դրված է մի գաղափար, որը բացահայտ կերպով և առավելագույնս հստակությամբ ձևակերպվել էր «իրատեսական սպառնալիքի» ռազմավարության շրջանակներում դեռևս 70-ական թվականների կեսերին: Այդ գաղափարի էությունն այն է, որ *ռազմական գործողությունները չպետք է առընչվեն ԱՄՆ-ի ազգային տարածքի հետ:* Ազգային անվտանգության այս գաղափարը ձևակերպվել էր ՌԳԹ-ում պատերազմի (միջուկային և սովորական) հայեցակարգի ձևով. ապագա պատերազմի ծանրության կենտրոնը պետք է տեղափոխվի այլ պետությունների տարածք, բացառված չէ անգամ դաշնակից պետության տարածքը: Հե՞շտ էր արդյոք ԱՄՆ-ի համար ընդունել նման որոշում, և որքա՞ն այն նստեց ՆԱՏՕ-ի երկրների վրա:

Արտասահմանյան մամուլի տվյալներով, ըստ նյութական միջոցների բացառման ՆԱՏՕ-ում հաստատված նորմերի, մարտական գործողությունների մեկ շուրջօրվա ընթացքում մոտ անցյալում պետք կլիներ տեղափոխել մոտ 370 հազար տոննա ռազմական բեռներ, այդ թվում՝ 150 հազար տոննա վառելիք, 220 հազար տոննա փինամթերք, պարեն, սպառազինություն և տեխնիկա: Եվրոպա տնտեսական բեռների տեղափոխման պահանջարկը կազմում է օրական մոտ 960 հազար տոննա, այդ թվում՝ ավելի քան 550 հազար տոննա վառելաքանյութեր:

Մարտական գործողությունների վարման ժամանակ զինված ուժերի և տնտեսության այս պահանջմունքը բավարարելու համար Արևմտյան Եվրոպայի նավահանգիստներ պետք է ժամանեին օրական մոտ 70 նավ, այդ թվում՝ մինչև 7 **մեծատոննաժ հեղուկանավ**:

Պատերազմի առաջին ամսվա ընթացքում Ատլանտիկայում՝ Եվրոպա չըվերթ կատարելիս, միաժամանակ պետք է գտնվեին մինչև 12 պահականավախումբ (մոտ 570 նավ) և 60 առանձին նավ: Պատերազմի առաջին ամսվա ընթացքում Եվրոպա պետք է ժամաներ մոտ 27 պահականավախումբ (մինչև 1300 նավ), դրանցից 7-ը՝ զորքերով և տեխնիկայով, 8-ը՝ զորքերի մատակարարման բեռներով, 12-ը՝ տնտեսական բեռներով:

Նախատեսվում էր, որ պատերազմի առաջին ամսվա ընթացքում Ամերիկայից Եվրոպա կտեղափոխվի 10 դիվիզիա, այդ թվում 6-ը՝ անդրօվկիանոսային օդային ուղիներով և 4-ը՝ օվկիանոսային ուղիներով ու համալրված եղանակով, և մինչև 15 առանձին զորամասեր:

Ահա նշված որոշման ռազմավարական գինը: Այնուամենայնիվ այն ընդունվեց: Ըստ երևույթին, այն ըմբռնումով ընդունվեց նաև Վարշավյան պայմանագրի կազմակերպության (ՎՊԿ) երկրների կողմից, քանի որ որոշակի չափով այն արդարացված էր աշխարհա-

ռազմավարական առումով. ԽՍՀՄ ԶՈՒ-ի առաջավոր խմբավորումները, որոնք կազմում էին առաջին ռազմավարական շարանակարգի առաջին օպերատիվ շարանակարգը, տեղաբաշխված էին ազգային տարածքից դուրս և գտնվում էին Կենտրոնական Եվրոպայում:

Հետագայում ԱՄՆ-ի պաշտպանական քաղաքականության այն հիմնարար գաղափարը, որ ռազմական գործողությունները չպետք է առնչվեն ազգային տարածքի հետ, վերափոխվում է տիեզերական ոլորտում պինված պայքարի հայեցակարգի. չէ՞ որ տիեզերքը ազգային սահմաններ չունի: Պետության պաշտպանության և անվտանգության ապահովման նկատմամբ ԱՄՆ-ի մոտեցումների հիմնավորությունը և ժառանգորդումը հիմք են տալիս ենթադրելու, որ կիրառվեն բալիստիկ հրթիռների հարվածից ազգային տարածքի պաշտպանության համար տիեզերական բազավորման տարրերով օժտված հակահրթիռային պաշտպանության բազմաշարան համակարգի, այն է՝ «աստղային պատերազմները» նյութականացնող համակարգի ստեղծման պլանները: Տիեզերքում ԱՄՆ-ի առաջնությունը կապահովի այլ պետությունների հետպահումն այնպիսի քաղաքական և ռազմավարական որոշումներից և գործողություններից, որոնք կհակասեն ԱՄՆ-ի շահերին: **Ահա թե ինչու ՌՀՍ-2 պայմանագրի վավերացման ժամանակ անհրաժեշտ է հստակորեն ձևակերպել Ռուսաստանի պահանջը հակահրթիռային պաշտպանության (ՀՀՊ) մասին 1972 թ. պայմանագրի պահպանման վերաբերյալ:**

Բերենք ևս մի օրինակ, այս անգամ՝ **կայսրությունների պատմությունից**:

Ինչպես հայտնի է, տնտեսությունը խաղաղ վիճակից ռազմական վիճակի փոխադրելու դեպքում ներքին համախառն արտադրանքի (ՆՀԱ) միայն մի որոշակի՝ 40-42 %-ից ոչ ավելի, մասը կարող է մոբիլիզացվել ռազմական պա-



ՀՀ և ՌԴ Պաշտպանության նախարարներ Վ. Սարգսյանը և Պ. Գրաչովը ստորագրում են ՀՀ-ի և ՌԴ-ի միջև ռազմական համագործակցության մասին պայմանագիրը. Երևան, 1996 թ.
Министры обороны РА и РФ В. Саркисян и П. Грачев подписывают договор о военном сотрудничестве между РА и РФ. Ереван, 1996 г.
Ministers of Defense of the RA and RF V. Sargsyan and P. Grachev are signing the agreement on military cooperation between the RA and the RF. Yerevan, 1996

հանջմունքների բավարարման համար: Մնացած մասն անհրաժեշտ է հասարակության կենսականորեն կարևոր պահանջմունքների բավարարման, վերարտադրության ապահովման, ապագայում երկրի տնտեսության վերականգնման ու հետագա զարգացման նախադրյալների ստեղծման համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում Մեծ Բրիտանիայում հասան տնտեսության մոբիլիզացման գերբարձր (ավելի քան 60 %) մակարդակի: Հնարավոր է, որ մայր ցամաքում ֆաշիստական Գերմանիայի ձեռք բերած հաջողությունները և երկրի բավական խոցելի աշխարհաքաղաքական դրությունում շրջափակման սպառնալիքը ստիպեցին Լոնդոնին դիմելու նման միջոցների: Սակայն փաստը մնում է փաստ. Բրիտանական Կայսրության ուժերը քամվեցին, նրան հասցվեց անվերականգնելի կորուստ: Դրա հետևանքը եղավ այն, որ կայսրությունը փլուզվեց:

Այս համատեքստում գործնական հետաքրքրություն է ներկայացնում ի հաշիվ արևելաեվրոպական պետությունների ՆԱՏՕ-ի ընդարձակման հնարավորության և այդ քայլի հետևանքների գնահատումը:

Տեսնենք, թե ինչ ռազմատեխնիկատնտեսական ներուժ ունեն Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրները: Հնարավոր թեկնածուների, այն է՝ «Վիշեգրադյան խմբի» երկրների՝ Լեհաստանի, Չեխիայի, Սլովակիայի և Հունգարիայի տնտեսական հնարավորություններն զգալի չափով զիջում են բլոկի առաջատար պետությունների կարողություններին և համեմատելի են միայն ՆԱՏՕ-ի հետնապահ Թուրքիայի ցուցանիշների հետ. Սլովակիայում ՆՀԱ-ն հավասար է 12,85 մլրդ. դոլարի, Չեխիայում՝ 36,04, Հունգարիայում՝ 40,99, Լեհաստանում՝ 91,5, Գերմանիայում՝ 1834 և Թուրքիայում՝ 170,2 մլրդ. դոլարի:

Թուրքիան, ունենալով, օրինակ, Լեհաստանի համեմատությամբ համարյա երկու անգամ ավելի ՆՀԱ, պաշտպանության վրա ծախսում է մոտ 3 անգամ ավելի ֆինանսական միջոցներ, որպեսզի կատարի ՆԱՏՕ-ում սահմանված պահանջները (տեղեկատվական կարգով բերենք հետևյալ տվյալները. պաշտպանության վրա կատարվող ծախսերի բաժինը ՆՀԱ-ից, տոկոսներով և մլրդ. դոլարներով հաշված, համապատասխանաբար, Սլովակիայի համար կազմում է 2,4 և 0,31, Չեխիայի համար՝ 2,65 և 0,96, Հունգարիայի համար՝ 1,7 և 0,69, Լեհաստանի համար՝ 2,5 և 2,3, Գերմանիայի համար՝ 1,6 և 29,09, Թուրքիայի համար՝ 4,2 և 7.09): «Վիշեգրադյան խմբի» երկրների մեկ պինծառայողի վրա կատարվող ծախսերը, որպես միության մեջ մտնելու պատրաստության ընդհանուր ցուցանիշ, պետք է աճեն 6–10 անգամ, որպեսզի այդ երկրներն ըստ այդ ցուցանիշի մոտենան ՆԱՏՕ-ի ստանդարտներին:

Լեհաստանի ռազմական բյուջեն ընթացիկ տարում նախորդ տարվա համեմատ աճել է 24 %-ով և կազմել է 3,34 մլրդ. դոլար: Այս միտումը պետք է պահպանվի հինգ տարի: Ըստ երևույթին, այս ուղին «Վիշեգրադյան խմբի» երկրների ազգային տնտեսության համար լավագույնը չէ: Ինչպես ցույց է տալիս պատմությունը, անգամ ամենակայուն տնտեսությունը չի դիմանում պաշտպանության վրա կատարվող ծախսերի աճման այսպիսի տեմպերին:

Անհրաժեշտ են պայմաններ, որպեսզի գլոբալ և տարածաշրջանային մասշտաբներով պետության «ուժերի հաշվեկշռի» և «շահերի հաշվեկշռի» մեխանիզմների միջոցով իրացվի պետական գործունեության համակցվածությունը ի շահ պաշտպանության և ազգային անվտանգության:

Այժմ վերցնենք աշխարհագրական պարամետրների մի այլ համակցություն՝ տարածքի մակերեսը և բնակչության թիվը, ավելի ճիշտ՝ պետության այն տարածքի մակերեսը, որն ընկնում է մեկ մարդուն: Այդ թիվը նշանակենք Մ-ով («մակերես» բառի սկզբնատառով): Այն երկրները, որոնց Մ ցուցանիշի արժեքն էապես փոքր է աշխարհում միջին արժեքից, դրսևորում են միտում դեպի դրա

մեծացումը, որին կարելի է հասնել բնակչության թվի նվազեցմամբ կամ զբաղեցվող տարածքի մակերեսի մեծացմամբ: Բնակչության թվի պահպանման կամ աճման դեպքում Մ ցուցանիշի մեծացման միակ եղանակն է զբաղեցվող տարածքի մակերեսի մեծացումը, որը կարող է տեղի ունենալ ի հաշիվ այլ երկրի՝ կա՛մ բռնի ճանապարհով, կա՛մ համաձայնությամբ: Իսկ այն երկրները, որոնց Մ-ի արժեքը էապես մեծ է աշխարհում միջին արժեքից, իրենց տարածքը պաշտպանելու համար պետք է շատ միջոցներ ծախսեն պինված ուժերի վրա, հատկապես եթե նրանց հարևանն է մի երկիր, որի Մ-ի արժեքը էապես փոքր է աշխարհում միջին արժեքից և որն ունի մեծաքանակ բնակչություն:

Եվ այնուամենայնիվ Չինաստանը, որի մեկ բնակչին ընկնում է երեք անգամ ավելի քիչ մակերես, քան աշխարհում միջին արժեքն է, ապահովում է երկրի ավելի քան մեկ միլիարդ բնակչության կյանքը: Այս առումով ավելի հատկանշական է Հնդկաստանի օրինակը. այստեղ յուրաքանչյուր բնակչին միջինից վեց անգամ քիչ մակերես է ընկնում:

Հետաքրքրական է նաև տվյալ ցուցանիշի հիման վրա կատարել պետությունների խմբերի համեմատական գնահատում ըստ մշակույթի տիպերի (քաղաքակրթությունների, եթե նկատի առնենք մի քաղաքագետի հայտնի արտահայտությունը, թե ապագա պատերազմի բնույթը կորոշվի քաղաքակրթությունների պայքարով*): Հաշվարկները ցույց են տալիս, որ արևմտյան տիպի մշակույթ ունեցող երկրների բնակչության թիվը հավասար է 1890,7 միլիոնի, իսկ արևելյան տիպի մշակույթով՝ 3533,6 միլիոնի: Երկրների առաջին խմբում յուրաքանչյուր բնակչին երկրորդ խմբի մեկ բնակչի համեմատությամբ ընկնում է 3,28 անգամ ավելի տարածք, 3,15 անգամ ավելի տարեկան սպառվող սկզբնային էներգիա և 6,0 անգամ ավելի տարեկան սպառվող կենցաղային էլեկտրաէներգիա (տարեկան սպառվող էներգիայի մակարդակը անուղղակի կերպով արտացոլում է տնտեսության զարգացման ընդհանուր մակարդակը և հիմնականում դրսևորվում է ներքին համախառն արտադրանքի մեծության մեջ, իսկ սպառվող կենցաղային էներգիայի մակարդակը լավ է բնութագրում բնակչության կենսամակարդակը):

Կատարված գնահատումները ցույց են տալիս, որ աշխարհում աշխարհաքաղաքական իրավիճակի զարգացման հաշվարկային տարբերակների մեծամասնությունում արևմտյան բլոկի ներուժը գերազանցում է արևելյան բլոկի ներուժը: Եվ միայն այն դեպքում, երբ արևելյան բլոկի երկրների ընդհանուր զբաղեցրած տարածքը մեծանա 5 %-ով, սպառվող սկզբնային էլեկտրաէներգիայի ծավալը՝ 25 %-ով և կենցաղային էլեկտրաէներգիայի ծավալը՝ 15 %-ով, արևելյան բլոկի ներուժը կգերազանցի արևմտյանը:

Կատարենք գիտափորձ. հակադրության մեջ դնենք երկու կարևորագույն աշխարհագրական պարամետրներ՝ ազգությունը և տարածքը: Ապացուցենք, որ ազգատարածքային պահանջներն ու հակամարտությունները ռեալ սպառնալիք են պետության անվտանգության համար:

Նախքան ապացուցումը կատարենք որոշ հետահայաց վերլուծություն:

1918 թ. ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնը փորձեց պետությունների միջև փոխհարաբերությունները կառուցել ազգության սկզբունքի հիման վրա, այսինքն՝ այն բանի հիման վրա, որ յուրաքանչյուր ազգային հանրույթ, որքան էլ այն փոքր լինի, ունենա պետականության հավակնելու իրավունք: Հետևանքը հայտնի է՝ գերմանական ազգամոլության վերածնունդ:

Համաշխարհային համակարգի պատասխան հակազդումը տեղի ունեցավ 1945 թ.: ԱՄՆ-ի նախագահ Ռուզվելտն առաջարկեց ՄԱԿ-ն ստեղծել սահմանների անխախտելիության սկզբունքի հի-

* Այս արտահայտությունը պատկանում է Հանտինգտոնին (*Huntington,* Clash of Civilizations), այս մասին տես նաև *Ռ. Փիտերս*, Ապագա հակամարտությունների կուլտուրան: «ՀԲ», 1996, հմ. 3-4: *Խմբ.:*

ման վրա: Այդ սկզբունքը փոքրամասնություններին առաջարկում էր կյանքը քարշ տալ օտարազգի պետությունների կազմում: Բայց այն համապատասխանում էր «սառը պատերազմի» հետ կապված աշխարհաքաղաքական կարգին. երկու գերտերություններ, յուրաքանչ-անխախտելիության, կամ «արյան» և «հողի», սկզբունքները, մտան սուր հակադրության մեջ՝ դառնալով տարածաշրջանային հակամարտությունների և տեղային պատերազմների պայթուցիչներ:

Բերված օրինակներն ընդհանուր առմամբ հիմք են տալիս պնդելու, որ աշ-



ՆԱՏO-ի «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի իրագործման խնդիրներին նվիրված 2-րդ տարածաշրջանային սեմինարում ՀՀ ԶՈՒ-ի ներկայացուցիչներին (փոխգնդապետ Մ. Մելքոնյան, մայոր Հ. Քոչարյան) ողջունում է ՆԱՏO-ի միացյալ ԶՈՒ-ի հարավ-արևելյան թևի ցամաքային զորքերի հրամանատար բանակի գեներալ Հ. Օզքյոքը (Թուրքիա). Իզմիր, 1997 թ. նոյեմբեր
Командующий сухопутными войсками юго-восточного фланга объединенных ВС НАТО генерал армии Х. Озкек (Турция) приветствует представителей ВС РА (подполковник М. Мелконян, майор Г. Кочарян) на 2-м региональном семинаре, посвященном задачам осуществления Программы НАТО «Партнерство во имя мира». Измир, ноябрь 1997 г.
Commander of the Land Forces of the south-eastern flank of the Allied Armed Forces of NATO Army General H. Ozkek (Turkey) is greeting the representatives of the AF of the RA (Lieutenant Colonel M. Melkonyan, Major H. Kocharyan) at the 2-nd regional seminar aimed at the implementation of the tasks of the NATO «Partnership for Peace» program. Izmir, November, 1997

յուրն իր ճամբարում, պարտադրում էին գաղափարախոսական կարգապահություն, այն դեպքում, երբ միջուկային կենքը սառեցնում էր տարածքային եղած վիճակը (ստատուս-քվոն), ինչպես նաև և՛ աշխարհի, և՛ Եվրոպայի բաժանումը երկու բլոկի (ճամբարի):

Արդի աշխարհաքաղաքականության առանձնահատկությունն այն է, որ պետական կառուցման հիմնարար սկզբունքները՝ ազգության և սահմանների խարհագրական պարամետրերը պետք է դիտարկել միայն համակցության մեջ՝ դրանք ներառելով միջպետական հարաբերությունների և պետական քաղաքականության, այդ թվում և ռազմական բնագավառում, ձևավորման մեխանիզմների մեջ: Այդ դեպքում դրանք հանդես կգան որպես աշխարհաքաղաքական գործոններ:

*Աշխարհաքաղաքական գործոն ասելով հասկացվում է այն աշխարհագրա-*

*կան պարամետրների ռացիոնալ համակցությունը, որոնք կազմում են պետության (պետությունների դաշնադրության)՝ որպես աշխարհաքաղաքական սուբյեկտի ռեսուրսների առկա համախմբի հիմքը, զարգացման կոնկրետ պատմական շրջանի համար ձևավորվող կենսականորեն կարևոր շահերի համակարգի միջոցով որոշիչ ազդեցություն են գործում գլոբալ (տարածաշրջանային, տեղային) գործընթացում այդ պետության տեղի վրա, շահերի իրացման համար պայմանների ապահովման վրա՝ ներառյալ աշխարհաքաղաքականության այլ սուբյեկտների կողմից ստեղծվող սպառնալիքների չեզոքացումը:*

Անմիջապես անենք հետևյալ վերապահումը. ռեսուրս ասելով այստեղ հասկացվում են ոչ միայն բնական հարստությունները, այլև տեխնոլոգիաները, ինչպես նաև ֆինանսական և մտավոր ռեսուրսները:

Ժամանակակից աշխարհաքաղաքագետները պնդում են, որ յուրաքանչյուր աշխարհաքաղաքական սուբյեկտի համար ներքնապես բնորոշ է այլ աշխարհաքաղաքական սուբյեկտների հետ փոխներգործման ընթացքում հակվածությունը դեպի զարգացման իր ռեսուրսների այս կամ այն յուրահատուկ կազմակերպվածքը: Ընդամին ռեսուրսների այդ յուրահատուկ կազմակերպվածքը, որն ի սկզբանե տրվում է աշխարհաքաղաքական սուբյեկտի առաջացման ժամանակ և արտացոլում է նրա առավել կարևոր հատկանիշների և գծերի համակցությունը, պայմանավորում է սուբյեկտի գործողությունների բնականոն կերպով ձևավորվող ուղղվածությունը:

***Պետության զարգացման և նրա անվտանգության ապահովման ռեսուրսների ամբողջ համակցության*** *համակարգային գնահատումը ենթադրում է դրանց հնարավոր անհաշվեկշռվածության կամ գերլարվածության բացահայտում:* Հասկանալի է, որ այդ գերլարվածության արդյունք կարող է լինել խոր համակարգային ճգնաժամը, որը կպահանջի երկրատև վերականգնում: Բացառված չէ, որ տնօրինվող ռեսուրսների գերլարվածությունը ամենայն հավանականությամբ հանգեցնի պետության վերափոխման, քանի որ պահպանել նրան հին ձևով արդեն հնարավոր չի լինի *(վերստեղծել ԽՍՀՄ-ը արդեն ո՛չ ոքի չի հաջողվի):*

Աշխարհաքաղաքական սուբյեկտի ռեսուրսների «ռացիոնալ համակցությունները» կարող են լինել տարբեր՝ կախված քննարկվող աշխարհաքաղաքական գործընթացների մակարդակից: Ուստի մենք իրավունք ունենք աշխարհաքաղաքական գործոնների մասին խոսելու հոգնակի թվով, նույնիսկ եթե դրանք կիրառված են մեկ պետության նկատմամբ, լինի դա Բելառուսը, Լեհաստանը, թե Ռուսաստանը:

Աշխարհաքաղաքական գործոնների արտահայտումը սուբյեկտների ռեսուրսների միջոցով լիովին համապատասխանում է այսօրվա իրողություններին, երբ առկա ռեսուրսների ծախսը գերազանցում է դրանց ծայր աստիճան անհավասարաչափ բաշխման պայմանում նոր ռեսուրսների ձևավորումը, ինչը սպառնացնում է իրավիճակը ինչպես առանձին երկրներում, այնպես էլ ամբողջությամբ վերցված աշխարհում. ուժեղանում է հարուստների և աղքատների տարբաժանման բևեռացումը, խորանում է բնական միջավայրի վատթարացումը, կենսոլորտում կարգանում են անշրջելի բացասական գործընթացները:

Կա այն կարծիքը, որ արդի աշխարհում «մեծ տերության» կարգավիճակը առավել հավանական է, որ որոշվի պետության կարողությամբ՝ կարգանալու, առաջատար լինելու գիտության գերակա ոլորտներում, տեղեկութաքանության ու տեխնոլոգիաների բնագավառներում և սպառվող ապրանքների, ծառայությունների, մշակույթի միջոցով ներգործելու ամբողջ աշխարհում միլիոնավոր մարդկանց առօրյա կյանքի վրա:

Սակայն ո՛չ տեխնոլոգիական զարգացման բարձր մակարդակը, ինչպես, օրինակ, Հարավային Կորեայում է, ո՛չ հասարակության սոցիալ-տնտեսական բարգավաճումը, ինչպես, ասենք, Դանիայում

կամ Շվեդիայում է, ո՛չ էլ հսկայական ֆինանսական միջոցները, ինչպես Արաբական Միացյալ Էմիրություններում է, այդ պետություններին չեն դարձնում մեծ տերություն, եթե դրա համար չկան աշխարհաքաղաքական հիմքեր:

Հենց *հարուստ բնական ռեսուրսներով ընդարձակ տարածքը և մեծաթիվ բնակչությունը, որոնք ստեղծում են սեփական քաղաքակրթությունը և պետության ինտելեկտուալ, ներառյալ և ռազմական, ներուժը և որոնք կազմում են այդ պետության ռեսուրսների համակցության հիմքը*, դառնում են պետության հզորության մի յուրահատուկ շտեմարան: ***Աշխարհագրական պարամետրերի այդ համակցությունը, որը*** թեև ոչ բավարար, բայց անհրաժեշտ ***պայման է, որ պետությունը դառնա աշխարհաքաղաքական բևեռ,*** որին կձգտեն և որի շուրջ կխմբվեն այլ ժողովուրդներ ու երկրներ, ***կարող է համարվել պետության՝ որպես աշխարհաքաղաքական սուբյեկտի աշխարհաքաղաքական գործոն:***

Այն երկիրը (կամ երկրների խումբը), որի ներուժը փոքր չէ երկրների ցանկացած այլ խմբի ներուժից, կոչվում է **աշխարհաքաղաքական բևեռ**:

Տեղեկատվության կարգով նշենք հետևյալը: Վերջերս միասնական մայրուղի դարձված մի երկաթուղի, որը կապում է Չինաստանը, Ղազախստանը, Ուզբեկստանը, Թուրքմենիան, Իրանը և Թուրքիան, ունի ցածր թողունակություն, բավարար չափով յուրացված չէ և անցնում է քաղաքական առումով անկայուն շրջաններով: Բացի այդ, այս նոր «Մեծ մետաքսե ուղին» անցնում է շատ երկրների տարածքներով, ինչը էապես դժվարացնում է նրա շահագործումը և բեռների տարանցման պայմանների համաձայնեցումը: Իսկ Ռուսաստանը վերահսկում է եվրատլանտյան և ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանները միացնող ավելի հուսալի ցամաքային ուղին՝ Անդրսիբիրյան երկաթուղին: Կառուցված է նաև նրան կրկնակող ԲԱՄ-ը: Հնարավոր է նաև հյուսիսային երկաթուղու կառուցումը մինչև Բերինգի նեղուց, թեև հանուն արդարության պետք է նշել, որ նման նախագծի տնտեսական և բնապահպանական առումները պետք է ենթարկվեն ամենախիստ փորձաքննության:

Խորհրդային երկաթուղին տեղափոխում էր համաշխարհային մասշտաբով բեռների կեսը և ուղևորների մեկ քառորդ մասը:

Ռուսաստանյան ավտոճանապարհային ցանցի ընդհանուր երկարությունը համեմատելի է ամերիկյան ցանցի երկարության հետ՝ 1036 և 1358 հազ. կմ՝ համապատասխանաբար: Համապատասխան կապիտալ ներդրումների դեպքում դա կարող է հիմք դառնալ միջմայրցամաքային ավտոուղիների շինարարության համար:

Ռուսաստանը ժառանգել է ԽՍՀՄ ծովային առևտրական նավատորմի 57 %-ը և այժմ աշխարհում գրավում է երկրորդ տեղը նավերի թվով և չորրորդը՝ տոննաժով:

Ռուսաստանն ունի մայրուղային խողովակատարներ, որոնց երկարությունը 210 հազ կմ է: Խողովակատար տրանսպորտը կատարում է երկրում ընդհանուր բեռնափոխադրման 52,5 %-ը: Համեմատության համար ասենք, որ ԱՄՆ-ում այդ թիվը հավասար է 16,1 %-ի, Ֆրանսիայում՝ 4,4 %-ի, Չինաստանում՝ 2 %-ի: Ռուսաստանին են պատկանում աշխարհի նավթի կանխատեսվող պաշարների 13 %-ը, գազի՝ 42 %-ը և ածուխի՝ 43 %-ը: Ռուսաստանում կատարվում է աշխարհի նավթահանման 11 %-ը, գազի՝ 28 %-ը, ածուխի՝ 14 %-ը: Ռուսաստանը լրիվ ապահովված է էներգառեսուրսներով, մինչդեռ Ճապոնիան օգտվում է արտասահմանյան էներգառեսուրսներից 82 %-ի, Գերմանիան և Ֆրանսիան՝ 50-52 %-ի, իսկ ԱՄՆ-ը՝ 23 %-ի չափով:

ԽՍՀՄ միասնական էներգահամակարգը կարող է հիմք դառնալ Եվրոպայի և ասիախաղաղօվկիանոսյան տարածաշրջանի (ԱԽՏ) միասնական էներգահամակարգի ստեղծման համար:

Հարկ է հաշվի առնել նաև Ռուսաստանում համեմատաբար լավ զարգացած օդանավակայանային ցանցի առկայությունը. 6 միջազգային, 130 դաշնային և 3000 տեղական օդանավակայաններ:

Իր աշխարհագրական դիրքի բերումով Ռուսաստանը եզակի հնարավորություններ է տալիս կապի վրագետնյա ու ուղեծրային միջոցների զարգացման համար:

Ռուսաստանի բացվածությունը պետք է ծառայի ռազմավարական կայունության և միջազգային անվտանգության գործին:

Ռեսուրսների այն ռազիոնալ համակցությունը, որն իրացվում է երկրի ազգային կամ կենսականորեն կարևոր շահերի համակարգում, պայմանավորում է պետության կողմից իր ամբողջականությունը և ինքնիշխանությունը հուսալիորեն երաշխավորող համարժեք ռազմական ջանքերի գործադրմամ անհրաժեշտությունը: Ինքնիշխան պետությունը չպետք է իր անվտանգությունը վերավստահի որևէ արտաքին ուժի՝

լինի դա այլ պետությունների ազգային կառույց, թե միջազգային ռազմաքաղաքական հաստատություն: Այս թեզի ճշտությունը հաստատվում է ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինտոնի հետևյալ հայտարարությամբ. «Ես երբեք չեմ վստահի ԱՄՆ-ի անվտանգությունը ՄԱԿ-ին կամ ցանկացած այլ միջազգային կազմակերպության: Մենք երբեք չենք հրաժարվի մենակ գործելու մեր իրավունքից, երբ քարտի վրա դրված լինեն մեր շահերը: **Այս դարաշրջանում մեր նշանաբանը պետք է լինի. միասին՝ երբ կարող ենք, մենք ինքներս՝ երբ պարտավոր ենք**»:

*(Շարունակությունը հաջորդ համարում)*

# ВОЕННАЯ ПОЛИТИКА

## МЕХАНИЗМЫ СОВРЕМЕННОЙ ГЕОПОЛИТИКИ*

*Н. И. ТУРКО, генерал-майор, доктор военных наук, вице-президент Академии военных наук (г. Москва), С. А. МОДЕСТОВ, полковник, кандидат военных наук*

Обеспечение безопасности существования и развития государства является важнейшей национальной целью и приоритетной задачей его внутренней и внешней политики.

Для современной геополитики характерен большой спектр методов и способов обеспечения безопасности: силовые методы защиты национальных интересов интегрируются с экономическими, социально-политическими, информационными и другими методами. Безопасность государства некорректно уже рассматривать в границах лишь одной страны, она имеет тенденцию развития к взаимной и всеобщей безопасности.

В самом общем представлении безопасность государства можно характеризовать рядом условий, предпосылок и возможностей, обеспечивающих устойчивое, динамичное развитие государства (*развитие—это главный национальный интерес*), его способность нейтрализовать возникающие внешние и внутренние угрозы и действовать в соответствии со своими национальными или жизненно важными интересами.

Нейтрализовать и действовать—все эти процессы предполагают наличие силы. Откуда эта сила, чем предопределяется сила государства и чем она может быть измерена, как оценить ее достаточность для прогрессивного развития государства? Ответ на поставленные вопросы целесообразно искать в сфере геополитических аспектов обеспечения национальной и международной безопасности.

Само по себе обращение к геополитике не ново. Однако в современных условиях оно приобретает особое значение, что объясняется рядом причин.

Во-первых, хотя понимание основ геополитики в их изначальном толковании также произошло задолго до нашего времени, их научное осмысление происходит именно сейчас. Объяснение тому—глубокие изменения в самом объективном мире, по ряду направлений переходящем от состояния разрозненности своих отдельных частей и регионов к единому, взаимосвязанному и взаимозависимому миру.

* Статья с незначительными сокращениями публикуется в порядке обсуждения. *Ред.*

Во-вторых, глобальная взаимозависимость, интеграция государств делают невозможным рассмотрение проблемы безопасности в границах только одного государства. Ее следует рассматривать с точки зрения международной, а в перспективе—и глобальной безопасности, выходя на механизмы «баланса сил» и «баланса интересов» государств, предопределяющих стратегическую стабильность в глобальном и региональном масштабах.

## 1. ГЕОПОЛИТИЧЕСКИЕ ФАКТОРЫ БЕЗОПАСНОСТИ ГОСУДАРСТВА

Ранее при рассмотрении проблем обеспечения безопасности больше внимания уделялось, как правило, исследованию географических параметров. Однако с точки зрения геополитики раздельное рассмотрение и анализ геопараметров мало что дают для анализа и учета их влияния на политику государства. К геопараметрам, постоянно являющимся предметом геополитики, прежде всего, относятся размеры и особенности положения территории, протяженность и характер государственной границы, климат, рельеф местности, население, флора и фауна, гидрологические особенности. Геополитическими константами для государства могут быть, в частности, большая территория, значительные запасы полезных ископаемых, включая энергетические ресурсы, ограниченная территория для эффективного земледелия, большое количество населения, этническое многообразие входящих в его состав территорий, выход в бассейн океанов, евразийское географическое положение и т. п. Геополитика исследует и менее стабильные геопараметры, такие как исторические особенности государства, в том числе конфессиональные отношения, общественно-политический строй, политические и социальные структуры и ряд других. Каждый из перечисленных параметров в отдельности представляет собой не более чем геопараметр, являющийся предметом исследования географии—физической, экономической или политической. В оборонной сфере их раздельное рассмотрение также не выводит на оригинальные и корректные решения.

Обратимся в качестве примера к определению численности вооруженных сил государства, исходя из размеров его территории и численности населения. Однозначной зависимости между численностью ВС и площадью территории, а также численностью населения страны не прослеживается. Так, в Канаде на 1 тыс. квадратных километров территории приходится 6 военнослужащих, в США—230, в Израиле—10 тыс. человек. Если ориентироваться на канадский коэффициент, то в ВС РФ должно быть 100 тыс. человек, а по американскому коэффициенту—3,4 млн. человек.

Относительно населения страны различие в численности ВС составляет до 40 раз. В Индии численность ВС составляет 0,15 % от общего числа населения, а в Ираке—5,3 %. Наибольшая милитаризация населения наблюдается в Ираке, Сирии, Северной Корее, Израиле и Греции, наименьшая—в Индии, Канаде, Китае и Японии. Если ориентироваться на средний приведенный коэффициент зависимости численности ВС от численности населения, то ВС РФ должны иметь 1,4 млн. человек, на американский коэффициент—1,3 млн. человек, на среднеевропейский—до 1 млн. человек. Какой здесь можно сделать вывод? —**Ориентироваться необходимо прежде всего на возложенные на вооруженные силы задачи, а среднестатистические коэффициенты долж-**

**ны учитываться лишь в качестве ограничивающих.**

Возникает вопрос: может, не стоит в принципе обращаться к геополитике при решении вопросов обороны и национальной безопасности?

Практика обеспечения национальной безопасности и межгосударственных отношений подтверждает актуальность решения проблем обороны и безопасности государства через призму геополитики.

Приведем пример **из современной практики межгосударçтвенных отношений.**

Как известно, согласно одной из важнейших геополитических закономерностей в истории постоянным и одним из основных геополитических процессов является борьба континентальных, сухопутных держав против островных, морских государств. Ее суть—в противоположности интересов и исторически перманентном противостоянии континентальных и морских (океанских) больших пространств—теллурократии (могущество на суше) и талассократии (могущество на море). Это перманентное противостояние наложило отпечаток на специфику развития стратегических сил государств. Оно находит свое отражение в существующей асимметрии между структурами стратегических сил СССР (России) и США. В то время как США традиционно опираются прежде всего на стратегические силы морского базирования, СССР делал акцент в основном на силы наземного базирования (см. таблицу).

РАСПРЕДЕЛЕНИЕ ЯДЕРНЫХ ЗАРЯДОВ
В СТРАТЕГИЧЕСКОЙ ТРИАДЕ РОССИИ И США (%)

| В настоящее время | | | | Согласно договору СНВ-2* | | |
|---|---|---|---|---|---|---|
| Россия | | США | | Россия и США | | |
| РВСН | 60 | МБР | 24 | РВСН | МБР | 17 |
| МСЯС | 30 | ПЛАРБ | 53 | МСЯС | ПЛАРБ | 53 |
| АСЯС | 10 | СА | 23 | АСЯС | СА | 30 |

А теперь обратимся к договору о сокращении стратегических вооружений СНВ-2. Вряд ли можно считать корректными обоснования допустимости идентичной структуры стратегических сил обоих государств, как это следует из содержания достигнутых договоренностей, ибо геостратегическое положение России и США различно. Россия вынуждена будет идти по дорогостоящему и длительному пути полной перестройки структуры своих стратегических сил, тогда как США смогут сохранить структуру своей «триады» в неприкосновенности, включая те ее компоненты, где они располагают технологическими преимуществами.

В случае глубоких сокращений средств глобальной дальности действий может вновь усилиться значение геостратегической асимметричности положения России и США.

* Здесь использованы следующие сокращения: СНВ—стратегические наступательные вооружения, РВСН—ракетные войска стратегического назначения, МБР—межконтинентальные баллистические ракеты, МСЯС—морские стратегические ядерные силы, ПЛАРБ—атомные подводные лодки с баллистическими ракетами на борту, АСЯС—авиационные стратегические ядерные силы, СА—стратегическая авиация. *Ред.*

Надо отметить, что в 40—50-х годах американская территория была фактически недосягаема для ядерного оружия из-за отсутствия у СССР баллистических ракет. В то же время наша страна могла быть подвергнута действиям ядерных сил передового базирования США. В прогнозируемый период США будут располагать достаточным арсеналом высокоточного стратегического оружия в обычном оснащении.

Еще большее значение асимметрии в геостратегическом положении США и России проявляется в оперативно-стратегическом предназначении тактического ядерного оружия (ТЯО). Если американское ТЯО, размещенное на территории европейских государств-членов НАТО, и более того—в непосредственной близости от государственной границы России в случае вступления в этот военно-политический блок прибалтийских стран, может быть использовано в ходе войны для решения стратегических задач, то российское ТЯО имеет ограниченное региональное применение.

Следовательно, **синхронно с сокращением СНВ должно осуществляться сокращение высокоточного стратегического оружия в обычном оснащении, тактических ракет, сил общего назначения.**

Приведем еще один пример, на сей раз **из практики оборонной политики государств.**

Как известно, в начале 80-х годов завершилось формирование космической политики США в интересах обеспечения национальной безопасности. В ее основу положена идея, открыто и наиболее четко сформулированная еще в середине семидесятых годов в рамках стратегии «реалистического устрашения», суть которой—*военные действия не должны затрагивать национальную территорию США*. Данная идея национальной безопасности была оформлена в виде концепции войны (ядерной и обычной) на театре военных действий—центр тяжести будущей войны должен быть перенесен на территорию других государств, не исключая территорию союзников. Простое ли это было решение для США? Во что оно обошлось странам НАТО?

По данным зарубежной печати в соответствии с установленными в НАТО нормами потребления материальных средств за сутки боевых действий было бы необходимо ежедневно доставлять около 370 тыс. тонн воинских грузов, в том числе 150 тыс. тонн горючего, 220 тыс. тонн боеприпасов, продовольствия, вооружения и техники. Потребности в поставках в Европу экономических грузов составляют около 960 тыс. тонн, в том числе ГСМ—более 550 тыс. тонн в сутки.

Для обеспечения этих потребностей вооруженных сил и экономики при ведении военных действий в порты Западной Европы должно ежесуточно прибывать около 70 судов, в том числе—до 7 крупнотоннажных танкеров.

В течение первого месяца войны в Атлантике на переходе в Европу одновременно должно было бы находиться до 12 конвоев (около 570 судов) и 60 одиночных судов. В этот же период в Европу должно было бы прибыть 27 конвоев (до 1300 судов), из них 7—с войсками и техникой, 8—с грузами снабжения войск, 12—с экономическими грузами.

В первый месяц войны из США в Европу предполагалась переброска 10 дивизий, в том числе 6—по воздушным трансокеанским коммуникациям и 4—океанским и комбинированным способом, до 15 отдельных частей.

Вот стратегическая цена решения. И все же оно было принято. Видимо с пониманием оно было воспринято и странами Организации Варшавского Договора (ОВД)—в определенной мере оно было оправдано в геостратегическом плане: передовые группировки ВС СССР, составлявшие первый оперативный эшелон первого стратегического эшелона, были развернуты вне национальной территории и находились в Центральной Европе.

В последующем основополагающая идея оборонной политики США о том, что военные действия не должны затрагивать национальную территорию, трансформируется в концепцию вооруженной борьбы в космической сфере—космос ведь не имеет национальных границ. Фундаментальность и преемственность подходов США к обеспечению обороны и безопасности государства дают основание предположить, что планы создания многоэшелонной системы противоракетной обороны с элементами космического базирования для защиты национальной территории от ударов баллистических ракет—системы, материализующей «звездные войны»,—будут реализованы. Лидерство США в космосе обеспечит сдерживание других государств от политических и военно-стратегических решений и действий, противоречащих американским интересам. **Вот почему при ратификации договора по СНВ-2 должны быть четко оговорены требования России по сохранению Договора по ПРО 1972 г.**



Ֆրանսիայի, Ռուսաստանի և Գերմանիայի ղեկավարների հանդիպումը՝ կապված Եվրոպական անվտանգության հարցերի հետ: Ձախից աջ՝ Ֆրանսիայի նախագահ Ժ. Շիրակ, ՌԴ նախագահ Բ. Ելցին, Գերմանիայի վարչապետ Հ. Կոլ. Մոսկվա, 1998 թ. մարտի 26:
Встреча руководителей Франции, России и Германии по вопросам европейской безопасности. Слева направо: президент Франции Ж. Ширак, президент РФ Б. Ельцин, канцлер Германии Г. Коль. Москва, 26 марта 1998 г.
Meeting of the leaders of France, Russia and Germany related to the issues on European Security. From left: President of France J. Chirak, President of the RF B. Eltsin, Chancellor of Germany H. Kohl. Moscow, 26 March, 1998

Рассмотрим еще один пример— **из истории империй.**

Как известно, при переводе экономики с мирного на военное положение лишь определенная часть внутреннего валового продукта (ВВП)— не более 40 – 42 %—может быть мобилизована на военные нужды. Остальная часть необходима для удовлетворения жизненно важных потребностей общества, обеспечения воспроизводства, создания предпосылок для будущего восстановления экономики страны и ее последующего роста.

В период второй мировой войны в Великобритании был достигнут сверхвысокий уровень мобилизации экономики (свыше 60 %). Возможно, успехи фашистской Германии на континенте и угроза блокады в весьма уязвимом геополитическом положении страны заставили Лондон пойти на такие меры. Однако факт остается фактом: силы Британской империи были подорваны, ей был нанесен невосполнимый урон. Следствием этого и стало крушение империи.

В этом контексте представляют практический интерес оценки возможности расширения НАТО за счет восточноевропейских государств и их последствия.

Обратимся к военно-технико-экономическому потенциалу стран Центральной и Восточной Европы. По своим экономическим возможностям потенциальные кандидаты— страны «вышеградской группы»— Польша, Чехия, Словакия и Венгрия—значительно уступают ведущим государствам блока и сопоставимы только с аутсайдером НАТО— Турцией. Внутренний валовой продукт (в млрд. дол.) составляет: 12,85 у Словакии, 36,04 у Чехии, 40,99 у Венгрии, 91,5 у Польши, 1834 у Германии, 170,2 у Турции.

Последняя, имея почти вдвое больший по сравнению, например, с Польшей ВВП, тратит на оборону втрое больше финансовых средств, чтобы выполнить установленные в НАТО требования (справочно: доля расходов на оборону в процентах от ВВП и в долларовом исчислении составляет: 2,4 % и 0,31 млрд. дол. у Словакии; 2,65 % и 0,96 млрд. дол. у Чехии; 1,7 % и 0,69 млрд. дол. у Венгрии; 2,5 % и 2,3 млрд. дол. у Польши; 1,6 % и 29,09 млрд. дол. у Германии; 4,2 % и 7,09 млрд. дол. у Турции). Затраты на содержание одного военнослужащего стран «вышеградской группы», как интегральный показатель готовности к вступлению в альянс, должны возрасти в 6 – 10 раз, чтобы приблизиться к натовским стандартам.

Военный бюджет Польши в текущем году вырос по сравнению с прошлым годом на 24 % и составил 3,34 млрд. дол. Эта тенденция должна сохраняться в течение пяти лет. Видимо, такой путь для национальных экономик стран «вышеградской группы» не самый рациональный. Даже самая устойчивая экономика, как показывает история, не выдерживает таких темпов роста расходов на оборону.

Необходимы условия для реализации синергизма государственной деятельности в интересах обороны и национальной безопасности через механизмы «баланса сил» и «баланса интересов» государств в глобальном и региональном масштабах.

Возьмем далее совокупность геопараметров—площадь территории и численность населения, а точнее— площадь территории государства, приходящуюся на одного человека,— обозначим ее П. Страны со значением показателя П, существенно меньшим среднемирового, проявляют тенденцию к его увеличению, что может быть достигнуто уменьшением численности населения или уве-

личением площади занимаемой территории. При сохранении численности населения или при ее увеличении единственным способом увеличения показателя П является увеличение площади занимаемой территории, что может быть достигнуто за счет другой страны либо насильственным путем, либо по соглашению. Страны же со значением показателя П значительно выше среднемирового должны много средств тратить на вооруженные силы для обороны своей территории, особенно если по соседству находится страна со значением П, существенно меньшим среднемирового, и большим населением.

Но тем не менее Китай, имея на одного человека в три раза меньше территории, чем в среднем по планете, обеспечивает жизнь более чем миллиардному населению своей страны. Индия в этом отношении еще более показательна: на одного человека здесь приходится территории в 6 раз меньше средней величины.

Небезынтересно провести сопоставительную оценку по данному показателю группы государств по типу культур (цивилизациям, имея ввиду известное высказывание политолога о том, что характер будущей войны будет предопределен борьбой цивилизаций*). Расчеты показывают, что население стран с западным типом культуры составляет 1890,7 млн. человек, с восточным—3533,6 млн. человек. На одного человека из первой группы стран приходится в 3,28 раз больше территории, в 3,15 раз больше потребляемой первичной энергии в год, в 6,00 раз больше потребляемой бытовой электроэнергии в год. (Уровень потребляемой энергии в год косвенно отражает общий уровень развития экономики и в основном проявляется в величине внутреннего валового продукта, а уровень потребляемой бытовой энергии хорошо отражает жизненный уровень населения.)

Проведенные оценки показывают, что в большинстве рассчетных вариантов развития геополитической ситуации в мире потенциал Западного блока превышает потенциал Восточного блока. И только при увеличении общей занимаемой площади стран Восточного блока на 5 %, объема потребляемой первичной электроэнергии на 25 % и объема бытовой электроэнергии на 15 % произойдет превышение потенциала Восточного блока.

Проведем научный эксперимент: введем в противоречие два важнейших геопараметра—национальность и территорию. Докажем, что национально-территориальные притязания и конфликты—реальная угроза безопасности государства.

Предпошлем доказательству небольшой ретроспективный анализ.

В 1918 г. президент США Вильсон попытался организовать взаимоотношения между государствами вокруг принципа национальности, т. е. права, признаваемого за каждым национальным сообществом, каким бы малым оно ни было, претендовать на государственность. Итог известен—возрождение германского национализма.

Ответная реакция мировой системы последовала в 1945 году. Президент США Рузвельт предлагает создать ООН на основе другого принципа—принципа незыблемости границ. Этот принцип предлагал меньшинствам влачить свое существование внутри инородных государств. Но он отвечал геополитическому порядку, связанному с «холодной войной»: две

* Это высказывание принадлежит Хантингтону (*Huntington*, Clash of Civilizations), см. также *Р. Питерс*. Культура будущих конфликтов. «АБ», 1996, № 3–4. *Ред.*

сверхдержавы, каждая в своем лагере, навязывали идеологическую дисциплину, в то время как ядерное оружие замораживало территориальный статус-кво и разделение и мира, и Европы на два блока (лагеря).

случае они будут выступать в качестве геополитических факторов.

*Под геополитическим фактором понимается рациональное сочетание географических параметров, составляющих основу наличной совокупности ресурсов государства (коалиции государств) как геополитического субъекта, оказывающих определяющее влияние на его место в глобальном (региональном, локальном) процессе через формируемую на конкретный исторический период развития систему жизненно важных интересов, обеспечение условий их реализации, в том числе нейтрализацию угроз со стороны других субъектов геополитики.*



«Արմավիր-95» հայ-ռուսաստանյան համատեղ զորավարժությունների ժամանակ. 1995 թ. մարտ
На совместных армяно-российских военных учениях «Армавир-95». Март 1995 г.
At the joint Armenian-Russian military exercises «Armavir-95». March, 1995

Особенность современной геополитики состоит в том, что основополагающие принципы государственного устройства—принцип национальности и принцип незыблемости границ, или принцип «крови» и принцип «земли»—вошли в острое противоречие, становясь детонаторами региональных конфликтов и локальных войн.

В целом приведенные примеры дают основания для утверждения о том, что необходимо рассматривать геопараметры лишь в совокупности, включая их в механизм формирования межгосударственных отношений и государственной политики, в том числе и в военной сфере. В этом

Сразу же оговоримся, что под ресурсами здесь понимаются не только природные богатства, но и технологии, а также финансовые и интеллектуальные ресурсы.

Современные геополитики утвер-

ждают, что каждому геополитическому субъекту имманентно присуща предрасположенность к той или иной специфической организации своих ресурсов развития в его взаимодействии с другими геополитическими субъектами. При этом эта специфическая организация ресурсов, изначально заложенная при возникновении геополитического субъекта и отражающая совокупность его наиболее важных признаков и черт, обусловливает естественно складывающуюся направленность действий субъекта.

*Системная оценка* **всей совокупности ресурсов развития и обеспечения безопасности государства** *предполагает выявление их возможной несбалансированности или перенапряжения.* Понятно, что результатом перенапряжения может стать глубокий системный кризис, который потребует длительного восстановления. Не исключено, что перенапряжение располагаемых ресурсов вероятнее всего приведет к перерождению государства, ибо уже невозможно сохранить его в прежнем виде *(воссоздать СССР уже никому не удастся!).*

В зависимости от уровня рассматриваемых геополитических процессов «рациональные сочетания» ресурсов субъекта геополитики могут быть различными. Поэтому мы вправе говорить о геополитических факторах во множественном числе, даже применительно к одному государству, будь это Белоруссия, Польша или Россия.

Представление геополитических факторов через ресурсы субъекта хорошо согласуется с реалиями сегодняшнего дня, когда расходование наличных ресурсов опережает формирование новых при крайне неравномерном их текущем распределении, что дестабилизирует ситуацию как в отдельных странах, так и в мире в целом—усиливается поляризация на богатых и бедных, расширяется деградация природной среды, в биосфере развиваются необратимые негативные процессы.

Существует мнение, что в современном мире статус «великой державы» будет, вероятнее всего, определяться способностью к развитию, к лидерству в приоритетных сферах знаний, информатики, технологии и к повседневному влиянию на обычную жизнь миллионов людей во всем мире через потребляемые ими продукты, товары, услуги, культуру.

Однако ни высокий уровень технологического развития, как, например, у Южной Кореи, ни социально-экономическое процветание общества, которое характеризует, скажем, Данию или Швецию, ни огромные финансовые средства, как у Объединенных Арабских Эмиратов, не выводят государство в число великих держав, если у него нет для того геополитической основы.

Именно *обширная территория* с *богатыми природными ресурсами и многочисленное население, образующие свою цивилизацию и интеллектуальный, включая и военный, потенциал страны, составляющие основу совокупного ресурса государства, становятся своеобразным резервуаром мощи государства.* **Эта совокупность геопараметров, являющаяся** хотя и недостаточным, но необходимым **условием для превращения государства в геополитический полюс**, к которому будут тяготеть и вокруг которого будут группироваться другие народы и страны, **может рассматриваться в качестве геополитического фактора государства как геополитического субъекта.**

Страна (или группа стран), потенциал которой не меньше, чем по-

тенциал любой другой группы стран, называется **геополитическим полюсом.**

Справочно. Недавно связанная в единую магистраль железная дорога, соединяющая Китай, Казахстан, Узбекистан, Туркмению, Иран и Турцию, имеет низкую пропускную способность, недостаточно освоена и проходит по политически нестабильным районам. Кроме того, этот новый «Великий шелковый путь» проходит через территорию многих стран, что существенно усложняет ее эксплуатацию и согласование условий транзита грузов. Россия же контролирует более надежный наземный путь, связывающий евроатлантический и азиатско-тихоокеанский регионы— Транссибирскую железную дорогу. Построена дублирующая ее БАМ. Возможно строительство Северной железной дороги до Берингова пролива, хотя справедливости ради следует заметить, что экономическая и экологическая стороны такого проекта должны пройти самую строгую экспертизу.

Советские железные дороги перевозили половину всех грузов и четверть пассажиров от общемирового объема.

Протяженность российской автодорожной сети сопоставима с американской: соответственно—1036 и 1358 тыс. км. При соответствующих капиталовложениях это может дать основу для строительства межконтинентальных автотрасс.

Россия унаследовала 57 % морского торгового флота СССР, заняв второе место в мире по количеству кораблей и четвертое—по тоннажу.

Россия имеет магистральные трубопроводы протяженностью 210 тыс. км. На трубопроводный транспорт приходится 52, 5% общего грузооборота в стране по сравнению с 16,1 % в США, 4,4 % во Франции, 2 % в Китае. Россия владеет 13 % мировых прогнозных запасов нефти, 42 %—газа, 43 %—угля. Здесь осуществляется 11% мировой добычи нефти, 28 %—газа, 14 %—добычи угля. Россия полностью обеспечена энергоресурсами, в то время как Япония зависит от иностранных энергоресурсов на 82 %, Германия и Франция—на 50 – 52 %, США—на 23 %.

Единая энергосистема СССР может стать основой для единой энергосистемы Европы и АТР.

Следует учесть и относительно развитую аэродромную сеть России: 6 международных, 130 федеральных и 3000 местных аэропортов.

Россия предоставляет в силу своего географического положения уникальные возможности для развития наземных и орбитальных средств связи.

Открытость России должна служить делу стратегической стабильности и международной безопасности.

Реализуемая в системе национальных или жизненно важных интересов страны рациональная совокупность ресурсов обусловливает необходимость предпринятия государством адекватных военных усилий, надежно гарантирующих его целостность и суверенитет. Суверенное государство не должно передоверять свою безопасность никаким внешним силам, будь то национальные структуры других государств или международные военно-политические институты. Справедливость последнего тезиса подтверждается высказыванием президента США Б. Клинтона: «Я никогда не доверю безопасность США ООН или любой другой международной организации. Мы никогда не откажемся от нашей прерогативы действовать в одиночку, когда на карту поставлены наши интересы. **Наш девиз в эту эпоху должен быть: вместе, когда можем; сами по себе, когда должны**».

*(Продолжение в следующем номере)*

# ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ

## ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Ն. Գ. ԵՂՈՅԱՆ, փոխգնդապետ, Գ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ, ավագ լեյտենանտ*

Զինված ուժերում ֆիզիկական պատրաստությունը մարտական պատրաստության համակարգի մի բաղկացուցիչ մասն է: Նրա նպատակն է ապահովել զինծառայողների այնպիսի ֆիզիկական վիճակ, որի առկայությամբ նրանք կարողանան ավելի լավ տիրապետել զենքին ու մարտական տեխնիկային և դրանք արդյունավետ օգտագործել մարտի ընթացքում, տոկալ ֆիզիկական ու նյարդահոգեբանական լարվածությանը, անբարենպաստ պայմաններին:

Ֆիզիկական պատրաստության ընթացքում լուծվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ խնդիրներ:

*Ընդհանուր խնդիրներն* են՝ գործնական հմտություններին տիրապետումը, ֆիզիկական և հոգեբանական հատկությունների զարգացումը, զինծառայողների բարձր աշխատունակության ապահովումը, նրանց առողջության ամրապնդումը և այլն:

*Հատուկ խնդիրները* կապված են ռազմական մասնագիտական առանձնահատկությունների ու զինծառայողների գործունեության բնույթի հետ: Դրանց կատարումը նպաստում է մասնագիտական կարևոր հատկությունների և ունակությունների զարգացմանը:

**Ֆիզիկական պատրաստության ձևերն** են՝ ուսումնական պարապմունքը, առավոտյան մարմնամարզությունը, ֆիզիկական պարապմունքները ուսումնական ու մարտական գործունեության ընթացքում, զանգվածային սպորտային աշխատանքները:

*Ուսումնական պարապմունքը* ֆիզիկական պատրաստության հիմնական ձևն է, քանի որ բոլոր վարժությունների ուսուցումը կատարվում է հատկապես այդ պարապմունքների ընթացքում: Դրանք անցկացվում են ըստ ֆիզիկական պատրաստության բաժինների կամ համալիր ձևով, երբ դրված խնդիրների լուծման համար կիրառվում են վարժություններ նաև այլ բաժիններից:

Ուսումնական պարապմունքն անցկացվում է հիմնականում գործնական պարապմունքի ձևով: Այն տևում է 1—2 ուսումնական ժամ (ուսումնական ժամը՝ 50 րոպե):

*Առավոտյան մարմնամարզությունն* անցկացվում է զինվորների կանոնավոր մարզումների նպատակով: Այն ծառայում է քնից հետո օրգանիզմի առույգ վիճակի արագ վերականգնմանը, անցկացվում է վերկացից 10 րոպե հետո երեք տարբերակով.

—ընդհանուր զարգացնող վարժություններ,

—արագընթաց տեղաշարժներ,

—համալիր մարզումներ:

Առավոտյան մարմնամարզության համար զինծառայողների համազգեստի ձևը, ելնելով օդի ջերմաստիճանից և քամու արագությունից, որոշում է զորամասի հերթապահը:

Առավոտյան մարմնամարզության նկատմամբ կատարվում է ամենօրյա հսկողություն: Այն իրականացնում են զորամասի հերթապահը, ժամանակ առ ժամանակ՝ հրամանատարը (պետը), ֆիզիկական պատրաստության ու սպորտի գծով պետը և բուժծառայության պետը:

Սպաներն այս մարմնամարզությամբ զբաղվում են ինքնուրույն, իսկ ուսումնական և ճամբարային հավաքների ընթացքում՝ խմբի կազմում, իրենց հրամանատարների ղեկավարությամբ:

*Ֆիզիկական պարապմունքները ու-*

*սումնական ու մարտական գործունեության ընթացքում* անցկացվում են մրցումներ և ֆիզիկական աշխատունակության և լարված աշխատանքում հոգեբանական ու ֆիզիկական կայուն պատրաստության պահպանման, շարժումային ակտիվության պակասի լրացման նպատակով:

Այդ նկատառումով ֆիզիկական պատրաստության համակարգում նախատեսվում է վարժություններն անցկացնել հերթապահության ընդունումից առաջ, հերթապահության ընթացքում, կանոնակարգված ընդմիջումների ժամանակ և այլն: 5 րոպե տևողությամբ ֆիզիկական վարժությունները կատարվում են պինդառայողների բեռնվածությունը նվազեցնելու, աշխատունակությունը և մարտունակությունը բարձրացնելու համար: Համալիր վարժությունները կրկնվում են ոչ ուշ, քան 3-4 ժամը մեկ, երթերի ընթացքում՝ ժամը մեկ:

Խրամատներում և թաքստոցներում երկար ժամանակ գտնվող անձնակազմի ֆիզիկական վիճակն ստուգելու համար կարելի է ընդունված վարժությունների փոխարեն կիրառել հետևյալ վարժությունները.

—արագաշարժությունը ստուգելու համար 100 մ վազքի փոխարեն՝ մաքոքավազք 10 անգամ 10 մ,

—ուժը ստուգելու համար հմ. 6 (ձգումներ պտտաձողի վրա) վարժության փոխարեն՝ հմ. 7 վարժությունը (ուժային համալիր),

—ճարպկությունը ստուգելու համար հմ. 11 (ցատկ ոտքերը պտտած) վարժության փոխարեն՝ հմ. 12 վարժությունը (ճարպկության համալիր վարժություն):

*Զանգվածային սպորտային աշխատանքը* կոչված է բարձրացնելու անձնակազմի ֆիզիկական պատրաստության ու սպորտային վարպետության մակարդակը և միաժամանակ ծառայում է որպես ժամանց: Այն ներառում է պարապմունքներ ու մրցումներ սպորտի ռազմական և այլ ձևերից, զանգվածային մարզական հանդեսներ ու ստուգատեսներ և այլ միջոցառումներ: Այս աշխատանքների կազմակերպման և անցկացման կարգը որոշվում է կորամասի հրամանատարի տարեկան հրամանով:

**Ֆիզիկական պատրաստությունը որպես մարտական պատրաստության բաղկացուցիչ մաս:** Ֆիզիկական պատրաստության բարձր մակարդակը պինդառայողին օգնում է արագ կողմնորոշվելու բարդ իրադրություններում: Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, ֆիզիկապես լավ պատրաստված ռադիոտեղորոշումային օպերատորի կողմից բարդ իրադրության գնահատման ժամանակը 24 տոկոսով, իսկ թույլատրված սխալների քանակը 2 անգամ պակաս են չմարզված օպերատորի համապատասխան ցուցանիշներից:

Ֆիզիկական պատրաստության արդյունավետված անցկացումն օգնում է ինտենսիվացնելու մարտական ուսուցման ընթացքը: Անձնակազմի բազմօրյա կորավարժությունների ժամանակագրումից երևում է, որ պինվորների ակտիվ գործողությունները կապված են զգալի ֆիզիկական բեռնվածության ու հոգեկան լարվածության հետ և կազմում են կորավարժության ընդհանուր տևողության մոտ 60 տոկոսը: Քնելու ժամանակը նման դեպքում կազմում է օրվա տևողության 20 տոկոսը, մինչդեռ նորմալ պայմաններում սովորական մարդու քնի տևողությունը կազմում է 30—35 տոկոսը: Հասկանալի է, որ նման բեռնվածության հաղթահարմանը ունակ են միայն ֆիզիկապես լավ պատրաստված մարդիկ: Առանձին պինդառայողների, առավել ևս ամբողջ ստորաբաժանումների ցածր ֆիզիկական պատրաստվածությունը բացասական ներգործություն է ունենում ուսումնամարտական խնդիրների լուծման վրա: Այսպես՝ ցածր պատրաստվածությամբ պինդառայողների աշխատունակությունը կորավարժության արդեն երկրորդ օրվանից իջնում է 35 տոկոսով, մինչդեռ գերազանց պատրաստվածությամբ պինդառայողների համար այն գործնականում մնում է անփոփոխ:

Ըստ հետազոտությունների տվյալ-

ների ֆիզիկական պատրաստվածության մակարդակը զգալիորեն ազդում է մոտոհրաձգային և հրետանային ստորաբաժանումների կողմից վարվող կրակի արագության և դիպուկության վրա: Օրինակ՝ բազմօրյա կորավարժության ընթացքում ֆիզիկապես թույլ պատրաստված մոտոհրաձիգի կողմից վարվող ինքնաձիգից կրակի դիպուկությունը առաջին օրվա համեմատ նվազում է 30—50 տոկոսով, իսկ նույն պայմաններում ֆիզիկապես լավ պատրաստված զինծառայողի մոտ՝ ընդամենը 10—30 տոկոսով:

Այսպիսով՝ ֆիզիկական պատրաստությունը կարևոր գործոն է ամեն տիպի զինվորական համակարգերի անձնակազմերի մարտական վարպետության և մասնագիտական ունակության բարձրացման գործում: Նրա ազդեցությունը արտահայտվում է ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր աշխատունակության արագ վերականգնմամբ: Դրա շնորհիվ զինծառայողները ուսումնական ու մարտական գործողությունների ընթացքում արդյունավետ և վըստահ են կիրառում զենքն ու մարտական տեխնիկան, արագ, ճիշտ և հուսալի են գործում տարբեր իրավիճակներում:

**Ֆիզիկական շարժումային հատկություններ:** Յուրաքանչյուր մարդ ունի որոշակի շարժումային կարողություններ (օրինակ՝ որևէ ծանրություն բարձրացնելու, այս կամ այն ժամանակամիջոցում որոշակի տարածություն վազելու և այլն): Դրանք իրացվում են կոնկրետ շարժումների միջոցով, որոնք իրարից տարբերվում են քանակական և որակական բնութագծերով: Օրինակ՝ կարճ տարածության վազքը և մարաթոնյան վազքը օրգանիզմին ներկայացնում են տարբեր պահանջներ:

Ֆիզիկական շարժումային հատկություն հասկացությունը մասնավորապես ընդհանրացնում է մարդու շարժումային համակարգի այն կողմերը, որոնք՝

—արտահայտվում են շարժման միևնույն պարամետրերով և չափվում են նույնանման միավորներով (օրինակ՝ առավելագույն արագությունը),

— ունեն նույնատիպ ֆիզիոլոգիական ու կենսաքիմիական մեխանիզմներ և հոգեբանական դրսևորման միանման հատկանիշներ: Այդ նկատառումով էլ տարբեր մարզաձևերի դեպքում կիրառվում է համապատասխան ֆիզիկական պատրաստության նույն մեթոդիկան: Օրինակ՝ դիմացկունությունը վազքում և լողում կատարելագործվում է մեծ մասամբ նույն միջոցով, թեկուզ այդ շարժումներն իրարից խիստ տարբեր են:

Ուժը կարելի է բնութագրել որպես մարդու կարողությունը՝ հաղթահարելու արտաքին դիմադրությունը կամ հակազդելու դրան ի հաշիվ մկանային ճիգերի:

Ինչպես հայտնի է, մկանները կարող են ուժ ստեղծել առանց իրենց երկարությունը փոխելու (ստատիկ բանելակարգ), երկարության փոքրացմամբ (հաղթահարող բանելակարգ), երկարության մեծացմամբ (զիջողական բանելակարգ): Հարկ է նշել, որ այս դեպքերում առավելագույն ուժի ստեղծման բնութագծերը տարբեր են:

Գոյություն ունեն ուժի զարգացման հետևյալ մեթոդները.

ա) կրկնողական մեթոդ,

բ) առավելագույն ճիգերի մեթոդ,

գ) դինամիկ ճիգերի մեթոդ:

Ստորև բերված աղյուսակում տրըվում է անհրաժեշտ կրկնությունների թիվն ըստ ընտրված քաշի:

| Քաշը | Մեկ մոտեցման ընթացքում հնարավոր կրկնությունների թիվը |
|---|---|
| Սահմանային | 1 |
| Սահմանայինին մոտ | 2–3 |
| Մեծ | 4–7 |
| Չափավոր մեծ | 8–12 |
| Միջին | 13–18 |
| Փոքր | 19–25 |
| Շատ փոքր | 25 և ավելի |

*Կրկնողական մեթոդ:* Ոչ սահմանային քաշերով շարժումները իրենց ֆիզիոլոգիական մեխանիզմներով տարբերվում են սահմանային և սահմանայինին մոտ լարվածությամբ աշխատանքից: Այլ է պատկերը, եթե նայենք հոգնածության տեսանկյունից: Այն քաշը, որը վար-

ժության կատարման սկզբում հեշտ էր բարձրացվում, հոգնածության ի հայտ գալուն համեմատ «ծանրանում» հավասարվում է սահմանայինին մոտ քաշին՝ դառնալով մեծ ուժի պարգացման ֆիզիոլոգիական գրգռիչ: ՈՒստի մարզման այս մեթոդի դեպքում վարժությունը պետք է այնքան կրկնվի, մինչև ի հայտ գա պարզ արտահայտված հոգնածություն:

Շարադրվածից կարելի է հանգել երկու հիմնական եզրակացության:

1. «Մինչև վերջ» աշխատանքը էներգիայի ծախսման առումով ձեռնտու չէ, քանի որ հարկ է լինում բարձրացնել շատ ավելի մեծ քաշ, քան առավելագույն ճիգերի մեթոդի դեպքում: Իսկ դա ժամանակակից չափանիշներով աննպատակահարմար է:

2. Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, կրկնողական մեթոդի կիրառման դեպքում վերջին մոտեցման ընթացքում կենտրոնական նյարդային համակարգի գրգռվածությունն արդեն նվազում է հոգնածության հետևանքով:

Սակայն, չնայած այս մեթոդի սակավ արդյունավետությանը, այն գործնականում լայնորեն կիրառվում է: Դա բացատրվում է նրա որոշ առավելություններով, այն է.

—մեծ ծավալով աշխատանքի կատարումը խթանում է մկանային պանգվածի պարգացումը, ուստի առողջարարական տեսակետից նպատակահարմար է և կարող է կիրառվել առավոտյան մարմնամարզության ժամանակ,

—կարելի է կոնկրետ մկանախմբեր պարգացնել առանց մեծ լարվածությունների ստեղծման, ինչը հնարավոր չէ առավելագույն քաշերի դեպքում,

—ոչ սահմանային քաշերով կատարվող աշխատանքները հնարավորություն են տալիս հսկելու վարժության կատարման տեխնիկան:

Վնասվածքներից խուսափելու համար նրանք, ովքեր նախկինում ուժային վարժություններ չեն կատարել, պետք է մարզումներն սկսեն հենց այս մեթոդով:

Այսպիսով՝ ուժի ավելացման համար այս մեթոդը այնքան էլ նպատակահարմար չէ, սակայն մկանային պանգվածի և դիմացկունության պարգացման համար բավական արդյունավետ է:

*Առավելագույն ճիգերի մեթոդը* ոգակյալ մարզիկների մարզման մեթոդ է: Այստեղ ուժի պարգացումն ընթանում է արագ տեմպով: Սակայն առավելագույն ճիգերի մեթոդով անընդհատ մարզումները կարող են հանգեցնել ուժի պարգացման արգելակման. օրգանիզմը արագ համակերպվում է, և դա դառնում է սովորական:

ՈՒժի մշակման ընթացքում որպես օժանդակ միջոց կիրառվում են *ստատիկ ուժային վարժությունները*: Դրանք ունեն մի շարք առավելություններ: Դրանց դեպքում անփոփոխ լարվածությունը կարելի է պահպանել համեմատաբար երկար ժամանակ: Դրանց օգնությամբ գործնականում կարելի է ազդել ցանկացած մկանախմբի վրա: Այս վարժություններով մարզումը քիչ ժամանակ է պահանջում, և սարքավորումներն էլ բավական հասարակ են: Ստատիկ վարժությունները հատկապես արժեքավոր են այն դեպքում, երբ հնարավորություն չկա մեծ ծավալով աշխատանք կատարելու (բուժական ֆիզկուլտուրայի ժամանակ, տանկի մեջ, խրամատներում և այլն): Դրանց արդյունավետությունը, սակայն, համեմատաբար ցածր է:

**Շարժումների արագության մշակում:** Արագաշարժությունը բնութագրվում է սահմանված կարճ ժամանակահատվածում մեծ թվով շարժումների և գործողությունների կատարմամբ:

Առավելագույն արագությունը, որին մարդը կարող է հասնել որևէ շարժման ընթացքում, կախված է ինչպես նրա արագության պարգացման աստիճանից, այնպես էլ մի շարք այլ գործոններից, այն է՝ դինամիկ ուժ, ճկունություն, ճարպկություն, տեխնիկայի տիրապետում և այլն: Այդ պատճառով շարժումների արագության մշակումը սերտ կապված է ֆիզիկական այլ հատկությունների մշակման և տեխնիկայի կատարելագործման հետ:

Զինվորականի համար ցանկացած

գործողության արագությունը կարևոր հատկանիշներից մեկն է: Արագ բնույթ կրող ժամանակակից մարտական գործողությունները ենթադրում են կարճ ժամանակահատվածում ընտրել թաքստոցներ, պատսպարվել տանկում, հագնել պաշտպանական հագուստ և հակագազ,

*Արագության մշակման վարժությունները* պետք է բավարարեն ամենաքիչը երեք պահանջի.

ա) կատարման սահմանային արագություն (այդ դեպքում մարմնամարզական մի շարք վարժություններ և քայլքեր համարյա թե օգտավետ չեն),



Ձեռնամարտի պարապմունք ՀՀ ԶՈՒ-ի զորամասերից մեկում
Занятия по рукопашному бою в одной из частей ВС РА
Martial arts training in one of the units of the Armed Forces of the RA

կատարել սրընթաց վազանք, ճարպկորեն հաղթահարել խոչընդոտը:

Գոյություն ունի արագության դրսևորման երեք ձև՝ շարժման հակազդման արագություն, միակի շարժման արագություն և շարժման հաճախականություն: Գործնականում հանդիպում են հիմնականում արագության այս ձևերի տարբեր համակցություններ: Շարժումների արագությունն արտահայտվում է որպես կա՛մ արտաքին գրգռիչին պատասխան հակազդում ի հաշիվ մկանների արագ կծկման (բռնցքամարտ, սուսերամարտ, ըմբշամարտ և այլն), կա՛մ մարմնի արագ տեղափոխում տարածության մեջ, որն ընդգրկում է և՛ միակի շարժման արագությունը, և՛ նրա կրկնման հաճախությունը (վազք կարճ տարածությունների վրա, լող, չմշկավազք և այլն):

բ) վարժությունների այնպիսի յուրացում, որ դրանց կատարման ժամանակ ճիգերն ուղղված լինեն ոչ թե կատարման ձևին, այլ՝ արագությանը,

գ) վարժությունների կատարման այնպիսի տևողություն, որ հոգնածության պատճառով արագությունը չնվազի:

Արագային վարժություն է համարվում առավելագույն հզորությամբ այն աշխատանքը, որի տևողությունը որակավորված մարզիկների համար չի գերազանցում 20—22 վրկ-ը: Թույլ պատրաստված մարզիկների համար այն պետք է ավելի քիչ լինի:

Արագության մշակման համար սովորաբար կիրառվում է կրկնողական մեթոդը: Վայքահատվածի երկարությունը (կամ վարժության տևողությունը) ընտրրվում է այնպես, որ արագության աճումը (աշխատանքի լարվածությունը)

վարժության կատարման վերջում չնվազի: Պարապողը ամեն մի փորձի ժամանակ նպատակադրվում է գերազանցելու իր նախորդ լավագույն արդյունքը:

*Հանգստի* ժամանակամիջոցը, մի կողմից, պետք է լինի այնքան կարճ, որ կենտրոնական նյարդային համակարգի գրգռվածությունը նկատելիորեն չնվազի, մյուս կողմից՝ այնքան երկար, որ վեգետատիվ կենսագործունեությունը որոշ չափով վերականգնվի:

*Դիմացկունությունը* կինդառայողների կարևոր հատկանիշներից մեկն է: Դա ունակությունն է՝ երկար դիմակայելու որևէ գործողության առանց արդյունավետությունն իջեցնելու: Այլ կերպ ասած՝ դիմացկունությունը հոգնածությունը հաղթահարելու ունակությունն է:

Դիմացկունությունը չափվում է ուղղակի և անուղղակի եղանակներով: Ուղղակի եղանակով չափման դեպքում փորձարկվողին առաջարկվում է որևէ խնդիր (օրինակ՝ վազել այս կամ այն արագությամբ) և որոշվում է տվյալ լարվածությամբ կատարվող սահմանային աշխատանքը (մինչև արագության նվազում): Դիմացկունության չափման ուղղակի եղանակը գործնականում ոչ միշտ է հարմար, այդ պատճառով հաճախ կիրառվում է անուղղակի եղանակ, օրինակ՝ վազքով հաղթահարել երկար տարածություն: Դիմացկունությունը որոշ դեպքերում որոշվում է ըստ հաստատուն բեռնվածությամբ աշխատանքի ժամանակ որևէ խնդրի կատարման արդյունավետության անկման:

Դիմացկունությունը լինում է ընդհանուր և հատուկ: Ընդհանուր դիմացկունությունը ցանկացած աշխատանքի տևական կատարման ունակությունն է: Այն ներազդում է ավելի շատ մկանախմբերի գործունեության վրա և բավական բարձր պահանջներ է ներկայացնում սիրտ-անոթային, շնչառական ու կենտրոնական նյարդային համակարգերին: Ընդհանուր դիմացկունությունը հատուկ դիմացկունության հիմք է ծառայում: Ընդհանուր դիմացկունությունը կարելի է զարգացնել շրջանային, համաչափ, կրոսային, ֆարտլեկ, փոփոխական մեթոդներով:

Հատուկ դիմացկունության աստիճանը որոշվում է տվյալ վարժության կատարման ժամանակ աշխատող բոլոր օրգանների կամ նրանց համակարգերի հատուկ պատրաստությամբ, ինչպես նաև ֆիզիոլոգիական ու հոգեբանական հնարավորությունների մակարդակով: Հատուկ դիմացկունությունը ոչ միայն հոգնածության դեմ պայքարելու կարողությունն է, այլև ունակություն է՝ առաջադրված խնդիրը ավելի արդյունավետ կատարելու խիստ սահմանափակ տարածությունում կամ սահմանված ժամանակահատվածում: Հատուկ դիմացկունությունը կարելի է զարգացնել կրկնողական, ինտերվալային, ստուգողական և մրցակցական մեթոդներով:

*Հոգնածությունը* լինում է տեղային (լոկալ) և ընդհանուր: Տեղային հոգնածությունը նկատվում է համեմատաբար փոքր թվով մկանների աշխատանքի դեպքում, իսկ ընդհանուրը՝ մեծ թվով մկանախմբերի աշխատանքի դեպքում: Ուսումնական ու մարտական գործունեության ընթացքում կինդառայողներն անխուսափելիորեն ենթարկվում են ինչպես տեղային, այնպես էլ ընդհանուր հոգնածության: Մարտական տեխնիկայի և զենքի հետ գործ ունենալու դեպքում նրանք հաճախ ենթակա են ընդհանուր հոգնածության:

**Ճարպկությունը և նրա մշակման մեթոդիկան:** Ցանկացած ապառ շարժում որևէ կոնկրետ խնդրի լուծում է հետապնդում՝ ցատկել որքան հնարավոր է բարձր, բռնել գնդակը, բարձրացնել ծանրաձողը և այլն: Այդ խնդիրները կարող են բարդության տարբեր աստիճանի լինել:

Ճարպկության չափանիշ է *բարդ շարժումների փոխհամաձայնեցվածությունը:* Շարժումային խնդիրը համարվում է կատարված, եթե շարժումները համապատասխանում են իրենց տարածքային, ժամանակային և ուժային բնութագրերին, այսինքն՝ երբ խնդիրը կատարված է բավական ճշգրիտ:

Շարժման ճշտությունը ներառում է տարածքային ու ժամանակային ճշտությունը և ուժային շարժումների բնութագծային ճշտությունը: *Շարժման ճշտությունը*, այսինքն՝ նրա համապատասխանությունը խնդրի պահանջներին, ճարպկության երկրորդ չափանիշն է: Վարժությունների ճիշտ կատարումը հանգեցնում է կատարման ընթացքում մկանային ճիգերի և էներգիայի նվազագույն ծախսման: Այդ իսկ պատճառով որպես ճարպկության ևս մի չափանիշ ընդունվում են *շարժումների տնտեսման* որոշակի ցուցանիշներ: Միևնույն աշխատանքի կատարման ժամանակ տարբեր մարդիկ ծախսում են տարբեր քանակությամբ էներգիա: Որպես ճարպկության չափանիշ կարելի է կիրառել նաև *վարժությունների կատարման օգտակար գործողության գործակիցը* (ՕԳԳ-ն կատարված աշխատանքի հարաբերությունն է ծախսված էներգիային): Ընդհանրացնելով մեր խոսքը՝ ճարպկությունը կարող ենք բնութագրել որպես նոր շարժումների տեխնիկային արագ տիրապետելու (արագ սովորելու) ունակություն, շարժումային գործողությունը իրադրության փոփոխման համեմատ, առանց աշխատանքի արդյունավետության իջեցման, արագ վերակառուցելու կարողություն: Այսպիսով՝ ճարպկությունը բարդ համալիր հատկություն է, որը չունի գնահատման միակ չափանիշ. յուրաքանչյուր դեպքում ընտրվում է այս կամ այն չափանիշը:

Ճարպկության մշակման համար կարելի է կիրառել ցանկացած վարժություն, որը ծառայի նոր շարժումներին տիրապետելուն: Բայց երբ նման վարժությունները դառնում են ավտոմատացված, դրանք արդեն կորցնում են իրենց նշանակությունը:

Մարզման, կրավարժությունների կամ պարապմունքների ընթացքում արտաքին շատ գործոններ կարող են ազդել զինծառայողների կողմից գործողությունների կատարման տեխնիկայի ճշտության վրա: Եթե զինվորի ճարպկությունը զարգացած է, ապա նա արագ կվերականգնի հավասարակշռությունը, կըշտկի դիրքը կամ շարժումը և չի վտանգի իր նպատակային գործողության արդյունքը: Ճարպկություն զարգացնելու համար օգտակար են այնպիսի վարժությունները, որոնց կատարման ժամանակ մարզիկը հարկադրված է լինում դրսևորելու հնարամտություն՝ անսպասելիորեն ստեղծված իրավիճակում կատարելով արագ և արդյունավետ շարժումներ: Այդպիսի վարժությունների հնարավորություն են ընձեռում բասկետբոլը, հոկեյը, ձեռքի գնդակը և այլն: Կարելի է կիրառել նաև լեռնադահուկային սպորտը (արագընթաց վայրէջքներ, ոլորավայրէջքներ, դահուկացատկեր), ինչպես նաև վարժությունները մարմնամարզական գործիքների վրա:

Ճարպկության զարգացման համար շատ օգտակար են ակրոբատիկական վարժությունները, մասնավորապես՝ ցատկերը, որոնք ճարպկությունից բացի զարգացնում են նաև ուժ, արագություն, ճկունություն և համարձակություն: Ճարպկության մշակմանը նպաստում են նաև արգելքների հաղթահարումը, կրոսավազքերը, նրթարշավները և այլն:

**Ֆիզիկական պատրաստության վերահսկողությունը:** Զինծառայողների ֆիզիկական պատրաստության վերահսկման հիմնական մեթոդներն են *ստուգումը* և *գնահատումը*: Ստուգումներ անցկացվում են զինծառայողների ֆիզիկական պատրաստության մակարդակը, բոլոր տեսակի պարապմունքների անցկացման կազմակերպական ու մեթոդական ապահովվածությունը որոշելու նպատակով: Ստուգման բովանդակությունը, ձևերը, ժամանակը և գնահատման կարգը տրվում են ֆիզպատրաստության կանոնագրքում: Յուրաքանչյուր հրամանատար պարտավոր է գիտենալ ստուգման համակարգը և ճշտորեն գնահատել իր ենթակա զինծառայողների ֆիզպատրաստությունը: Ուսման ընթացքը ճիշտ ղեկավարելու համար բավարար չեն այն տեղեկությունները, որոնք հրամանատարն ստանում է ուսուցման ծրագրով նախատեսված ստուգողական վարժությունների միջոցով, քանի որ մի շարք

վարժությունների կատարման համար պահանջվում է ֆիզիկական հատկությունների համալիր դրսևորում, և ըստ գնահատականների դժվար է որոշել յուրաքանչյուր հատկանիշի մասնակցության չափը: Հրամանատարը այդ բացը կարող է լրացնել՝ ուշադիր հետևելով ֆիզպատրաստության ողջ ընթացքին:

Շարժումային հատկությունների աճման դինամիկայի գնահատումը հիմնըվում է հասարակ վարժությունների կատարման վրա, որոնք չեն պահանջում հատուկ սարքավորում, երկարատև նախնական ուսուցում և կիրառելի են ուսումնական բոլոր փուլերում ողջ անձնակազմի համար: Ահա այդ վարժությունները՝ 50 մ վազք բարձր մեկնարկից, վազք 100 մ, հեռացատկ տեղից, ձգումներ պտտաձողի վրա, թեքումներ առաջ և այլն:

Գործնական հմտությունները գնահատելու համար կիրառվում են արգելագոտու հաղթահարումը, լողը, երթարշավները, դահուկավազքը:

Զինծառայողների ֆիզպատրաստվածության մակարդակը որոշելիս նկատի են ունեցվում փուլային և ընթացիկ մակարդակները: *Փուլային մակարդակ* ասելով հասկացվում է մարզվածության այն աստիճանը, որը հնարավորություն է տալիս ֆիզիկական պատրաստությունը պահպանելու ուսուցման բոլոր փուլերում: *Ընթացիկ մակարդակը* ձևավորվում է մեկ կամ մի քանի մարզումների միջոցով: Ելնելով նշվածից՝ ժամկետային զինծառայողների փուլային մակարդակի ստուգումը նպատակահարմար է պլանավորել հետևյալ ժամկետներում. նորակոչիկների զորամաս ներկայանալուց 2-3 ամիս հետո, ուսուցման առաջին փուլի վերջում, տեսչական ստուգումների ընթացքում և ուսուցման վերջում: Ստուգման հիմնական խնդիրը ֆիզիկական հատկությունների զարգացման աստիճանի որոշումն է ուսման ընթացքի հետագա պլանավորման համար: Քանի որ զինծառայողների համար ծառայության առաջին երեք ամիսը նոր պայմաններին հարմարման փուլ է, ապա վերահսկողության նպատակ է դառնում այս փուլում ուսման ընթացքի արդյունավետության բացահայտումը: Հրամանատարները պետք է հմտորեն վերլուծեն ստուգման արդյունքները և ըստ այդմ կայացնեն ուսուցման ընթացքի կարգավորման վերաբերյալ որոշումներ: Ընթացիկ մակարդակի հսկողության խնդիրը տվյալների հավաքումը և վերլուծումն է ֆիզիկական պատրաստության տարբեր ձևերի կիրառման ժամանակ բեռնվածությունների պլանավորման համար:

Կարծում ենք, որ սույն հոդվածում արծարծված հարցերի մեր պարզաբանումները կնպաստեն մեր զինված ուժերի մարտունակության բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. *Ю. К. Демьяненко.* Физическая подготовка. М., 1987.

2. *В. М. Зациорский.* Физические качества спортсмена. М., 1970.

3. «Наставление по физической подготовке (НФП)». М., 1987.

4. *Մ. Մ. Ստեփանյան.* Մեթոդական ձեռնարկ ֆիզիկական պատրաստության և սպորտի գծով պետերի համար: Ե., 1997.

# БОЕВАЯ ПОДГОТОВКА

## ОСОБЕННОСТИ ФИЗИЧЕСКОЙ ПОДГОТОВКИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

*Н. Г. ЕГОЯН, подполковник, Г. А. ПОГОСЯН, старший лейтенант*

### РЕЗЮМЕ

Физическая подготовка в Вооруженных силах входит в систему боевой подготовки войск.

Цель физической подготовки военнослужащих—обеспечение их физической готовности эффективно применять в бою оружие и боевую технику, стойко переносить физические и нервно-психические нагрузки и неблагоприятные факторы боевой деятельности. Она достигается путем решения общих и специальных задач.

Общими задачами являются: овладение прикладными навыками и развитие физических и психологических качеств, необходимых для физического совершенствования и поддержания высокой работоспособности военнослужащих, укрепление здоровья и повышение устойчивости организма к воздействию неблагоприятных факторов.

Специальные задачи определяются с учетом конкретных особенностей и условий деятельности военнослужащих.

К формам физической подготовки относятся учебные занятия, утренняя гимнастика, физическая тренировка в процессе учебно-боевой деятельности, спортивно-массовая работа. Каждая форма имеет свои особые задачи, специфику содержания и методику использования средств физической подготовки.

Планомерно проводимая физическая подготовка способствует интенсификации процесса боевой учебы. Хронометраж действий личного состава в процессе многодневных учений свидетельствует о том, что активные действия воинов, связанные со значительными физическими нагрузками и психическими напряжениями, достигают 60 % от всего времени учений. Понятно, что преодоление таких нагрузок под силу лишь физически хорошо тренированным военнослужащим.

Физподготовка—это комплекс взаимосвязанных физических качеств: быстроты, силы, ловкости и выносливости. Они объединяют, в частности, те стороны моторики человека, которые: а) проявляются в одинаковых параметрах движения и измеряются одинаковыми способами; б) имеют аналогичные физиологические и биохимические механизмы и требуют проявления сходных свойств психики.

Методики воспитания физических качеств имеют общие черты, независимо от конкретного вида движения.

После того, как военнослужащие достигнут хорошей физической подготовленности, необходимо развить у них и высокие двигательные навыки. Под двигательными навыками понимаются произвольные действия, доведенные в процессе обучения до автоматизма.

Процесс овладевания двигательными навыками должен происходить при активной умственной и эмоциональной вовлеченности самих обучаемых, которые должны ясно осознавать смысл своих действий.

# COMBAT TRAINING

## PECULIARITIES OF PHYSICAL TRAINING IN ARMED FORCES

*N. G. EGHOYAN, Lieutenant Colonel, G. A. POGHOSYAN, Senior Lieutenant*

SUMMARY

The physical training in Armed Forces is a part of the combat training system.

The physical training aimed at the provision of physical readiness to apply efficiently the weapon and combat equipment, steadily stands physical and neural-psychological burdens and adverse factors of combat. This can be achieved only by solving the general and special tasks.

The general tasks include: mastering applied skills and development of physical and psychological qualities, necessary for physical perfection and maintenance of the high efficiency of military men, strengthening of health and increase of steadiness of organism to the influence of the adverse factors.

The special tasks are defined considering concrete peculiarities and conditions of activity of military men.

Lessons, morning gymnastics, physical training in the process of combat drill activity, sport-mass work are the forms of general physical training. Each form has its special tasks, contents specifics and methods of use of means of physical training.

The systematic physical training promotes the intensification of the combat drill process. Time-keeping of actions of the personnel during the training of many days shows that the active actions of soldiers, connected with significant physical burdens and mental pressure, are almost 60 % from training time. It is clear, that, only physically well trained military men are able to overcome such burdens.

Physical training is a complex of interconnected physical qualities as follows: quickness, strength, dexterity and endurance. In particular they unite those motive forces of the person which: a) are displayed in identical parameters of a movement and identically measured; b) have similar physiological and biochemical mechanisms and require a display of the similar properties of mentality.

The methods of education of physical qualities have similar features, irrespective of the specific kind of movement.

Having acquired good physical readiness of military men, it is necessary to develop also high impellent skills. The impellent skills are arbitrary actions, trained up to automatism.

The process of mastering the impellent skills should occur at active intellectual and emotional involvement of the trainees, who should clearly realize sense of the actions.

# ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՆԵՐՈՒՄ ԳԺՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Ռ. Թ. ԲԱԽՇՅԱՆ, գնդապետ*

Հանուն հայ ժողովրդի ազգային անկախության և պետական ինքնիշխանության մղվող պայքարի ընթացքում ավելի ու ավելի էր կարևորվում սեփական զինված ուժերի ստեղծման խնդիրը: Այսօր նրանք արդեն կայացել են և հանդիսանում են ոչ միայն հայ ժողովրդի անվտանգության, այլև ողջ անդրկովկասյան տարածաշրջանում խաղաղության երաշխիք:

Որպեսզի զինված ուժերը մշտապես պահպանեն մարտական պատրաստությունը իրենց պատմական առաքելությունը կատարելու համար, արդի փուլում պետք է անընդհատ և նպատակամղված կազմակերպական ու գաղափարադաստիարակչական աշխատանք տարվի կորքերի բարոյամարտական հատկությունների մշակման և ամրապնդման ուղղությամբ: Բարոյամարտական հատկանիշներ ասելով մենք նկատի ունենք միմյանց հետ սերտորեն կապված և միմյանց լրացնող մի շարք անձնական հատկությունների համախումբը: Դրանք են՝ հավատարմությունը զինվորական պարտքին, երդմանը, մարտական և հասարակական-քաղաքական ակտիվությունը, կարգապահությունը, տոկունությունը, քաջությունն ու արիությունը, անձնվիրությունը և այլն: Այս հատկություններն առավել ինտենսիվորեն ձևավորվում են զինվորական կոլեկտիվներում: Զինվորական կոլեկտիվներն ունեն որոշակի առանձնահատկություններ, որոնց հաշվառումը հրամանատարներին և պետերին օգնում է ճիշտ կողմնորոշվելու ստորաբաժանումների շրջանում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտում, ընդունելու հիմնավորված որոշումներ, տալու ճիշտ հրամաններ:

Բաց հայտնի է, թե մարտական առաջադրանքների կատարման գործում որքան նշանակություն ունի զինվորական կոլեկտիվի համախմբվածությունը: Համախմբվածության, ընկերության, մարտական սերտ միասնության, փոխաջակցության և փոխօգնության մթնոլորտում աճում է զինվորների գործնական ակտիվությունը, բարձրանում է ստորաբաժանումների և զորամասերի մարտական պատրաստականությունը: Զինված ուժերի շինարարության վերջին տարիների փորձը ցույց է տալիս, որ զինվորական կյանքի շեղումը կանոնադրական նորմերից, զինծառայողների հոգևոր կյանքի առանձնահատկությունների նկատմամբ անհրաժեշտ ուշադրության պակասը հաճախ հանգեցնում են գժտությունների, անձերի փոխհակադրման, որոնք տեղի են ունենում միկրոսոցիալական, վարքային, հոգեբանական մակարդակներում: Գժտություններով բզկտվող զինվորական կոլեկտիվներն ի վիճակի չեն կատարելու իրենց առջև դրված խնդիրները: Բացի այդ, նրանք, բացասաբար ազդելով մյուս կոլեկտիվների վրա, խաթարում են նաև նրանց նորմալ գործունեությունը:

Զինվորական կոլեկտիվի ընդհանուր վիճակը որոշվում է նախ և առաջ նրա ունակությամբ՝ սահմանված ժամկետում և ցանկացած պայմաններում մարդկային ռեսուրսների և նյութատեխնիկական միջոցների նվազագույն կորուստներով հաջողությամբ և արդյունավետորեն կատարելու իր առջև դրված մարտական խնդիրները:

Առողջ և հասուն զինվորական կոլեկտիվը կարելի է համեմատել լավ կարգաբերված մեքենայի հետ, որում յուրաքանչյուր մանրակ և հանգույց գործում են մյուսներին ներդաշնակ, դուրս չեն ընկնում ընդհանուր ռիթմից: Բանակում հրամանատարը (պետը) կոչված է տարբեր բնավորությունների և ունակությունների տեր զինվորների ջանքերը տանելու մի ընդհանուր հունով, նրանց միավորելու ու դարձնելու մի բռունցք, որը գործի իր կամքով:

Զինվորական կոլեկտիվում փոխհարաբերությունների բազմազանությունն ավելի լավ պատկերացնելու համար հարկ է քննարկել նրա կազմակերպվածքի և զարգացման փուլերի հարցը:

Ըստ ներքին կառուցվածքի զինվորական կոլեկտիվները կարելի է բաժանել երեք տեսակի՝ սկզբնական, միջին (ավագ) և բարձր: *Սկզբնական* կոլեկտիվներ են ջոկերը, դասակները, վաշտերը և դրանց համազոր այն ստորաբաժանումները, որոնք մտնում են զորամասի կազմակերպվածքի մեջ: *Միջին* կոլեկտիվներ են գումարտակները, դիվիզիոնները և դրանց համազոր այլ ստորաբաժանումներ: *Բարձր* կոլեկտիվներ են զինված ուժերի զորամասերը և կառավարման մարմինները (շտաբներ, վարչություններ, բաժիններ, ծառայություններ): Միջին և բարձր զինվորական կոլեկտիվներում սովորաբար ձևավորվում են ավելի փոքր կոլեկտիվներ ըստ ստորաբաժանումների, զինծառայողների կատեգորիաների, մասնագիտությունների և այլն:

Ստորաբաժանման կամ զորամասի կազմակերպական ձևավորումը դեռ չի նշանակում, որ ստեղծվել և գործում է զինվորական կոլեկտիվ: Համախմբված համախոհների խումբ դառնալու համար կոլեկտիվը սովորաբար անցնում է կազմավորման, զարգացման և հասունության փուլեր: *Կազմավորման* փուլը սերտորեն կապված է անհատական պատրաստման, ջոկերի և դասակների լիաներդաշնակման շրջանի հետ (ուսուցման սկզբից 2-3 ամիս անց): *Զարգացման* փուլը ավարտվում է վաշտերի կիսամյակային ամփոփիչ ստուգումներով: *Հասունության* փուլում, որպես կանոն՝ մեկ տարուց (ուսուցման երկու շրջանից) հետո, առավել համակողմանիորեն են դրսևորվում կոլեկտիվի ներուժային հնարավորությունները, հաջողությունները և անհաջողությունները հավասարապես ուրախացնում և տխրեցնում են բոլորին, հազվադեպ են լինում անտարբերներ: Սկզբնական կոլեկտիվներում հասունությունը հաստատվում է ավելի վաղ, քան մյուս կոլեկտիվներում: Հասուն կոլեկտիվում բարձր մարտական պատրաստությունը զորակոչից զորակոչ, որպես կանոն, չի նվազում, այլ մշտապես պահպանվում է դրական ավանդույթների արմատավորման և զարգացման, փոխհամատեղելիության, գժտավտանգ իրավիճակների կանխարգելման ուղղությամբ տարվող նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ:

Միանգամայն հասկանալի է, որ, հատկապես մինչև հասունության փուլը, զինվորների միջև փոխհարաբերություններում հաճախ նկատվում են գործողությունների չհամաձայնեցվածություն, հակասություններ և ոչ լրիվ լուծված պրոբլեմներ: Ասվածից բխում է, որ կոլեկտիվում գժտություն են դառնում զինծառայողների միջև դժվար կարգավորելի տարաձայնությունը, գործողությունների փոխադարձ չհամաձայնեցվածությունը, որոնք կապված են լինում սուր հուզական ապրումների և բարոյահոգեբանական մթնոլորտի լարվածության հետ: Ակնհայտ է նաև, որ ժամանակակից մարտական տեխնիկայի և սպառազինության օգտագործումը մարտում չի կարող լինել արդյունավետ, նպատակամղված, եթե չկա կուռ կոլեկտիվ:

Փորձը ցույց է տալիս, որ զինվորական կոլեկտիվներում հաճախակի ծագող գժտությունները անմիջականորեն կապված են լինում նրանցում եղած բարոյահոգեբանական մթնոլորտի, միջավայրի և իրադրության հետ:

Գժտավտանգ իրավիճակի հասունացումը հաճախ ընթանում է թաքնված, սա-

կայն փորձառու, հոգատար հրամանատարի համար դա նկատելի գործընթաց է:

Զինվորական կոլեկտիվում ծագող գժտությունները լինում են ներանձնային, միջանձնային, անձնախմբային և միջխմբային:

*Ներանձնային գժտությունը*, այսինքն է, որ դրա երկու կողմն էլ ձգտում են հասնելու նույն նպատակին, բայց դրան կարող է հասնել միայն մեկը: Բացի այդ, լինում են նաև հուզական գժտություններ, որոնք ծագում են առանձին զինվորների միջև զուտ առօրեական մտածողության մակարդակով՝ կապված



Մարտական պարապմունք ՀՀ ԶՈՒ-ի զորամասերից մեկում
Боевое занятие в одной из воинских частей ВС РА
Combat training in one of the units of the AF of the RA

տեղ ավելի լավ կլինի ասել՝ ներանձնային բախումը, ծագում է անձի, եսի երկատմամբ երկու եսի, երբ զինծառայողը հանգամանքների բերումով կանգնում է ներքին հակասության, ծանր երկընտրանքի առաջ: Մի եսը ձգտում է վարվելու արժանապատվության, բարոյական արժեքների, վերջին հաշվով՝ խղճի թելադրանքով, իսկ մյուսը՝ շահադիտական նկատառումներով: Ահա այս եսերն էլ դառնում են ներանձնային բախման յուրօրինակ կողմեր: Եվ սկսվում է ներքին տառապանքը, պայքարը երկու եսերի, երկու մտայնությունների միջև, սկսվում են տանջալից ապրումները, ընտրություն կատարելու ծանր մտորումները:

*Միջանձնային գժտության* կողմեր են առանձին զինծառայողները: Այդ գժտության առանձնահատկությունն նրանց բնավորությունների և հոգեկան վիճակների հետ:

*Անձնախմբային գժտության* էությունն է ոչ կանոնադրական, ապօրինի փոխհարաբերությունների հաստատումը: Գժտության կողմեր են, մի կողմից, նույն զորահավաքի (ավելի վաղ), նույն մասնագիտության, նույն վայրից զորակոչված զինվորների խումբը, իսկ մյուս կողմից՝ առանձին, հիմնականում ավելի ուշ զորակոչված զինվորը, որը կոլեկտիվում չի գտել իրեն համախոհ ընկերներ: Նման գժտություններն առավել հաճախ են ծագում զորակոչի և արձակման շրջանում, երբ հին ծառայողները փորձում են նոր զորակոչիկներից ընդունել «շարքայինների երդում», իրենց պարտականությունները բարդում են նրանց վրա, նրանց ստիպում են կատարելու նսեմա-

ցուցիչ աշխատանք և արժանապատվությունը ոտնահարող գործողություններ:

*Միջխմբային գժտության* կողմեր են տարբեր ստորաբաժանումների, վորամասերի, զորակոչների, մասնագիտությունների, տարբեր քաղաքներից կամ շրջաններից զորակոչված զինծառայողների խմբերը: Նման գժտություններ առաջանում են այն կոլեկտիվներում, որոնցում վատ է կազմակերպված մարտական պատրաստությունը, չկա օրվա աշխատակարգի կատարման վերահսկողություն և դաստիարակչական աշխատանքը բարձիթողի վիճակում է:

Զինվորական կոլեկտիվում ծագող գժտությունների պատճառները երեք տեսակի են՝ սոցիալ-հոգեբանական, բարոյավարքային և կազմակերպական:

*Սոցիալ-հոգեբանական պատճառների* թվին են պատկանում բանակային միջավայրում իր զբաղեցրած դիրքից դժգոհությունը, նախկին կապերի և շրփումների խզումը, առկա զինվորական կյանքի և սոցիալ-հոգեբանական վիճակի անհամատեղելիությունը զինվորական ծառայության մասին նախկին պատկերացումների հետ, կենցաղի և մշակութային կյանքի ցածր մակարդակը, հոռետեսական, անկումային տրամադրությունների երևան գալը և այլն:

*Բարոյավարքային պատճառները* կապված են այն բանի հետ, որ անհատները պատրաստ չեն լինում զինվորական ծառայության, իրենց զինվորական պարտքը կատարելիս հրամանատարները ցույց չեն տալիս անհրաժեշտ անձնական օրինակ, հմտություն, բացակայում է ծառայության փորձը, առկա են լինում անազնվության և ընչաքաղցության փաստեր, գաղափարադաստիարակչական աշխատանքը բարձիթողի է արված և այլն:

Գժտությունների *պատճառների կազմակերպական խումբը* կազմում են հրամանատարների և պետերի կողմից ղեկավարման ոչ կատարյալ ոճը, մարտական պատրաստության և զորքերի ծառայության գործում դրսևորվող ձևամոլությունը և մակերեսային մոտեցումը, զինծառայողների սխալ տեղաբաշխումը և անբավարար իրավական դաստիարակությունը, ենթակաների կյանքի և ծառայության պայմանների նկատմամբ անտարբեր վերաբերմունքը, բացասական փաստերի ու երևույթների կոծկումը ու ոչ օբյեկտիվ գնահատումը և այլն:

Զինվորական կոլեկտիվներում գժտությունները հանկարծակի չեն ծագում. դրանք առաջանում, վարգանում, սրվում և հասնում են որոշակի լուծման:

*Առաջացման փուլում* գժտությունը նկատելի է լինում ուժեղ տագնապահարության, նյարդայնության, ընկճվածության, հոգեբանական մեծ լարվածության հատկանիշներով: Գժտության առաջացման տևողությունը կարող է կարճ լինել, և միշտ չէ, որ այն նկատվում է, հատկապես երիտասարդ հրամանատարների կողմից: Հաճախ նման «մանրուքները» ուշադրություն չեն գրավում, թեև այդ ժամանակ ավելի հեշտ է կանխել գժտության հետագա զարգացումը՝ զրույցներ վարելով, խորհուրդներ տալով, դիտողություններ անելով և պատասխանատվության ենթարկելով հիրավի մեղավորներին, ամենից առաջ՝ միմյանց դեմ լարված միկրոխմբերի ղեկավարներին:

Գժտության *զարգացման փուլը* սովորաբար բնորոշվում է գժտության մասնակիցներից մեկի կողմից իր պարտքի և պարտականությունների նկատմամբ ցուցաբերվող անփույթ վերաբերմունքով, ծառայակիցների հետ զրույցների ժամանակ պաշտոնյա անձանց հասցեին բացահայտորեն բացասական արտահայտություններով, անարդարության, ծառայության արդյունքների, այդ թվում և իր անձնական ներդրման, գնահատման իր տեսակետից ոչ օբյեկտիվության գոյություն ունեցող փաստերի քննադատությամբ և դատապարտումով:

Գժտավտանգ իրադրության *սրման փուլում* բավական է նույնիսկ մի չնչին դրդապատճառ, որ կողմերն իրենց վեճը լուծեն ծայրահեղ մեթոդներով. նույնիսկ արհամարհական ժեստը, ոչ պատշաճ կատակը կամ ծամածռությունը, վիրավորական կամ ծաղրական տոնն

ու խոսքը, ամբարտավանությունը և պարծենկոտությունը չափման ժամանակ, կանխակալ վերաբերմունքը և այլն կարող են դառնալ ընդհարման բռնկման դրդապատճառ, քանի որ այդ ամենը գժտության կողմերն ընկալում են որպես վիրավորանք, իրենց հեղինակության և արժանապատվության ոտնահարում: Դժտավտանգ իրադրության պարզայումն ու արումը կարող են նույնպես կարճ տևել և ընթանալ թաքնված ձևով՝ մինչև իրենց լուծման պատեհ առիթը:

*Լուծման փուլում* բացահայտորեն արվում են վիրավորական արտահայտություններ, հարցի ինքնակամ լուծման, բռնի գործողությունների, ֆիզիկական վնասվածք հասցնելու, կարգապահական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու սպառնալիքներ ու փորձեր: Չպետք է մոռանալ, որ բանակի պայմաններում գժտության լուծման հետևանքները հղի են ծայրահեղ բարդություններով, քանի որ հնարավոր է դառնում զենքի, զինամթերքի և մարտական տեխնիկայի կիրառումը:

Մեր զինված ուժերում գժտությունների ծագման համար չկան խոր, սկզբունքորեն դժվար հաղթահարելի հակասություններ. կան մեկ ազգ, մեկ հավատ, մեկ լեզու, անցյալի փառապանծ ավանդույթներ և ապագայի հուսադրող հեռանկարներ: Զինվորական կոլեկտիվում ձևավորվող հարաբերությունների և գժտությունների պատճառների իմացությունը, ժամանակին այդ գժտությունների կանխարգելումը զորամասերի ու ստորաբաժանումների բարձր մարտական պատրաստականության և կարգապահության ապահովման նախադրյալներ են:

Զինվորական կոլեկտիվներում գժտությունների կանխարգելումը և լուծումը անմիջականորեն կապված են հրամանատարի՝ միանձնյա ղեկավարի հեղինակության հետ: Ի դեպ, զորապետներից և հրամանատարներից շատերի կարծիքով այդ հեղինակությունը պետք է հենվի և հաճախ հենվում է վստահության, հարգանքի և սիրո վրա: Վստահությունը ձեռք է բերվում մեծ հմտության և մասնագիտական բարձր մակարդակի բերումով: Հարգանքը ներշնչվում է ազնվությամբ, իսկ սերը՝ ենթակաների նկատմամբ հոգատար վերաբերմունքով և նրանց շահերի պաշտպանությամբ:

Սոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ հրամանատարի հեղինակությունը հիմնվում է իրեն վստահված կոլեկտիվին ղեկավարելու, կառավարելու, իր և ենթակաների նկատմամբ համապարաչափ պահանջկոտություն, նրանց նկատմամբ հոգատարություն ցուցաբերելու վրա: Որպես կանոն, հրամանատարի հետ են կապվում բոլոր հաղթանակները և պարտությունները, հաջողությունները և ձախողումները: Փաստ է, որ ծառայության համարյա նույն պայմաններում միևնույն զորամասում որոշ ստորաբաժանումներ հաջողությամբ կատարում են իրենց մարտական առաջադրանքները, բարձր ցուցանիշների են հասնում մարտական ուսուցման, ծառայության և կարգապահության գործում, իսկ մյուսներին հետապնդում են լոկ անհաջողություններն ու ձախողումները:

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ում ծառայում են մեծ թվով առաջափոր հրամանատարներ և պետեր, որոնք արժանի հեղինակություն են վայելում իրենց ստորադրյալների շրջանում: Նրանց փորձը վկայում է, որ գժտավտանգ իրադրությունը կանխելու համար անհրաժեշտ է ստեղծել հրամանատարների պատրաստության գործուն համակարգ: Պարապմունքների ընթացքում հրամանատարները պետք է սովորեն կատարել զանազան առաջադրանքներ, սովորեցնել և դաստիարակել ստորադրյալներին, պետք է մասնակցեն փորձի փոխանակման և այլն: Հրամանատարը պետք է իր ստորադրյալներից շատ գիտելիքներ ունենա, կարողանա օրինակելի ձևով կատարել իր կանոնադրական պարտականությունները և սահմանված նորմատիվները, լինի կարգապահ, իր ստորադրյալների համար օրինակ ծառայի, իրավունք ձեռք բերի ասելու. «Արա՛, ինչպես ես եմ անում»:

Զորքերում կատարված ստուգումների արդյունքները ցույց են տալիս, որ

զինվորական կոլեկտիվներում գժտությունների կանխարգելման և բացառման համար անհրաժեշտ է լավ կազմակերպել մարտական պատրաստությունը, գաղափարադաստիարակչական աշխատանքը, զորքերի ծառայությունը և ստեղծել կյանքի ու զինվորական ծառայության բավարար պայմաններ: Միասին վերցված այս բաղադրամասերը ձևավորում են այն առողջ բարոյահոգեբանական մթնոլորտը, որը գժտությունների կանխարգելման և բացառման գլխավոր պայմաններից մեկն է: Դրանցից հատկապես կարևոր է լավ կազմակերպված մարտական պատրաստությունը, որը վերացնում է հոռի սովորույթների դրսևորման հողը: Հարկ է ընդգծել, որ ուսուցումը և դաստիարակությունը միասնական, փոխկապակցված և փոխպայմանավորված գործընթացներ են:

Գժտավտանգ իրավիճակը հնարավոր չէ կանխարգելել առանց կոլեկտիվում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի օբյեկտիվ գնահատման: Փորձով ապացուցված է զինվորական կարգապահական պրակտիկայի կանոնավոր վերլուծության անհրաժեշտությունը: Դա հնարավոր է բոլոր խախտումների, հատկապես միջադեպերի և հանցագործությունների, տույժերի և խրախուսումների խստիվ ու օբյեկտիվ հաշվառման դեպքում, որի նպատակն են դրանց աճման կամ նվազման միտումի, կարգապահության ամրապնդման գործում հրամանատարների և պետերի մասնակցության աստիճանի որոշումը, կարգապահության վիճակի ճիշտ գնահատումը, հանցանքների կանխման և վերացման ուղղությամբ հիմնավորված որոշումների ընդունումը:

Հարկ է խստիվ պահպանել զինվորական կանոնադրությունների այն պահանջը, որ տույժը պետք է համապատասխանի մեղավորության և խրախուսանքը՝ ծառայողական գերազանցության աստիճանին. հակառակ դեպքում դրանք օգուտի փոխարեն կարող են միայն վնաս բերել:

Մարդկանց հետ տարվող աշխատանքում դրսևորվող ձևամոլությունը, զինվորական կարգապահության վիճակի ու զինծառայողների ծառայողական փոխհարաբերությունների մակերեսային վերլուծությունը և ոչ օբյեկտիվ գնահատումը թույլ չեն տալիս ժամանակին կանխելու գժտավտանգ իրավիճակները:

Զինվորական կոլեկտիվներում գժտությունների պատճառների վերացմանը նպաստում է զինվորների ճիշտ բաշխումը ստորաբաժանումների վրա ըստ նրանց ծառայության ժամկետների, ֆիզիկական և մասնագիտական ընդունակությունների, տարիքի, կրթության, առողջական վիճակի, ընտանեկան դրության, աշխատանքային ստաժի: Դա արվում է այն նպատակով, որ զինվորների փոխհարաբերությունները ձևավորվեն նրանց հոգեբանական համատեղելիության հիման վրա: Զորամասերում կան բազմաթիվ փաստեր, երբ հոգեբանական անհամատեղելիության պատճառով կատարվում են խախտումներ, առաջանում են գժտություններ և, որպես դրա հետևանք՝ զինվորական ծառայությունից խուսափելու ձգտում: Պաշտոնը զբաղեցնելիս իր «թիմին» հետը վերցնելու պրակտիկան (եթե, իհարկե, դրանք շատ արժանավոր կադրեր չեն) հաճախ իրեն չի արդարացնում:

Գժտությունների կանխման և զինվորական կարգապահության ամրապնդման գործում մեծ նշանակություն ունի ամեն կարգի զինծառայողների հետ լավ կազմակերպված անհատական-դաստիարակչական աշխատանքի գործուն համակարգի ստեղծումը: Հրամանատարներից շատերը գերադասում են հետևյալ համակարգը. շարքայինների շրջանում նման աշխատանք տանում են սերժանտները և ավագները, սերժանտների և ավագների հետ՝ դասակների, վաշտերի և մարտկոցների հրամանատարները, դասակների հրամանատարների հետ՝ վաշտերի, մարտկոցների, գումարտակների և դիվիզիոնների հրամանատարները, վաշտերի, մարտկոցների հրամանատարների և ծառայությունների պետերի հետ՝ զորամասի հրամանատա-

րի տեղակալները, գումարտակների, դիվիզիոնների հրամանատարների և վաշտերի, մարտկոցների պետերի հետ՝ վաշտերի հրամանատարները: Կարող են լինել նաև այլ տարբերակներ, սակայն



Տանկի անձնակազմի հրահանգավորում մարտավարական պարապմունքից առաջ
Инструктаж танкового экипажа перед занятием по тактической подготовке
Instructing of the tank crew before the tactical exercises

հարցն այն է, որ ընտրված համակարգը գործի մշտապես և նպատակաուղղված*: Ընդսմին անհատական-դաստիարակչական աշխատանքի հիմնական ձևեր կարող են դառնալ անձնական առանձնահատկությունների ուսումնասիրումը, զրույցները, խորհրդի ձևով ցույց տրվող օգնությունը, անհատական առաջադրանքները կամ հանձնարարությունները, հոգածությունը առաջացած պրոբլեմների ժամանակին լուծման նկատմամբ: Բարձր սպայական կոլեկտիվներում կարող է ծավալվել հրամանատարների և պետերի շեֆությունը երիտասարդների նկատմամբ:

Զորամասերում և ստորաբաժանումներում գժտությունների կանխման գործում չափազանց մեծ դեր է խաղում զորքերի ծառայության հստակ կազմակերպումը: Հիշեցնենք, որ այդ ծառայությունը ներառում է ներքին, պահակային, կայազորային, հավաքակազմային ծառայությունները, հակահրդեհային պահպանությունը, անցագրային համակարգը, զինծառայողների և այցելուների ընդունելությունը, նամակների, բողոքների և դիմումների քննումը: Դրանց միջոցով վաղօրոք հայտնի է դառնում հարաբերություններում ծագած բացասական միտումների և հասունացող իրավախախտումների մասին. պետք է միայն ժամանակին արձագանքել դրանց և ձեռք առնել համապատասխան միջոցներ:

Առաջավոր զորամասերում զորքերի ծառայության վիճակը կանոնավոր (ամիսը, եռամսյակը, կիսամյակը և տարին մեկ անգամ) վերլուծվում է, և եզրակացությունները հրամանի միջոցով հայտարարվում են զորամասում: Մեր տեսակետից ճիշտ են վարվում այն զորամասերում, որտեղ կարգապահության և զորքերի ծառայության վիճակները վերլուծվում են միաժամանակ և եզրակա-

* Պարապմունքների կազմակերպման մասին տես *Մ. Ս. Սարկիսյան*, Հրամանատարների պատրաստությունը որպես ՀՀ ԶՈՒ-ի մարտունակության բարձրացման հիմք: «ՀԲ», 1997, հմ. 3: *Խմբ.*:

-յությունները հրապարակվում են մեկ հրամանով:

Զինվորական շրջանավարտների տեղաբաշխումից հետո զինվորներից երկուսը ծառայում էին սահմանամերձ գոտում: Տեղացի զինվորները ճնշում էին նրանց,ստիպում կատարել անձը նսեմացնող գործողություններ, նրանց վրա էին բարդում իրենց տրված հանձնարարությունները և այլն: Այդ երկու զինվորը, հիշելով, որ ուսումնական ստորաբաժանումում շարունակում են ծառայել երկու զինվոր այդ շրջանից, ինքնակամ կերպով լքեցին իրենց զորամասը և որոշեցին վերադառնալ ու վրեժխնդիր լինել նրանցից, որոնց «մեղքը» լոկ այն էր, որ այդ շրջանից էին: Զորքերի ծառայության կարգավորվածության և հստակ կազմակերպման շնորհիվ այս ընդհարումը կանխվեց, և համապատասխան միջոցներ ձեռք առնվեցին կարգուկանոն հաստատելու և մեղավորներին պատժելու ուղղությամբ:

Այսպիսով՝ զինվորական կոլեկտիվներում գժտությունները օբյեկտիվ իրողություն են: Հրամանատարների (պետերի) խնդիրն է կանխատեսել դրանք և կանխել գժտավտանգ իրավիճակները, կասեցնել դրանց պարգացումը, սրումը: Գժտությունների ժամանակին կանխման և վերացման համար անհրաժեշտ է, որ հրամանատարը կամ պետը վայելեն գործնական մեծ հեղինակություն, ամեն կարգի զինծառայողների հետ վարեն մշտական և նպատակամղված կազմակերպական և գաղափարադաստիարակչական աշխատանք, կյանքի և ծառայության համար ստեղծեն բարենպաստ սոցիալ-կենցաղային և մշակութային պայմաններ:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Основы военной психологии и педагогики». Воениздат, М., 1981.

2. *Н. Ф. Феденко, В. П. Галицкий.* Психологические аспекты преодоления конфликтных ситуаций в воинских коллективах. Изд. ВПА, М., 1981.

3. *А. Д. Глоточкин.* Воинские коллективы. Коллектив и личность. Изд. «Наука», М., 1975.

4. «В помощь лектору». 1987, N 4 (102).

# ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

## ПРИЧИНЫ РАЗДОРОВ В ВОИНСКИХ КОЛЛЕКТИВАХ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ

*Р. Т. БАХШЯН, полковник*

РЕЗЮМЕ

Высокие боевые качества быстрее формируются в тех коллективах ВС, командиры которых ориентируются на создание здоровой морально-психологической атмосферы, воспитание подчиненных в духе взаимопомощи, дружбы и сплоченности. Отклонение от уставных норм, игнорирование особенностей духовной жизни военнослужащих, пренебрежение к обеспечению социально-бытовых и культурных условий для жизни и службы могут привести к раздорам, конфликтным ситуациям, дезорганизующим нормальное функционирование подразделений и частей.

Возникающие в воинских коллективах раздоры по своей сущности подразделяются на внутриличностные, межличностные, личностно-групповые и межгрупповые конфликты.

*Внутриличностные конфликты* возникают в результате противоречий

между ценностными ориентациями самой личности, приводящими к ее раздвоению в процессе принятия решения по альтернативному выбору на поведенченских рубежах.

*Межличностные конфликты* возникают между отдельными воинами. Их особенность в том, что между воинами возникают эмоциональные конфликты, связанные с их характерами и психикой.

*Личностно-групповые конфликты* характеризуются установлением неуставных взаимоотношений между группой воинов одного, обычно старшего, призыва, специальности, района и отдельным воином, обычно — молодым.

*Межгрупповые конфликты* возникают между отдельными группами военнослужащих различных подразделений, частей, призывов, районов, сроков службы, специальностей.

Причины раздоров можно подразделить на социально-психологические, морально-этические и организационные.

К *социально-психологическим причинам* относятся: неудовлетворенность воинов своим положением в армейской среде, разрывы прежних связей и контактов, социально-психологическая несовместимость условий их жизни с прежними представлениями о воинской службе, упаднические настроения и т. д.

*Морально-этические причины* связаны с тем, что отдельные личности бывают в недостаточной степени готовы к военной службе, не на должном уровне находится идейно-воспитательная работа, имеют место факты нечестности и корыстолюбия.

*Организационные причины* заключаются в формализме при организации боевой подготовки и службы войск, в неправильном подборе, расстановке и воспитании военнослужащих, в пренебрежении к условиям жизни и службы подчиненных, в необъективной оценке достигнутых результатов, негативных явлений.

Конфликты не вспыхивают сразу, а проходят этапы возникновения, развития, обострения и разрешения.

На *этапе возникновения* конфликтная ситуация может быть легко определена по признакам повышенной нервозности, угнетенности, психической активности и неуравновешенности и устранена путем бесед, советов, замечаний и привлечения к ответственности лидеров конфликтующих микрогрупп.

*Этап развития* конфликта обычно характеризуется халатностью в выполнении своего воинского долга и обязанностей, высказываниями в адрес должностных лиц, необоснованной критикой и осуждением бытующих на его взгляд фактов необъективности в оценке процесса и результатов службы.

На *этапе обострения* для разрешения конфликта крайними мерами достаточен даже малейший повод: оскорбительный тон, предвзятое отношение.

На *этапе разрешения* наглядно видны угрозы и попытки насильственных действий, привлечения к дисциплинарной или уголовной ответственности. В условиях армии последствия разрешения конфликтов представляют особую опасность в связи с возможностью применения оружия, боеприпасов и боевой техники.

Социологические исследования показывают, что профилактика предупреждения и преодоления раздоров в основном связана с авторитетом командира-единоначальника, основанном на доверии, уважении и любви под-

чиненных, которые можно заслужить высоким мастерством и профессионализмом, честностью и добросовестностью, одинаковой требовательностью к себе и подчиненным, чуткостью и заботой о них.

В целях предупреждения конфликтных ситуаций необходимо регулярно анализировать состояние боевой подготовки, воспитательной работы, дисциплины и службы войск путем строгого и объективного учета всех нарушений, взысканий и поощрений для установления тенденции их роста или снижения, определения роли командиров и начальников в укреплении дисциплины, принятия обоснованных решений по предупреждению и искоренению правонарушений.

## MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

### THE REASONS OF EMERGING CONFLICTS IN MILITARY ORGANIZATIONS AND POSSIBLE WAYS TO ELIMINATE THEM

*R. T. BAKHSHIAN, Colonel*

SUMMARY

The high battle skills are more rapidly formed in such collectives of the Armed Forces, where the commanders try to create a healthy moral-psychological atmosphere, educate the subordinate soldiers in the spirit of mutual assistance, friendship and solidarity. Deviation from army regulation norms, defying servicemen's spiritual life peculiarities, contempt to the provision of the conditions of social and cultural life and service may lead to the conflicts, clashes, disorganizing normal functioning of the units.

The conflicts are intra-individual, inter-individual, group—individual and group—group.

The intra-individual conflicts arise from contradictions between value orientations of the individual, which bring to individual-splitting-apart while making decisions by alternative choice based on his behavour.

The inter-individual conflicts arise between separate soldiers. Their peculiarity is that the emotional conflicts between soldiers arise due to their characters and mentality.

The group—individual conflicts are defined by non-army regulational relations between the group of the same, usually senior draft soldiers, soldiers of the same speciality, from the same region and individual soldier, usually—recruit.

The group—group conflicts arise between separate groups of servicemen from different units, regions, terms of the service, and specialities.

The reasons of conflicts could be defined as social-psychological, moral-ethic and organizational.

The social-psychological reasons are: dissatisfaction of the soldiers with their position in the army environment, collapse of previous relations and contacts, social-psychological incompatibility of life conditions with previous notions of military service, decadent mood, etc.

The moral-ethic reasons of the conflicts relate to the fact that individuals are not always ready for the military service, ideological and educational work is not on the necessary level, there is dishonesty and cupidity.

The organizational reasons of conflicts are: formalism in organizing combat

training and army services, incorrect selection, distribution and education of servicemen, contempt to life and service conditions of the subordinate soldiers, subjective assessment of the achieved results, negative occurrences.

Conflicts do not arise at once, and have the phases of arising, development, aggravation and solution.

At the arising phase conflict situation can be easily determined by the indications of nervousness, depression and psychological activity and instability and can be eliminated through the personal talks, advises, critical remarks and making the leaders of microgroups subject to responsibility.

The phase of conflict development is usually defined by negligence to performance of their military duty and responsibilities by the soldiers, comments on officials, unfair criticism and blame, up to him, of biased assessment of his service process and result.

At the phase of aggravation even the small reason is enough for the solution of the conflict with extremal ways: insulting tone, preconceived opinion, etc.

At the phase of conflict solution threats and attempts to forcible acts, calling to disciplinaire or criminal account are obvious. In army there is a danger of the consequences of conflict solution, due to the availability of weapons, ammunition and combat equipment.

The sociological researches show, that prophylaxis of conflict prevention and solution is mainly related with the prestige of the commander-in-chief, based on the confidence, respect and love of subordinate soldiers, which can be deserved by high level of skills and professionalism, honesty and conscientiousness, same self-discipline and insistence to subordinates, sympathy and care towards the soldiers.

With a purpose of conflict situation prevention there is a need to analyze regularly the state of combat readiness, education, discipline and army services by strict and objective registration of all violations, penalties and rewards for establishing the tendency of their increase or reduction, for defining a level of commanders and chief's participation in discipline strengthening, making well founded decisions on prevention and eradication of discipline violations.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

*Ռ. Ա. ԱՅԴԻՆՅԱՆ, մայոր*

Պայթուցիկ նյութերի էներգիայի օգտագործման հարցերին վերաբերող տեղեկությունների հրապարակումներում սահմանափակումներն անհրաժեշտ են, որպեսզի չբացահայտվեն պաշտպանական նշանակություն ունեցող տեղեկությունները և բացառվեն բաց այդ հրապարակումների ահաբեկչական և այլ հնարավոր քրեածին նպատակներով ինքնաշեն պայթուցիկ նյութերի ու հրատեխնիկական սարքերի պատրաստման հնարավորությունները:

Պայթյունները կարելի է բաժանել հետևյալ տիպերի.

ա) ֆիզիկական (երբ փոխվում է նյութերի միայն ֆիզիկական վիճակը),

բ) քիմիական (նյութերի քիմիական փոխակերպման հետևանքով),

գ) միջուկային (տրոհման և համադրման ռեակցիաների ժամանակ ելանյութի ատոմների միջուկների փոխակերպում այլ տարրերի միջուկների):

Հրապարակումները մեծ մասամբ կապված են լինում քիմիական պայթյունների բնագավառի հետ, պայթյուններ, որոնք իրականացվում են պայթուցիկ նյութերի և հարուցող միջոցների օգնությամբ:

**Պայթուցիկ նյութերը** քիմիական միացություններ կամ նյութերի խառնուրդներ են, որոնք ընդունակ են իմպուլսի ազդեցությամբ (տաքացում, հարված և այլն) արագ քայքայվելու (ռեակցիայի մեջ մտնելու) անջատելով մեծ քանակությամբ ջերմային էներգիա: Պայթուցիկ նյութերը կարող են լինել գազային, հեղուկ, պինդ կամ դրանց համակցություն (փոշի, դոնդող և այլն): Գազային և հեղուկ պայթուցիկ նյութերը տնտեսության մեջ հազվադեպ են կիրառվում:

Կախված քիմիական փոխակերպման ձևից՝ պայթուցիկ նյութերը բաժանվում են վառոդի և փշրող նյութերի:

*Վառոդներին* հատուկ է փոխակերպումը ուղղակի կամ պայթյունով այրման ձևով: Դրանց պայթումը հիմնականում ծառայում է որպես արկերի կամ այլ մարմինների շարժման (նետման) միջոց: Վառոդները կարող են լինել նիտրոցելյուլոզային (անծուխ) և խառնուրդային (օրինակ՝ ծխային վառոդը փայտածխի, կալիումական աղի և ծծմբի խառնուրդ է): Վառոդները հիմնականում օգտագործվում են ռազմական բնագավառում:

*Փշրող պայթուցիկ նյութերի* քայքայումը տեղի է ունենում դետոնացիայի ձևով (գերձայնային արագությամբ տարածվող հարվածային ալիք): Դրանք ունենում են ավերող, կոտրատող ազդեցություն: Փշրող պայթուցիկ նյութերը կարող են լինել առաջնային (հարուցող) և երկրորդային (իմպուլսի նկատմամբ պակաս զգայուն): Առաջնային պայթուցիկ նյութերի (շառաչուն սնդիկ, կապարի ազիդ, կապարի տրինիտրառեզորցինատ) պայթյունը հեշտությամբ առաջանում է պարզ ձևերի արտաքին ազդեցությունների միջոցով: Երկրորդային պայթուցիկ նյութերի պայթյունի համար պահանջվում է ավելի ուժեղ սկզբնական իմպուլս (օրինակ՝ առաջնային պայթուցիկ նյութի ոչ մեծ լիցքի պայթյուն): Երկրորդային պայթուցիկ նյութերը (ամոնիտ, դետոնիտ և այլն) մեծ մասամբ տարբեր բաղադրամասերի խառնուրդներ են: Երկրորդային պայթուցիկ նյութերը լայն տարածում ունեն ինչպես

ռազմական բնագավառում, այնպես էլ տնտեսության մեջ:

**Հարուցող (ինիցող) միջոցները** պայթուցիկ նյութերի ամբողջ կանգվածի պայթման անմիջական հարուցման համար օգտագործվող միջոցներն են: Հարուցումը կատարվում է հպումային և անհպումային եղանակներով: Առաջին դեպքում առաջնային պայթուցիկ նյութերի պայթյունի հարուցումը կատարվում է հարվածի, շփման, թափահարման, կայծի կամ կրակի ճառագայթման ներգործությամբ: Հպումային հարուցող միջոցներ են տարբեր այրիչ փամփուշտները, պատրույգները, էլեկտրալուցիչները, կրակ հաղորդող և դետոնացնող քուղերը, բոցավառիչները, պարկուճադետոնատորները, էլեկտրադետոնատորները և այդ կարգի այլ միջոցներ: Դրանց մեծ մասում օգտագործվում են այնպիսի առաջնային պայթուցիկ նյութեր, որոնք առավել զգայուն են կայծի կամ հարվածի նկատմամբ: Անհպումային հարուցող միջոցներ են, օրինակ, լազերային, օպտիկական, ռադիոտեղորոշումային, ձայնային միջոցները:

**Պայթուցիկ նյութերի բաղադրատոմս** ասելով հասկացվում է դրանց բաղադրատարրերի արձանագրումը իրենց հարաբերակցությամբ՝ արտահայտված տոկոսներով, մասերով և այլն: Բաց հրապարակումներում չպետք է նշվեն բաղադրատարրերի քանակները: Օրինակ՝ կարելի է գրել, որ ամոնիտը բաղկացած է ջրակայուն ամոնյակային աղից, նիտրոեթերի խառնուրդից և այլն, բայց չի կարելի հրապարակել այդ պայթուցիկ նյութի բոլոր, թեկուզ առանձին բաղադրատարրերի քանակությունները և տոկոսային հարաբերությունները:

**Պայթուցիկ նյութերի պատրաստման տեխնոլոգիական գործընթացի պարամետրներ** են ֆիզիկաքիմիական, տեխնոլոգիական ցուցանիշները, պայթուցիկ նյութի պատրաստման հիմնական գործողությունների հաջորդականությունը, օրինակ՝ խառնման հաջորդականությունը, օգտագործվող բաղադրիչների քանակները, խառնման ժամանակային և ջերմային ընդգրկույթները և այլն: Պայթուցիկ նյութերի պատրաստման տեխնոլոգիայի վերաբերյալ հրապարակումներում չպետք է նշվեն որոշ բաղադրատարրեր իրենց օգտագործման եղանակով հանդերձ, ինչպես նաև բաղադրատարրերի քանակները:

Եթե պայթուցիկ նյութը և դրա ստեղծման տեխնոլոգիան ունեն պաշտպանական նշանակություն և կիրառվում են համապատասխան ցենքի արտադրության մեջ, ապա այս կապակցությամբ առաջ է գալիս մամուլում դրանց վերաբերող տեղեկությունների հրապարակման կարգավորման հարցը: Հասկանալի նկատառումներով այդ հրապարակումների վրա պետք է դրվեն որոշակի սահմանափակումներ, համաձայն ՀՀ «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» օրենքի 6-րդ հոդվածի և ՀՀ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի 8-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների:

Եթե հրապարակվող նյութից բխում է կատարված հետազոտության պաշտպանական ուղղվածությունը, ապա նման նյութը ըստ «ՀՀ պետական գաղտնիքի շարքը դասվող տեղեկությունների ցանկի» 6-րդ և 7-րդ կետերի չպետք է հրապարակվի: Եթե տեքստից չի հետևվում պաշտպանական ուղղվածությունը, բայց նկարագրվում են հարուցման նոր սկզբունքներ, որոնք կարող են օգտագործվել նոր արտադրանքի ստեղծման նպատակով և որոնք նախկինում չեն հրապարակվել, ապա այդ նյութը ըստ նշված ցանկի 16-րդ կետի նույնպես չի կարելի հրապարակել:

**Հրատեխնիկական բաղադրությունները** այնպիսի նյութեր կամ նյութերի խառնուրդներ են, որոնց այրման ժամանակ առաջանում են լուսային, ջերմային, ծխային, ռեակտիվ էֆեկտներ: Այդ բաղադրությունները իրենց հատկություններով կարծես թե միջանկյալ դիրք են գրավում պայթուցիկ նյութերի և այրվող նյութերի միջև: Պարզապես դրանց պայթուցիկ այրման գործընթացները հարաբերականորեն ընդլայնվում են ժամանակի

մեջ: Հրատեխնիկական (տերմիտային) բաղադրությունները կիրառվում են տընտեսական նշանակություն ունեցող բազմաթիվ արտադրատեսակների արտադրության մեջ: Հրատեխնիկական բաղադրությունների այրման ժամանակ կարող են առաջանալ, օրինակ, գազային թթվածին (որն անհրաժեշտ է շնչառության համար), ջերմային (շենքերը տաքացնելու համար) և ծխային (վնասակար միջատների դեմ պայքարի համար) միջոցներ:

Հրատեխնիկական բաղադրությունները լայնորեն կիրառվում են նաև ռազմական նպատակներով (լուսավորող, ազդանշանային, ծխային միջոցներ, պինդ հրթիռային վառելիք, նյութեր տարբեր արգելքների ստեղծման համար և այլն): Տնտեսական նախանշանակման հրատեխնիկական բաղադրությունների մասին հրապարակումներում չպետք է լինեն դրանց պատրաստման և հրավառման եղանակներին վերաբերող տեղեկություններ՝ բացառությամբ կենցաղում լայն կիրառում ստացած բաղադրությունների, օրինակ՝ լուցկու: Արգելվում է հրապարակել ցանկացած տվյալ, որը վերաբերում է պաշտպանական նշանակություն ունեցող հրատեխնիկական բաղադրություններին և դրանց նոր տեսակներին:

Տնային պայմաններում պայթուցիկ նյութերի, հարուցող միջոցների, հրատեխնիկական բաղադրությունների պատրաստման համար որոշ դեպքերում կարող են օգտագործվել պարզ բաղադրատարրերից կազմված նյութեր, որոնք մատչելի են ձեռքբերման համար, և այդ բաղադրությունները հնարավոր է ստանալ ոչ բարդ քիմիական ռեակցիաների միջոցով: Հետևաբար, այդպիսի աշխատանքների վերաբերյալ բաց հրապարակման ժամանակ պետք է սահմանափակել ինչպես բաղադրատարրերի, այնպես էլ պատրաստման գործընթացների թվարկումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *А. М. Петросьянц.* Атомная энергия в науке и промышленности. М., «Энергоиздат», 1984.
2. «Информация об аварии на Чернобыльской АЭС и ее последствиях, подготовленная для МАГАТЭ». М., «Атомная энергия», т. 61, вып. 5, 1986.
3. «Справочник по буровзрывным работам». М., 1976.

# ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

## ВЗРЫВЧАТЫЕ ВЕЩЕСТВА И ОГРАНИЧЕНИЯ НА ПУБЛИКАЦИЮ ОТНОСЯЩИХСЯ К НИМ СВЕДЕНИЙ

*Р. А. АЙДИНЯН, майор*

РЕЗЮМЕ

Ограничения на публикацию сведений о взрывчатых веществах (ВВ) необходимы для того, чтобы не раскрывать сведения, имеющие оборонное значение, или исключить возможность использования информации из публикаций для изготовления самодельных взрывчатых и пиротехнических составов в террористических или иных возможных криминальных целях.

Взрывчатые вещества — это химические соединения или смеси химических веществ, способные под воздействием импульса (нагрева, удара и т. п.) быстро разлагаться (вступать в реакцию) с выделением большого количества тепловой энергии. ВВ могут быть газообразными, жидкими, твердыми или их сочетаниями (пыль, гель и т. п.).

Средствами инициирования являются средства, используемые для непосредственного возбуждения взрыва всей массы ВВ. Инициирование может

осуществляться контактным и неконтактным способами. В первом случае возбуждение взрыва происходит от удара, трения, искры и т. д. К средствам контактного инициирования относятся различные зажигательные патроны, фитили, электрозажигатели и подобные устройства. К неконтактным способам относится, например, оптическое, радиолокационное, акустическое инициирование.

Пиротехнические составы — это такие вещества или смеси, при горении которых возникают световые, тепловые, дымовые, реактивные эффекты.

Согласно законам РА «О печати и других средствах массовой информации» и «О государственной и служебной тайне» запрещено приводить в открытой печати как данные о ВВ, средствах инициирования и пиротехнических составах оборонного значения, так и описание технологических процессов по их созданию.

## MILITARY INFORMATION

### EXPLOSIVES AND RESTRICTIONS ON THE PUBLICATION OF THE RELATED INFORMATION

*R. A. AIDINIAN, Major*

SUMMARY

The restrictions on the publication of the information on explosives are necessary in order to cover the information of defensive importance, or to exclude the opportunity for using the information from the publications for manufacturing self-made explosive and pyrotechnical mixtures in terroristic or other possible criminal purposes.

Explosives are chemical compounds or mixes of chemical substances, capable to quickly decompose (to enter into reaction) under the influence of an impulse (of heating, blow and so on) with allocation of a plenty of a thermal energy. Explosives can be gaseous, liquid, solid or their combinations (dust, gel, etc.).

Ways of initiation are means, used for direct excitation of explosion of the whole mass of explosives. The initiation can be done by contact and non-contact ways. In the first case the excitation of explosion occurs from blow, friction, spark or others. Various incendiary bullets, slow matches, electric igniters and other similar devices relate to the means of contact initiation. Optical, radar, acoustic and the other kinds of initiation relate to the means of non-contact initiation.

Pyrotechnical mixtures—are those substances or mixes, burning of which results in light, thermal, smoke and jet effects.

According to the laws of the RA on «Press and means of mass media» and on «State and service secret» it is forbidden to publicize data about explosives, means of initiation and pyrotechnical mixtures of defensive importance and description of technological processes of their creation.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏ

## ՃԱՆԱՊԱՐՀԱՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՆԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

*Է. Հ. ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ, փոխգնդապետ*

Ավտոտրանսպորտի, ինքնագնաց այլ մեքենաների ու մեխանիզմների վթարները իրավաբանության մեջ որակվում են որպես պատահարներ, և դա՝ այն պարզ պատճառով, որ ոչ մի վարորդ, տրանսպորտի շահագործման համար պատասխանատու ոչ մի պաշտոնատար անձ իր գործողության կամ անգործության ժամանակ որևէ մեկին վնաս պատճառելու դիտավորություն չի ունենում (մենք նկատի ունենք, այսպես ասած, բնական վթարները, հաշվի չենք առնում այն դեպքերը, երբ սարքվում են արհեստական վթարներ սպանության կամ այլ հանցավոր նպատակներով): Այլապես օրենսդիրը դրանք կորակեր որպես անձի դեմ ուղղված դիտավորյալ արարք՝ համապատասխան հետևություններով:

Չնայած դրան՝ շարժվող տրանսպորտային միջոցի հետ տեղի ունեցած պատահարը պարունակում է հանցագործության հատկանիշներ, քանի որ այն, այսպես թե այնպես, առաջանում է անձի հանցավոր անփութության, օրենքի, կանոնների այս կամ այն պահանջի խախտման հետևանքով:

Տրանսպորտային միջոցները ստեղծման ժամանակից ի վեր մեծ վտանգ են ներկայացնում իրենց կիրառության ժամանակ: Այդ նկատառումով էլ ժամանակին մշակվել են հատուկ կանոններ, հրահանգներ և այլ փաստաթղթեր՝ ուղղված հնարավոր վտանգի նվազեցմանը, տրանսպորտի աշխատանքի կարգավորմանն ու հստակեցմանը: Ընդ որում այդ կանոնները շարունակ լրացվում, կատարելագործվում են՝ կապված տրանսպորտային միջոցների շատացման ու բարդացման հետ, տարբեր տեսակի ճանապարհների կառուցման, բնակավայրերում բնակչության խտության աճման և այլ հանգամանքների հետ: Նշենք երկու այդպիսի կանոն, որոնք հատկապես կարևոր են ներկայումս, մասնավորապես զինված ուժերում:

1. Մեքենա վարող յուրաքանչյուր անձ պետք է ունենա տվյալ կատեգորիայի տրանսպորտային միջոց վարելու իրավունք (վկայական):

2. Մեքենայի կառուցվածքը, տեխնիկական վիճակը պետք է համապատասխանեն որոշակի պայմանների, ստանդարտների:

Ինքնին հասկանալի է, որ վարորդը պետք է մեքենան վարի՝ չխախտելով երթևեկության և մեքենայի շահագործման կանոնները:

Կան նաև կոնկրետ հրահանգներ, ցուցումներ, հրամաններ՝ ուղղված մեքենաների շահագործման համար պատասխանատու պաշտոնատար անձանց գործողությունների կարգավորմանը:

Հիմնականում այս կանոնների, հրահանգների, ցուցումների պահպանումն էլ դառնում է տրանսպորտում վթարայնության կանխման պայման:

Եվ անցած տարիներին հենց այս պահանջների խախտումներն էլ հայոց բանակում առաջ են բերել մի շարք ցավալի պատահարներ, այդ թվում՝ մարդկային զոհերով:

Ցավալի է, որ համեմատաբար խաղաղ պայմաններում մի վարորդի կամ պաշտոնատար անձի անտարբերության, անփութության հետևանքով մարդիկ զոհվում, վիրավորվում են, զգալի վնաս է հասցվում զինված ուժերի տեխնիկային:

Մեր բանակում տեղի ունեցած ճանապարհատրանսպորտային պատահարների վիճակագրությունը հետևյալն է:

1993 թ. տեղի է ունեցել 20 պատահար: 1994 թ. նախորդ տարվա համեմատությամբ պատահարների թիվն աճել է 40 տոկոսով, զոհվածների թիվը նվազել է 12,5 տոկոսով, վիրավորներինը աճել է 133 տոկոսով: 1995 թ. 1994-ի համեմա-

Գրաֆիկ 1

ՊԱՏԱՀԱՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




տությամբ պատահարների թիվն աճել է 35,7 տոկոսով, զոհվածների թիվը՝ 200 տոկոսով, վիրավորներինը՝ 21,4 տոկոսով: 1996 թ. 1995-ի համեմատությամբ պատահարների թիվը նվազել է 26,3 տոկոսով, զոհվածների թիվը՝ 23,3 տոկոսով, իսկ վիրավորների թիվն աճել է 3 տոկոսով: 1997 թ. նախորդ տարվա համեմատությամբ պատահարների թիվը նվազել է 11 տոկոսով, զոհվածների թիվը՝ 12,5 տոկոսով, վիրավորներինը՝ 4,8 տոկոսով (տես գրաֆիկ 1):

Ուրախալի է, որ վերջին երկու տարում ինչպես պատահարների, այնպես էլ դրանց հետևանքով տուժածների թիվը անշեղորեն նվազում է:

Ռազմական տրանսպորտի հետ տեղի ունեցած պատահարների և դրանց հետևանքների մի զգալի մասը (պատահարների մոտ 40 տոկոսը, զոհվածների մոտ 58 տոկոսը և վիրավորների մոտ 60 տոկոսը) բաժին է ընկնում մեքենաների շրջվելուն (տես գրաֆիկ 2), այն դեպքում, երբ հանրապետությունում տեղի ունեցած պատահարների միայն 18 տոկոսը, զոհվածների մոտ 20 տոկոսը և վիրավորների մոտ 21 տոկոսն են մեքենաների շրջվելու հետևանք:

Իհարկե, այստեղ բացասական դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ վա-

Գրաֆիկ 2

ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ԸՍՏ ՏԱՐԻՆԵՐԻ




րորդները հաճախ ստիպված են լինում զինվորներին կամ նրանց համար նախատեսված հանդերձանքը փոխադրել ճանապարհազուրկ վայրերով, անբարեկարգ ճանապարհներով, սակայն դա բոլորովին էլ արդարացուցիչ հանգամանք չէ. հենց նման խախտումների պատճա-

ռով (իսկ ըստ մեքենաների շահագործման կանոնների ամեն տեղ չէ, որ դրանցով կարելի է երթևեկել, մասնավորապես՝ ուղևորներ փոխադրել):

Ճանապարհ — տրանսպորտ — վարորդ—պաշտոնատար անձ շղթայի հիմնական օղակը բոլոր դեպքերում վարորդն է, մի անձ, որը պետք է ունենա պետական ավտոտեսչությունից տրված վարորդական վկայական և չպետք է խախտի ճանապարհային երթևեկության, մեքենաների շահագործման կանոնները, որոնք մշակված ու հղկված են տարիների փորձի հիման վրա: Սակայն ռազմական տրանսպորտի պարագայում, երբ մեքենայի ղեկին նստած է լինում սովորաբար երիտասարդ զինվորը, ոչ միայն պատահարի, այլև յուրաքանչյուր խախտման համար եթե ոչ իրավական, ապա առնվազն բարոյական պատասխանատվություն են կրում մեքենայի ավագը, զորամասի տեխնիկական հսկողության կետի պետը և ավտոծառայության պետը: Հաճախ մեքենայի ավագը, նստած լինելով վարորդի կողքին, իր անտարբերության հետևանքով թույլ է տալիս այս կամ այն խախտումը, զորամասի տեխնիկական հսկողության կետի պետը երթուղի է դուրս բերում տեխնիկապես անսարք մեքենա, չիրահանգավորված վարորդի ու մեքենայի ավագի, իսկ ավտոծառայության պետը, զինվորի վրա մեքենա ամրագրելուց առաջ չի իրականացնում բանակում երկար տարիներ գոյություն ունեցող նախապատրաստական համապատասխան միջոցառումների համալիրը (վարորդների վերապատրաստում, գործնական պարապմունքներ, ստուգարք, հրահանգավորում և այլն):

Դրան պետք է ավելացնենք, որ վերջին 7-8 տարիների ընթացքում համարյա խաթարված է եղել վարորդական կադրերի պատրաստման գործընթացը ուսումնական կառույցներում, երբ էներգետիկական ճգնաժամի պայմաններում սովորողների հետ չեն անցկացվել նորմալ դասեր, մասնավորապես մեքենաների գործնական վարում, և դա՝ այն դեպքում, երբ հաճախ բանակ զորակոչված զինվորը հայտնվում է իրեն անծանոթ մեքենայի ղեկին՝ ընդամենը ինքնուսուցմամբ, հետաքրքրության բերումով ձեռք բերած, ուրեմն և աղքատիկ գիտելիքներով ու թերարժեք հմտությամբ:

Այս առումով ռազմական տրանսպորտում պատահարների կանխման գործում առավել քան մեծ է զորամասերի մեքենաների շահագործման համար պատասխանատու պաշտոնատար անձանց ու հրամանատարության դերը, որոնք պարտավոր են իրենց ամենօրյա նպատակամղված աշխատանքով կիրառելու բոլոր հնարավոր միջոցները ապահովելու համար երիտասարդ զինվորների ուսուցումը, մեքենաների տեխնիկական սարքինությունն ու ըակայամուր, տրանսպորտի տեխնիկական սպասարկումների ու նորոգումների, սեզոնային նախապատրաստական աշխատանքների կատարումը լրիվ ծավալով:

Զինվորական ավտոտեսչությունն իր գործունեության շրջանակներում հետևողականորեն ձգտում է բարձրացնելու զորամասերի ենթասպաների ու սպայական կազմի այն անձանց պատասխանատվությունը, որոնց աշխատանքն առնչվում է մեքենաների շահագործման հետ: Յուրաքանչյուր հայտնաբերված խախտման մասին պատշաճ ձևով հիմնավորված հաղորդագիր է ուղարկվում զորամասի հրամանատարին, ընդսմին բարձրացվում է այս կամ այն պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու հարցը: Պատասխանները սովորաբար գոհացուցիչ են լինում, սակայն, ըստ իս, դեռևս անելիքներ շատ կան: Առավել տարածված խախտումների վերաբերյալ հստակ պատկերացում տալու նպատակով բերենք մի քանի օրինակներ:

1996 թ. մարտի 11-ին ՄՏԼԲ մակնիշի մի քրահամեքենա և մայիսի 5-ին ԳԱԶ—66 մակնիշի մի մեքենա շրջվել են արգելակների անսարք լինելու պատճառով: Կան զոհեր և վիրավորներ:

Մարտի 21-ին Գեղարքունիքի մարզում տեղաբաշխված զորամասի ՎԱԶ—2121 մակնիշի մի մեքենա Գյումրիում վա-

րել է հենց Գյումրիում տեղաբաշխված կորամասի ֆինանսական ծառայության պետը: Երթևեկության կանոնների կոպիտ խախտման հետևանքով առաջացած վթարից կան մեկ զոհված և վիրավորներ: Պարզ է, որ մի կորամասի ծառայողական մեքենան չէր կարող ամրագրված լինել մեկ այլ կորամասի զինծառայողի վրա, այն էլ՝ ֆինանսական ծառայության պետի պաշտոն զբաղեցնող սպայի: Պատահարի առաջացման պատասխանատվությունը սպա վարորդի հետ մեկտեղ ընկնում է նաև մեքենայի տեր կորամասի և այն կորամասի հրամանատարությունների խղճի վրա, որտեղ ծառայում էր ֆինանսական ծառայության պետը:

Ապրիլի 24-ին տեղի ունեցած մի պատահարի հանգամանքների ուսումնասիրությունից պարզվել է, որ 4Ս–286 համարի մարդատար մեքենան վարել է կորամասի տեխնիկական հսկողության կետի պետը, որը ի պաշտոնե նման իրավունք չէր կարող ունենալ:

Մայիսի 5-ին տեղի է ունեցել մի ողբերգական դեպք, որը հավանաբար տեղի չէր ունենա, եթե ընդամենը վեց ամսվա զինծառայող, մեքենայի ավագ դարձած տակավին երիտասարդ լեյտենանտը և զինվոր վարորդը պատշաճ կերպով հրահանգավորված լինեին, հստակ պատկերացնեին իրենց իրավունքներն ու պարտականությունները, ինչպես հարկն է գիտենային ճանապարհային երթևեկության և ուղևորների փոխադրման կանոնները: Այստեղ կորամասի հրամանատարությունը սխալ է կատարել իր պարտականությունները:

Հունիսի 15-ին տեղի ունեցած մի պատահարից տուժել են զինվորական մեքենայում գտնվող երկու քաղաքացիներ, որոնք ոչ մի առնչություն չեն ունեցել կորամասի հետ: Հարց է ծագում. իսկ նրանք ինչո՞ւ էին հայտնվել ռազմական տրանսպորտում:

Օգոստոսի 25-ին տեղի ունեցած մի պատահարի պատճառ է դարձել այն հանգամանքը, որ 25651 կորամասի պաշտոնատար անձինք անտեսել են, որ ԶԻԼ-131 մակնիշի մեքենան չի կարելի քարշակել զգալիորեն ցածր բեռնունակությամբ ու հզորությամբ ԳԱԶ-66 ավտոմեքենայով: Դրանում հավանաբար համոզվել են շատ ուշ՝ երկու վիրավոր տալուց և կորամասին զգալի նյութական վնաս հասցնելուց հետո:

1996 թ. օգոստոսի 1-ին Աշտարակ քաղաքում կուրսանտ Արիստակեսյանը անձնական մեքենայով վրաերթի է ենթարկել մի քաղաքացու: Մինչդեռ այդ պահին նա պետք է լիներ կորամասում:

Բերված օրինակները ևս բնութագրում են կորամասերի հրամանատարական կազմի անբավարար աշխատանքը, կորամասերը ինքնակամ լքելու դեմ պայքարի անարդյունավետությունը:

Զինվորական ավտոտեսչությունն իրեն ընձեռված իրավունքների և հնարավորությունների սահմաններում անում է ամեն ինչ ճանապարհային պատահարները կանխելու համար, բայց միակողմանի գործողությունները ցանկալի արդյունք չեն տալիս, ուստի այլ ծառայություններ ևս պետք է աշխատանք տանեն այս ուղղությամբ:

Կարծում ենք՝ այդ առումով ժամանակն է, եթե, իհարկե, շատ չի ուշացած, ձեռնարկել հետևյալ միջոցառումները.

—կազմակերպել վարորդների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, մեքենաների ավագների գիտելիքների բարձրացման դասընթացներ կորամասերում և առանձին ուսումնական կենտրոններում, այդ նպատակով մշակել ծրագրեր, կահավորել դասասենյակներ, պատրաստել բավարար քանակով որակյալ դասատուներ և գործնական պարապմունքների հրահանգիչներ, այդ աշխատանքը կատարել պլանային կարգով՝ ըստ առանձին կայազորների,

—տրանսպորտ ունեցող կորամասերին պահեստամասերի հատկացում պլանավորելիս նախատեսել երթևեկության անվտանգության ապահովմանը ծառայող պահեստամասերի պատշաճ չափով մատակարարում այդ կորամասերին,

—ապահովել անհրաժեշտ իրավական դաշտ՝ կարգապանց վարորդների

ու տրանսպորտի շահագործման համար պատասխանատու պաշտոնատար անձանց նկատմամբ վարչական արդյունավետ միջոցներ կիրառելու համար:

Այս հարցերը մեր կողմից ներկայացված են նախարարության համապատասխան ծառայություններին, և նշաններ կան, որ դրանք կարճ ժամանակում դրական լուծում կստանան: Իհարկե, կան նաև այլ խնդիրներ, որոնք մշտական ու նպատակաուղղված աշխատանքով հարթվում են:

Կարծում ենք՝ արդյունքներն իրենց երկար սպասել չեն տա:

# ВОЕННЫЙ ТРАНСПОРТ

## ДОРОЖНО-ТРАНСПОРТНЫЕ ПРОИСШЕСТВИЯ В АРМЯНСКОЙ АРМИИ И ПУТИ ИХ ПРЕДУПРЕЖДЕНИЯ

*Э. А. МАНУЧАРЯН, подполковник*

РЕЗЮМЕ

Аварии с участием автомобильной техники законодательством квалифицируются как происшествия, произошедшие по неосторожности. В то же время те происшествия, в результате которых пострадали люди или был нанесен значительный материальный ущерб, несут в себе и элемент преступления, так как они происходят в результате халатности со стороны ответственных лиц, нарушения тех или иных требований законов и правил.

Статистические данные относительно происшествий с участием автотранспортных средств, принадлежащих ВС РА, свидетельствуют о том, что в течение 1993—1995 гг. имело место возрастание числа дорожно-транспортных происшествий (ДТП) и тяжести их последствий. Однако в 1996—1997 гг. наметилась тенденция к их снижению, что несомненно является следствием проведения мероприятий, направленных на обеспечение безопасности движения.

Анализ причин ДТП показывает, что необходимо больше внимания уделять техническому состоянию машин, так как эксплуатация неисправных автомобилей чревата тяжелыми последствиями.

Немаловажную роль играет также степень профессиональной подготовленности водителей и соответствующих должностных лиц, которая в особенности в нашей армии находится не на должном уровне, на что имеются объективные и субъективные причины (недостаточная подготовка и переподготовка водительского состава, неполноценные инструктажи и т. д.).

Военной автомобильной инспекцией проводится ряд мероприятий по предупреждению ДТП, снижению тяжести их последствий. Но без комплексного подхода к этой проблеме как со стороны соответствующих служб министерства обороны, войсковых частей и соединений, так и инженерно-технического персонала и водителей практически невозможно достичь желаемого результата. Военной автомобильной инспекцией подготовлены проекты законодательных документов, в соответствующие инстанции направлены предложения, имеющие целью повышение ответственности должностных лиц и водителей, что, по нашему мнению, должно привести к повышению культуры эксплуатации машин, снижению числа аварий и тяжести их последствий.

# MILITARY TRANSPORT

## TRAFFIC ACCIDENTS IN ARMENIAN ARMY AND WAYS OF THEIR PREVENTION

*E. A. MANUCHARIAN, Lieutenant Colonel*

SUMMARY

According to the law accidents with participation of motor engineering are qualified as incidents, occurred due to carelessness. At the same time those accidents resulted in human injuries or significant material damage, are defined as a crime, as they occur in a result of negligence of the responsible persons, infringement of these or those requirements of the laws and rules.

The statistical data concerning accidents with participation of vehicles, belonging to Armed Forces or the RA, shows that during 1993—1995 there was an increase in number of traffic accidents and the seriousness of the consequences. In 1996—1997, however, the tendency to their decrease was noted, no doubt is a consequence of realization of measures, directed at provision of traffic safety.

The analysis of the reasons of traffic accidents shows, that it is necessary to pay close attention to the technical condition of vehicles, otherwise operation of defective vehicles is fraught with grave consequences. The level of professional preparedness of the drivers and responsible officials is also very important. Unfortunately the situation is not ideal, especially in our army. There are subjective and objective reasons to insufficient professional preparedness (insufficient training and retraining of drivers, defective instructing and so on).

The military transport inspection (MTI) will carry out a number of projects to prevent traffic accidents, decrease the seriousness of the consequences. However, without the complex approach to this problem by the appropriate services of the Ministry of Defense, military units and formations, and engineering-technical personnel and drivers it is practically impossible to reach the desirable result. MTI has worked out the drafts of the laws and rules; proposals are sent to the proper authorities aimed at the increase of the responsibility of the officials and the drivers, which we think will increase the culture of vehicle operation, and will decrease the number of accidents and the seriousness of the consequences.

# ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՌԻ ԲԱՌԱՐԱՆ

*Վ. Խ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Հայկական բանակ» հանդեսի հայերեն տեքստի խմբագիր*

### ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգամոլություն — национализм
ազգայնականություն — 1. приверженность национальному, 2. национализм
այրուձի — кавалерия, конница
անվտանգություն — безопасность
— կոլեկտիվ անվտանգություն — коллективная безопасность
— համընդհանուր անվտանգություն — всеобщая безопасность, глобальная безопасность
— ռազմական անվտանգություն — военная безопасность
աշխարհագրական — географический
— աշխարհագրական միջավայր — географическая среда
— աշխարհագրական պարամետր — геопараметр
աշխարհաքաղաքագիտական — геополитический
աշխարհաքաղաքագիտություն — геополитика
աշխարհաքաղաքական — геополитический
աշխարհաքաղաքականություն — геополитика
առավոտյան մարմնամարզություն — утренняя гимнастика
ավտոմոբիլային տրանսպորտ — автомобильный транспорт, автотранспорт
ավտովարորդ — водитель автомашины
ավտոտրանսպորտ — տես *ավտոմոբիլային տրանսպորտ*
արագագործություն — быстродействие
արագային վարժություն — скоростное упражнение
արագաշարժություն — подвижность
արագություն — скорость
բախում — 1. столкновение, 2. конфликт
— ներանձնային բախում — տես *ներանձնային գժտություն*
բարոյահոգեբանական մթնոլորտ — морально-психологическая атмосфера
բեհիստունյան արձանագրություն — бехистунская надпись
բռնակցում — аннексия
գժտություն — конфликт, раздор, столкновение
— անձնախմբային գժտություն — личностно-групповой конфликт
— գժտության առաջացման փուլ — этап возникновения конфликта
— գժտության բարոյավարքային պատճառ — морально-этическая причина конфликта
— գժտության զարգացման փուլ — этап развития конфликта
— գժտության լուծման փուլ — этап разрешения конфликта
— գժտության կազմակերպական պատճառ — организационная причина конфликта
— գժտության կանխում — предотвращение конфликта
— գժտության սոցիալ-հոգեբանական պատճառ — социально-психологическая причина конфликта
— գժտության սրման փուլ — этап обострения конфликта
— միջանձնային գժտություն — межличностный конфликт
— միջխմբային գժտություն — межгрупповой конфликт
— ներանձնային գժտություն — внутриличностный конфликт
գործնական հմտություն — практический навык
դիմացկունություն — выносливость
զինվորական — военный, воинский

—բարձր զինվորական կոլեկտիվ—высший воинский коллектив

—զինվորական ավտոտեսչություն—военная автоинспекция

—զինվորական կոլեկտիվի կազմավորման փուլ—этап формирования воинского коллектива

—զինվորական կոլեկտիվի հասունության փուլ—этап зрелости воинского коллектива

—միջին զինվորական կոլեկտիվ—средний воинский коллектив

—սկզբնական զինվորական կոլեկտիվ—начальный воинский коллектив

ընդհանուր նախանշանակման ուժեր—силы общего назначения

ընդհարում—столкновение, стычка

ծովիշխանություն—талассократия

կառամարտիկ—воин на колеснице

հակամարտություն—конфликт

հանցագործություն—преступление

հանցավորություն—преступность

հաշվեկշիռ—баланс

—շահերի հաշվեկշիռ—баланс интересов

—ուժերի հաշվեկշիռ—баланс сил

հոգնածություն—усталость

**հրահանգ**—1. инструкция, инструктаж. 2. приказание, команда

**հրահանգավորել**—инструктировать

**հրահանգավորում**—инструктирование, инструктаж

—վարորդի հրահանգավորում—инструктаж водителя

**հրահանգել**—дать инструкцию

**հրահանգում**—дача инструкции

հրատեխնիկական սարք—пиротехническое устройство

ճանապարհային երթևեկություն—дорожное движение

ճանապարհատրանսպորտային պատահար—дорожно-транспортное происшествие

ճարպկություն—ловкость

ճկունություն—гибкость

մարտակառք—боевая колесница

մեթոդ—метод

—առավելագույն ճիգերի մեթոդ—метод наибольших усилий

—դինամիկ ճիգերի մեթոդ—метод динамических усилий

—կրկնողական մեթոդ—метод повторений

**մեծագործություն**—эпопея

մեքենա—машина

—մեքենայի սարքինություն—исправность машины

—մեքենաների շահագործման կանոններ—правила эксплуатации машин

շարժում—движение

—շարժման ավտոմատացում—автоматизация движения

—շարժումների փոխհամաձայնեցվածություն—согласованность движений

շրջում—1. переворачивание, 2. опрокидывание

պայթել—взрываться

պայթեցնել—взрывать

պայթեցում—взрыв, взрывание

պայթյուն—взрыв

—միջուկային պայթյուն—ядерный взрыв

—քիմիական պայթյուն—химический взрыв

—ֆիզիկական պայթյուն—физический взрыв

պայթյունավտանգ—взрывоопасный

պայթում—взрыв

—պայթման հարուցման միջոց—средство инициирования взрыва

պայթուցիկ—взрывчатый

—փշրող պայթուցիկ նյութ—дробящее взрывчатое вещество

պայթուցիչ—взрыватель

պետություն—государство

—ծովային պետություն—морское государство

—կղզիական պետություն—островное государство

—պետությունների ինտեգրում—интеграция государств, интегрирование государств

—ցամաքային պետություն—сухопутное государство

ռազմական տրանսպորտ—военный транспорт

վառոդ—порох

վրաերթ—наезд

—վրաերթի ենթարկվել—подвергнуться наезду

—վրաերթի ենթարկում—наезд

տեղեկություն—сведение

—տեղեկությունների հրապարակման վրա դրվող սահմանափակումներ—ограничения на публикацию сведений

տեղեկույթ—информация

* Սև տառատեսակով շարված տերմինների վերաբերյալ բառարաններից հետո տրվում են պարզաբանումներ:

ցամաքիշխանություն — теллурократия
ուսումնական պարապմունք — учебное занятие
քաղաքականություն — политика
— տիեզերական քաղաքականություն — космическая политика
ֆիզիկական — физический
— ֆիզիկական դաստիարակություն — физическое воспитание
— ֆիզիկական շարժումային հատկություն — физическое двигательное качество
— ֆիզիկական պատրաստություն — физическая подготовка

## ՀԱՅ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

ազգամոլություն — nationalism
ազգայնականություն — 1. adherence to nationalism, 2. nationalism
այրուձի — cavalry
անվտանգություն — security
— կոլեկտիվ անվտանգություն — collective security
— համընդհանուր անվտանգություն — global security
— ռազմական անվտանգություն — military security
աշխարհագրական — geographical
— աշխարհագրական միջավայր — geographical environment
— աշխարհագրական պարամետր — geographical parameter
աշխարհաքաղաքագիտական — geo-political
աշխարհաքաղաքագիտություն — Geo-policy Study
աշխարհաքաղաքական — geo-political
աշխարհաքաղաքականություն — Geo-policy
առավոտյան մարմնամարզություն — morning gymnastics
ավտոմոբիլային տրանսպորտ — automobile transport
ավտովարորդ — driver of a car
ավտոտրանսպորտ — տես *ավտոմոբիլային տրանսպորտ*
արագագործություն — fast-action
արագային վարժություն — speed exercise
արագաշարժություն — mobility
արագություն — speed
բախում — 1. clash, 2. conflict
— ներանձնային բախում — տես *ներանձնային գժտություն*
բարոյահոգեբանական մթնոլորտ — moral-psychological atmosphere
բեհիստունյան արձանագրություն — Behistunian inscription
բռնակցում — annexation
գժտություն — conflict, clash
— անձնախմբային գժտություն — individual — group conflict
— գժտության առաջացման փուլ — phase of arising of the conflict
— գժտության բարոյավարքային պատճառ — moral-ethic reason of the conflict
— գժտության զարգացման փուլ — phase of conflict development
— գժտության լուծման փուլ — phase of solution of the conflict
— գժտության կազմակերպական պատճառ — organizational reason of the conflict
— գժտության կանխում — prevention of the conflict
— գժտության սոցիալ-հոգեբանական պատճառ — socio-psychological reason of the conflict
— գժտության սրման փուլ — phase of aggravation of the conflict
— միջանձնային գժտություն — inter-individual conflict
— միջխմբային գժտություն — inter-group conflict
— ներանձնային գժտություն — intra-individual conflict
գործնական հմտություն — practical skills
դիմացկունություն — endurance
զինվորական — military
— բարձր զինվորական կոլեկտիվ — higher military personnel
— զինվորական ավտոտեսչություն — military transport inspection
— զինվորական կոլեկտիվի կազմավորման փուլ — phase of military personnel's forming
— զինվորական կոլեկտիվի հասունության փուլ — phase of military personnel's maturity
— միջին զինվորական կոլեկտիվ — intermediate military personnel
— սկզբնական զինվորական կոլեկտիվ — junior military personnel
ընդհանուր նախանշանակման ուժեր — general task forces

ընդհարում—encounter
ծովիշխանություն—talassocracy
կառամարտիկ—chariot man
հակամարտություն—conflict
հանցագործություն—crime
հանցավորություն—criminality
հաշվեկշիռ—balance
—շահերի հաշվեկշիռ—the balance of interests
—ուժերի հաշվեկշիռ—the balance of power
հոգնածություն—tiredness
հրահանգ—1. instruction, 2. order
հրահանգավորել—to instruct
հրահանգավորում—instruction
—վարորդի հրահանգավորում—instruction to driver
հրահանգել—to instruct
հրահանգում—instructing
հրատեխնիկական սարք—pyrotechnical device
ճանապարհային երթևեկություն—traffic
ճանապարհատրանսպորտային պատահար—traffic accident
ճարպկություն—dexterity
ճկունություն—flexibility
մարտակառք—battle chariot
մեթոդ—method
—առավելագույն ճիգերի մեթոդ—method of the maximum efforts
—դինամիկ ճիգերի մեթոդ—method of dynamic efforts
—կրկնողական մեթոդ—method of repetitions
մեծագործություն—epopee
մեքենա—car
—մեքենայի սարքինություն—intactness of the car
—մեքենաների շահագործման կանոններ—rules of exploitation of vehicles
շարժում—movement
—շարժման ավտոմատացում—automation of a movement
—շարժումների փոխհամաձայնեցվածություն—coordination of movements
շրջում—overturning
պայթել—to explode
պայթեցնել—to explode
պայթեցում—explosion, exploding
պայթյուն—explosion
—միջուկային պայթյուն—nuclear explosion
—քիմիական պայթյուն—chemical explosion
—ֆիզիկական պայթյուն—physical explosion
պայթյունավտանգ—highly explosive
պայթում—explosion
—պայթման հարուցման միջոց—mean of initiation of explosion
պայթուցիկ—explosive
—փշրող պայթուցիկ նյութ—splitting explosive substance
պայթուցիչ—detonator
պետություն—state
—ծովային պետություն—seaside state
—կղզիական պետություն—island state
—պետությունների ինտեգրում—integration of states
—ցամաքային պետություն—land state
ռազմական տրանսպորտ—military transport
վառոդ—gunpowder
վրաերթ—striking by a car
—վրաերթի ենթարկվել—to be struck by a car
—վրաերթի ենթարկում—striking by a car
տեղեկություն—information
—տեղեկությունների հրապարակման վրա դրվող սահմանափակումներ—restrictions on the publication of the information
տեղեկույթ—information
ցամաքիշխանություն—tellurocracy
ուսումնական պարապմունք—lesson
քաղաքականություն—policy
—տիեզերական քաղաքականություն—space policy
ֆիզիկական—physical
—ֆիզիկական դաստիարակություն—physical education
—ֆիզիկական շարժումային հատկություն—physical impellent ability
—ֆիզիկական պատրաստություն—physical training

## РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

автомобильный транспорт—ավտոմոբիլային տրանսպորտ, ավտոտրանսպորտ
автотранспорт—см. *автомобильный транспорт*
аннексия—բռնակցում
баланс—հաշվեկշիռ

—баланс интересов—շահերի հաշվեկշիռ
—баланс сил—ուժերի հաշվեկշիռ
безопасность—անվտանգություն
—военная безопасность—ռազմական անվտանգություն
—всеобщая безопасность—համընդհանուր անվտանգություն
—глобальная безопасность—см. *всеобщая безопасность*
—коллективная безопасность—կոլեկտիվ անվտանգություն
бехистунская надпись—բեհիստունյան արձանագրություն
боевая колесница—մարտակառք
быстродействие—արագագործություն
взрыв—1. պայթյուն, պայթում, 2. см. *взрывание*
—средство инициирования взрыва—պայթման հարուցման միջոց
—физический взрыв—ֆիզիկական պայթյուն
—химический взрыв—քիմիական պայթյուն
—ядерный взрыв—միջուկային պայթյուն
взрывание—պայթեցում
взрыватель—պայթուցիչ
взрывать—պայթեցնել
взрываться—պայթել
взрывоопасный—պայթյունավտանգ
взрывчатый—պայթուցիկ
—дробящее взрывчатое вещество—փշրող պայթուցիկ նյութ
водитель автомашины—ավտովարորդ
военный—զինվորական, ռազմական
—военная автоинспекция—զինվորական ավտոտեսչություն
—военный транспорт—ռազմական տրանսպորտ
воинский—զինվորական
—высший воинский коллектив—բարձր զինվորական կոլեկտիվ
—начальный воинский коллектив—սկզբնական զինվորական կոլեկտիվ
—средний воинский коллектив—միջին զինվորական կոլեկտիվ
—этап зрелости воинского коллектива—զինվորական կոլեկտիվի հասունության փուլ
—этап формирования воинского коллектива—զինվորական կոլեկտիվի կազմավորման փուլ
выносливость—դիմացկունություն
географический—աշխարհագրական
—географическая среда—աշխարհագրական միջավայր
геопараметр—աշխարհագրական պարամետր
геополитика—1. աշխարհաքաղաքականություն, 2. աշխարհաքաղաքագիտություն
геополитический—1. աշխարհաքաղաքական, 2. աշխարհաքաղաքագիտական
гибкость—ճկունություն
государство—պետություն
—интеграция государств—պետությունների ինտեգրում
—интегрирование государств—см. *интеграция государств*
—морское государство—ծովային պետություն
—островное государство—կղզիական պետություն
—сухопутное государство—ցամաքային պետություն
движение—շարժում
—автоматизация движения—շարժման ավտոմատացում
—дорожное движение—ճանապարհային երթևեկություն
—согласованность движений—շարժումների փոխհամաձայնեցվածություն
дорожно-транспортное происшествие—ճանապարհատրանսպորտային պատահար
инструктаж—1. հրահանգավորում, 2. հրահանգ
—инструктаж водителя—վարորդի հրահանգավորում
инструктирование—см. *инструктаж*
инструктировать—հրահանգավորել
инструкция—հրահանգ
информация—տեղեկույթ
кавалерия—այրուձի
команда—см. *приказание*
конница—см. *кавалерия*
конфликт—1. հակամարտություն, գժտություն, 2. բախում
—внутриличностный конфликт—ներանձնային բախում, ներանձնային գժտություն
—личностно-групповой конфликт—անձնախմբային գժտություն
—межгрупповой конфликт—միջխմբային գժտություն
—межличностный конфликт—միջանձնային գժտություն

—морально-этическая причина конфликта—գժտության բարոյավարքային պատճառ
—организационная причина конфликта—գժտության կազմակերպական պատճառ
—предотвращение конфликта—գժտության կանխում
—социально-психологическая причина конфликта—գժտության սոցիալ-հոգեբանական պատճառ
—этап возникновения конфликта—գժտության առաջացման փուլ
—этап обострения конфликта—գժտության սրման փուլ
—этап развития конфликта—գժտության զարգացման փուլ
—этап разрешения конфликта—գժտության լուծման փուլ
ловкость—ճարպկություն
машина—մեքենա
—исправность машины—մեքենայի սարքինություն
—правила эксплуатации машин—մեքենաների շահագործման կանոններ
метод—մեթոդ
—метод динамических усилий—դինամիկ ճիգերի մեթոդ
—метод наибольших усилий—առավելագույն ճիգերի մեթոդ
—метод повторений—կրկնողական մեթոդ
морально-психологическая атмосфера—բարոյահոգեբանական մթնոլորտ
наезд—1. վրաերթ, 2. վրաերթի ենթարկում
—подвергнуться наезду—վրաերթի ենթարկվել
национализм—1. ազգամոլություն, 2. ազգայնականություն
опрокидывание—շրջում
переворачивание—շրջում
пиротехническое устройство—հրատեխնիկական սարք
подвижность—արագաշարժություն
политика—քաղաքականություն
—космическая политика—տիեզերական քաղաքականություն
порох—վառոդ
практический навык—գործնական հմտություն
преступление—հանցագործություն
преступность—հանցավորություն
приказание—հրահանգ
раздор—см. *конфликт*
сведение—տեղեկություն
—ограничения на публикацию сведений—տեղեկությունների հրապարակման վրա դրվող սահմանափակումներ
силы общего назначения—ընդհանուր նախանշանակման ուժեր
скоростное упражнение—արագային վարժություն
скорость—արագություն
столкновение—ընդհարում, բախում, գժտություն
стычка—см. *столкновение*
талассократия—ծովիշխանություն
теллурократия—ցամաքիշխանություն
усталость—հոգնածություն
утренняя гимнастика—առավոտյան մարմնամարզություն
учебное занятие—ուսումնական պարապմունք
физический—ֆիզիկական
—физическая подготовка—ֆիզիկական պատրաստություն
—физическое воспитание—ֆիզիկական դաստիարակություն
—физическое двигательное качество—ֆիզիկական շարժումային հատկություն
эпопея—մեծագործություն

## ENGLISH-ARMENIAN DICTIONARY

adherence to nationalism—ազգայնականություն
annexation—բռնակցում
automobile transport—ավտոմոբիլային տրանսպորտ
balance—հաշվեկշիռ
—the balance of interests—շահերի հաշվեկշիռ
—the balance of power—ուժերի հաշվեկշիռ
Behistunian inscription—բեհիստունյան արձանագրություն
car—մեքենա
—intactness of the car—մեքենայի սարքինություն
—rules of exploitation of vehicles—մեքենաների շահագործման կանոններ
cavalry—հեծելազոր, այրուձի
chariot man—կառամարտիկ
clash—բախում

combat chariot—մարտակառք
conflict—1. հակամարտություն, գժտություն, 2. բախում
—individual-group conflict—անձնախմբային գժտություն
—inter-group conflict—միջխմբային գրժտություն
—inter-individual conflict—միջանձնային գժտություն
—intra-individual conflict—ներանձնային գժտություն
—moral-ethic reason of the conflict—գըժտության բարոյավարքային պատճառ
—organizational reason of the conflict—գժտության կազմակերպական պատճառ
—phase of aggravation of the conflict—գժտության սրման փուլ
—phase of arising of the conflict—գժտության առաջացման փուլ
—phase of conflict development—գժտության զարգացման փուլ
—phase of solution of the conflict—գժտության լուծման փուլ
—prevention of the conflict—գժտության կանխում
—socio-psychological reason of the conflict—գժտության սոցիալ-հոգեբանական պատճառ
crime—հանցագործություն
criminality—հանցավորություն
detonator—պայթուցիչ
dexterity—ճարպկություն
driver of a car—ավտովարորդ
encounter—ընդհարում
endurance—դիմացկունություն
epopee—մեծագործություն
explode—պայթեցնել, պայթել
exploding—պայթեցում
explosion—1. պայթյուն, պայթում, 2. պայթեցում
—chemical explosion—քիմիական պայթյուն
—mean of initiation of explosion—պայթման հարուցման միջոց
—nuclear explosion—միջուկային պայթյուն
—physical explosion—ֆիզիկական պայթյուն
explosive—պայթուցիկ
—splitting explosive substance—փշրտող պայթուցիկ նյութ
fast-action—արագագործություն
flexibility—ճկունություն
general task forces—ընդհանուր նախանշանակման ուժեր
geographical—աշխարհագրական
—geographical environment—աշխարհագրական միջավայր
—geographical parameter—աշխարհագրական պարամետր
Geo-policy—աշխարհաքաղաքականություն
Geo-policy Study—աշխարհաքաղաքագիտություն
geo-political—1. աշխարհաքաղաքական, 2. աշխարհաքաղաքագիտական
gunpowder—վառոդ
highly explosive—պայթյունավտանգ
information—տեղեկություն
—restrictions on the publication of the information—տեղեկությունների հրապարակման վրա դրվող սահմանափակումներ
information—տեղեկույթ
instruct—1. հրահանգել, 2. հրահանգավորել
instructing—հրահանգում
instruction—1. հրահանգ, 2. հրահանգավորում
—instruction to driver—վարորդի հրահանգավորում
lesson—ուսումնական պարապմունք
method—մեթոդ
—method of dynamic efforts—դինամիկ ճիգերի մեթոդ
—method of repetitions—կրկնողական մեթոդ
—method of the maximum efforts—առավելագույն ճիգերի մեթոդ
military—զինվորական
—higher military personnel—բարձր զինվորական կոլեկտիվ
—intermediate military personnel—միջին զինվորական կոլեկտիվ
—junior military personnel—սկզբնական զինվորական կոլեկտիվ
—military transport—ռազմական տրանսպորտ
—military transport inspection—զինվորական ավտոտեսչություն
—phase of military personnel's forming—զինվորական կոլեկտիվի կազմավորման փուլ
—phase of military personnel's maturity—զինվորական կոլեկտիվի հասունության փուլ

mobility—արագաշարժություն
moral-psychological atmosphere—բարոյահոգեբանական մթնոլորտ
morning gymnastics—առավոտյան մարմնամարզություն
movement—շարժում
—automation of a movement—շարժման ավտոմատացում
—coordination of movements—շարժումների փոխհամաձայնեցվածություն
nationalism—1. ազգամոլություն, 2. ազգայնականություն
order—հրահանգ
overturning—շրջում
physical—ֆիզիկական
—physical education—ֆիզիկական դաստիարակություն
—physical impellent ability—ֆիզիկական շարժումային հատկություն
—physical training—ֆիզիկական պատրաստություն
policy—քաղաքականություն
—space policy—տիեզերական քաղաքականություն
practical skills—գործնական հմտություն
pyrotechnical device—հրատեխնիկական սարք
security—անվտանգություն
—collective security—կոլեկտիվ անվտանգություն
—global security—համընդհանուր անվտանգություն
—military security—ռազմական անվտանգություն
speed—արագություն
speed exercise—արագային վարժություն
state—պետություն
—integration of states—պետությունների ինտեգրում
—island state—կղզիական պետություն
—land state—ցամաքային պետություն
—seaside state—ծովային պետություն
striking by a car—վրաերթ
—striking by a car—վրաերթի ենթարկում
—to be struck by a car—վրաերթի ենթարկվել
talassocracy—ծովիշխանություն
tellurocracy—ցամաքիշխանություն
tiredness—հոգնածություն
traffic—ճանապարհային երթևեկություն
—traffic accident—ճանապարհատրանսպորտային պատահար

## ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

### «ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»

«Էպոպեա» օտար բառը որպես գրականագիտական տերմին հայերեն թարգմանվում է «դյուցազներգություն», «հերոսապատում» և այլն, իսկ փոխաբերական իմաստով՝ «մեծագործություն» և այլ ձևերով: Ընդ որում «էպոպեա»-ն այս իմաստով հավաքական գոյական է, նշանակում է տևական ժամանակի ընթացքում տեղի ունեցող բարդ ու նշանակալից իրադարձությունների ամբողջություն: Բայց «մեծագործություն»-ը (որը մենք դիտում ենք որպես հայերեն տարբերակներից առավել հաջողը) հավաքական իմաստ չունի: Այս թերությունը որոշ չափով վերանում է նրանով, որ տերմինն օգտագործում ենք հոգնակի թվով: Օրինակ՝ «Նժդեհի պանգեզուրյան մեծագործությունները», որ ռուսերեն կլինի՝ «зангезурская эпопея Нжде»: Գոյականի հոգնակի ձևի այսպիսի կիրառումը սովորական երևույթ է մեր լեզվում:

### «ՀՐԱՀԱՆԳ», «ՀՐԱՀԱՆԳԵԼ», «ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐԵԼ»

«Հրահանգ» նշանակում է инструкция, սա հանրահայտ է: Բայց Է. Աղայանն իր բացատրական բառարանում այս բառը ներկայացնում է նաև որպես команда (հրաման իմաստով) բառի համարժեք՝ «շարային և մարմնամարզական վարժությունների ժամանակ տրվող հրաման»: Սա փաստորեն առաջարկություն է (այլ բառարաններ չեն տալիս բառի այդպիսի իմաստ) և, կարծում ենք՝ ընդունելի: Հայտնի է, որ այդ իմաստով այժմ գործածության մեջ է «հրաման» բառը, որը խոսքային անհարմարություններ է ստեղծում՝ կապված այդ բառի մյուս՝ приказ իմաստի հետ: Օրինակ՝ ինչպե՞ս պետք է թարգմանենք Есть действия, которые солдаты выполняют по приказу или по команде նախադասությունը: Ճիշտ է, առաջարկվող դեպքում էլ «հրահանգ» բառը դառնում է կրկնիմաստ՝ инструк-

ция — команда, և դա էլ կարող է ստեղծել խոսքային անհարմարություններ, բայց՝ ոչ այն չափով, ինչ приказ — команда դեպքում:

Հետաքրքիր իմաստային տարբերակում կա «հրահանգել» և «հրահանգավորել» բառերի միջև: Հրահանգել նշանակում է հրահանգ տալ կոնկրետ անելիքի վերաբերյալ, իսկ հրահանգավորել նշանակում է հրահանգներ տալ (հենց հրահանգներ, ոչ թե հրահանգ) ընդհանրապես, առանց կոնկրետացման: Օրինակ՝ «Հրամանատարը զինվորին հրահանգեց փոխարինել հերթապահին» և «Հրամանատարը զինվորին հրահանգավորեց առաջիկա հետախուզության վերաբերյալ»: Այսպիսով՝ հրահանգվում է ոչ թե զինվորը, այլ նրա անելիքը, իսկ հրահանգավորվում է զինվորն ինքը, ոչ թե նրա անելիքը: Ուրեմն սխալ կլինի ասել. «Հրամանատարը զինվորին հրահանգավորեց փոխարինել հերթապահին»: Համապատասխան ձևով պետք է ընկալել նաև «հրահանգում» և «հրահանգավորում» բառերը:

«Հրահանգել» բառը ռուսերեն թարգմանվում է дать инструкцию на... բառակապակցությամբ, «հրահանգավորել» բառը՝ инструктировать բառով, «հրահանգում»-ը՝ дача инструкции на... ձևով և «հրահանգավորում»-ը՝ инструктаж и инструктирование բառերով: Այնպես որ, նշված իմաստային տարբերակումը ռուսերենում էլ պահպանվում է: Ընդ որում инструктаж-ն ունի ոչ միայն հրահանգավորման, այլև հրահանգի իմաստ, բայց՝ հավաքական առումով: Ուստի այն հայերեն նույնպես պետք է թարգմանել հոգնակի ձևով՝ «հրահանգներ», կամ՝ «հրահանգների ամբողջություն, համակցություն և այլն»:

## РАЗЪЯСНЕНИЯ

### «ՄԵԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ»

Иностранное слово «эпопея» в качестве литературоведческого термина переводится на армянский язык словами դյուցազներգություն, հերոսապատում и т. д., а в переносном смысле— մեծագործություն и т. д. Причем «эпопея» в этом смысле является собирательным существительным, обозначает совокупность сложных и значительных событий, происходящих на протяжении длительного времени. Однако մեծագործություն (по нашему мнению это наиболее удачный вариант из армянских эквивалентов) не обладает собирательным смыслом. Этот недостаток в определенной мере преодолевается тем, что слово используется во множественном числе—մեծագործություններ. Например, Նժդեհի զանգեզուրյան մեծագործությունները, что в переводе на русский будет «зангезурская эпопея Нжде». Подобное применение существительных во множественном числе является обычным явлением в армянском языке.

### «ՀՐԱՀԱՆԳ», «ՀՐԱՀԱՆԳԵԼ», «ՀՐԱՀԱՆԳԱՎՈՐԵԼ»

Слово հրահանգ означает инструкцию, это общеизвестно. Однако Э. Агаян в своем толковом словаре это слово приводит также в качестве эквивалента русского слова «команда (приказание)»: «շարային և մարմնամարզական վարժությունների ժամանակ տրրվող հրաման» («приказание, подаваемое во время строевых и физических упражнений»). Это—фактически предложение (другие словари не дают такого смысла слова) и, на наш взгляд, приемлемое. Известно, что в этом смысле в армянском в настоящее время употребляется слово հրաման, что создает неудобства в употреблении, связанные с другим его смыслом—«приказ». Например, как следует перевести на армянский предложение «Есть действия, которые солдаты выполняют по приказу или по команде»? Правда, в предлагаемом варианте также слово հրահանգ становится двузначным, выражая два смысла: ин-

струкция — команда, в результате чего хотя и могут возникнуть определенные неудобства, но не в той мере, в какой в случае приказ — команда.

Существует определенное смысловое различие у слов հրահանգել и հրահանգավորել. Հրահանգել означает дать инструкцию, указание относительно выполнения конкретного действия, а հրահանգավորել означает дать инструкции, указания (именно указания, а не указание) вообще, без конкретизации. Например, Հրամանատարը զինվորին հրահանգեց փոխարինել հերթապահին—«Командир дал солдату инструкцию (указание) на замену (заменить) дежурного» и Հրամանատարը զինվորին հրահանգավորեց առաջիկա հետախուզության վերաբերյալ—«Командир дал инструкции (проинструктировал) солдату по предстоящей разведке». Таким образом, в случае глагола հրահանգել объектом действия является подлежащее исполнению солдатом дело, а не сам солдат, в случае же глагола հրահանգավորել объектом действия является сам солдат, а не дело. Следовательно, нельзя сказать հրամանատարը զինվորին հրահանգավորեց փոխարինել հերթապահին—«командир проинструктировал солдата заменить дежурного». Соответственным образом следует понимать и употреблять слова հրահանգում и հրահանգավորում.

Слово հրահանգել переводится на русский словосочетанием «дать инструкцию на...», հրահանգավորել—словом «инструктировать», հրահանգում—«дача инструкции на...», а հրահանգավորում—словами «инструктаж», «инструктирование». Таким образом, отмеченное смысловое различие ощущается и в русском языке. При этом «инструктаж» имеет значение не только инструктирования, но и инструкции, однако в собирательном смысле. Следовательно, и оно должно переводиться на армянский язык множественным числом слова, а именно: հրահանգներ («инструкции») или же հրահանգների ամբողջություն, համակցություն և այլն («совокупность, ряд и т. д. инструкций»).

**ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Գեներալ-լեյտենանտ *Մ. Հ. Աբրահամյան,* փոխգնդապետ, պատ. գ. դ., պրոֆ. *Բ. Պ. Բալայան,*
փիլ. գ. թ., դոց. *Վ. Խ. Բաղդասարյան,* փոխգնդապետ, բժշկ. գ. դ., պրոֆ. *Բ. Ն. Հարությունյան,*
լեյտենանտ, փիլ. գ. թ., դոց. *Ս. Հ. Հարությունյան,* գեներալ-լեյտենանտ *Վ. Վ. Հարությունյան,*
գեներալ-մայոր *Ս. Ս. Մարտիրոսյան,* գեներալ-մայոր *Լ. Ա. Մարտիրոսով,*
գվարդիայի պաշտոնաթող փոխգնդապետ, պատ. գ. դ., ՀՀ գիտ. վաստ. գործիչ *Վ. Ա. Մուրադյան,*
փոխգնդապետ, տեխ. գ. դ., Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի
ակադեմիկոս *Ա. Ե. Սարգսյան,* գեներալ-լեյտենանտ *Ն. Գ. Տեր-Գրիգորյանց,* գնդապետ,
քաղ. գ. դ., Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի ակադեմիկոս *Հ. Ս. Քոթանջյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Դ. Ս. Չիլինգարյան*
Հայերեն տեքստի խմբագիր՝ *Վ. Խ. Բաղդասարյան*
Ռուսերեն տեքստի խմբագիր՝ *Բ. Պ. Բալայան*
Ձևավորող նկարիչ՝ *Ս. Հ. Նարդպյան*
Տեխնիկական և գեղարվեստական խմբագիր՝ *Ռ. Խ. Գևորգյան*

Տեքստերի թարգմանությունը՝
*Ա. Ա. Հովհաննիսյանի, Դ. Ս. Չիլինգարյանի, Ս. Հ. Քոթանջյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Մ. Հ. Թադևոսյանի, Ս. Լ. Զորաբովի*

Լուսանկարչական ապահովումը՝ «Արմենպրես» գործակալության
և ՀՀ ՊՆ լրատվության և քարոզչության վարչության

Հանձնվել է շարվածքի 10.06.1998: Ստորագրվել է տպագրության 06.08.1998: Թուղթը՝ օֆսեթային:
Ֆորմատը՝ 70×108 $^1/_{16}$: Հրատարակչական 7,0 մամուլ: Տպագրական 5,5 + 2 ներդիր:
Պայմանական տպագրական 8,4 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակը՝ «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ: Գինը՝ պայմանագրային:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263:

Տպագրվել է «Ամարաս» տպարանում

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

## МЕЖДУНАРОДНОЕ ВОЕННОЕ СОТРУДНИЧЕСТВО

## INTERNATIONAL MILITARY COOPERATION



ՀՀ ՊՆ և ՌԴ ՊՆ պատվիրակությունների միջև բանակցությունների ժամանակ. պատվիրակությունները ղեկավարում են ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը և ՌԴ Պաշտպանության նախարար ՌԴ մարշալ Ի. Սերգեևը. Երևան, 1998 թ. հուլիս

Во время переговоров делегаций МО РА и МО РФ, возглавляемых Министром обороны РА В. Саркисяном и Министром обороны РФ Маршалом РФ И. Сергеевым. Ереван, июль 1998 г.

At the negotiations between delegations of the MOD of the RA and MOD of the RF headed by Minister of Defense of the RA V. Sargsyan and Minister of Defense of the RF Marshal of the RF I. Sergeyev. Yerevan, July, 1998



ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի հանդիպումը ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Խ. Սոլանայի հետ. Երևան, 1997 թ. փետրվար

Встреча Министра обороны РА В. Саркисяна с Генеральным секретарем НАТО Х. Соланой. Ереван, февраль 1997 г.

Meeting of the Minister of Defense of the RA V. Sargsyan with NATO Secretary General J. Solana. Yerevan, February, 1997



ՌԴ Պաշտպանության նախարար ՌԴ մարշալ Ի. Սերգեևը «Ռազմական համագործակցության ամրապնդման համար» մեդալ է հանձնում ՀՀ Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանին. Երևան, 1998 թ. հուլիս

Вручение Министром обороны РФ Маршалом РФ И. Сергеевым медали «За укрепление военного сотрудничества» Министру обороны РА В. Саркисяну. Ереван, июль 1998 г.

Presenting the Medal «For Strengthening Military Cooperation» by the Minister of Defense of the RF Marshal of the RF I. Sergeev to the Minister of Defense of the RA V. Sargsyan. Yerevan, 1998



Հայաստանի Պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը և Բուլղարիայի Պաշտպանության նախարար Բ. Պավլովը ռազմական համագործակցության մասին համաձայնագրի ստորագրումից հետո. Երևան, 1996 թ. սեպտեմբեր

Министр обороны Армении В. Саркисян и Министр обороны Болгарии Б. Павлов после подписания соглашения о военном сотрудничестве. Ереван, сентябрь 1996 г.

Minister of Defense of Armenia V. Sargsyan and Minister of Defense of Bulgaria B. Pavlov after signing the agreement on military cooperation. Yerevan, September, 1996



Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության պատվիրակության պաշտոնական այցը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն. 1997 թ. օգոստոս

Официальный визит делегации Министерства обороны Республики Армения в Китайскую Народную Республику. Август 1997 г.

Official visit of the delegation of the Ministry of Defense of the Republic of Armenia to the People's Republic of China. August, 1997



Եվրոպայում սովորական սպառազինված ուժերի (ԵՍԶՈՒ) վերաբերյալ պայմանագրի շրջանակներում տեսչական ստուգման համար Հայաստան ժամանած մի խումբ մասնագետներ (Ֆրանսիա). 1996 թ. մարտ

Группа специалистов (Франция), прибывших в Армению для инспекции в рамках договора об Обычных вооруженных силах в Европе (ОВСЕ). Март 1996 г.

Team of the specialists (France) arrived in Armenia to carry out the CFE inspection. March, 1996



ՀՀ ՊՆ պատվիրակության այցը Հունաստանի Հանրապետության ԳՇ պարաշյուտադեսանտային զորքերի կենտրոն. 1998 թ. ապրիլ

Посещение центра парашютно-десантных войск ГШ Греческой Республики делегацией МО РА. Апрель 1998 г.

Visit of the delegation of the MOD RA to the center of Parachute troops of HNDGS. April, 1998




Մակեդոնական և հայկական զինված ուժերի դասակները, որոնք մասնակցում են «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի ոգով անցկացվող «Պրոմեթևս-98» զորավարժություններին. Հունաստան, 1998 թ. մարտ

Взводы македонских и армянских Вооруженных сил, участвующих в учениях «Прометей-98» в духе программы «Партнерство во имя мира». Греция, июнь 1998 г.

The platoons of the Armenian and Macedonian Armed Forces participated at the «Prometheus-98» exercises within the spirit of the «Partnership for Peace» Program. Greece, June, 1998




ՀԱՅԿԱԿԱՆ
ԲԱՆԱԿ
3(17)•1998